Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4247

Пугачевщина
крестьянская в отрывках

3к9
П-50

1 DEC 2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ
ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 6

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Դ. ՊԵՏՐՈՎՍԿԻՅ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄ

(ԹՈՄԱՍ ՄՈՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՈՐԵՐԸ)

Թարգ. ԳՐԻԳ

3K9
П-50

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ № 105
Յերեվան—1924

0 2 JUL 2005

[illegible] ԱՄԻՍ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ
[illegible] ՐԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 6

349
П-50

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Դ. ՊԵՏՐՈՎՍԿԻՅ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄ

(ԹՈՄԱՍ ՄՈՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՈՐԵՐԸ)

Թարգ. ԳՐԻԳԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ № 10.
Յերեվան—1924

22 JUL 2013

4247

(24997-61)
30324-61

Պատվեր № 1624

Դ. ՊԵՏՐՈՎՍԿԻՅ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Անչափ ուրախ եմ իմ գրքի հայերեն թարգմանությամբ հրատարակվելուն։ Հայաստանի աշխատավորությունն ակտիվ կերպով մասնակցում է սոցիալիստական հասարակության շինարարության գործին, վորի գաղափարը փորձել եմ լուսաբանել պատմական այս փոքրիկ աշխատությամբ։

Կ. Պետրովսկիյ

Մոսկվա, 18 սեպտ. 1923 թ.

ՅԵՐԿՈՒ ԴԱՍԱԿԱՐԳ

Մարդկային հասարակության ամբողջ պատմության միջով կարմիր թելի նման ճնշողների ու ճնշվողների պայքարն է անցնում։ Միայն մարդկության արշալույսին, երբ դեռ մարդիկ «վայրանի» էին, մենք հանդիպում ենք նախնական կոմունաներին։ Այդ կոմունաների մեջ մարդիկ հավասար էին, բայց դա հավասարություն էր ստրկության մեջ։ Նախնական կոմունան յերկար կյանք չունեցավ։ Նրա միջից առանձնացան գլխավորները ու հասարակությունը բաժանվեց յերկու խմբակի—այսինքն մարդկանց՝ վորոնք քրտինք թափելով աշխատում էին ու տառապում աղքատության մեջ, և մարդկանց՝ վորոնք տիրություն էին անում՝ ոգտվելով ուրիշների աշխատանքի պտուղներից։ Այդ խմբակների – դասակարգերի միջև յերկար հարյուրամյակներ տևող պայքար է տեղի ունենում։ Հասարակությունը շարունակ զարգանում էր, իսկ դասակարգերի փոխհարաբերությունները ու կյանքի բովանդակությունը միշտ փոխվում էր։ Մի դասակարգը հեռանում էր, վորպեսզի տեղի տա մյուսին։ Բայց դասակարգերը մնում էին ու պայքարը նրանց միջև շարունակվում էր։

Մասսաները հնազանդ պահելու համար ճնշողները ոգտվում էին ուժով ու խորամանկությամբ։ Իշխանությունը նրանք պահպանում էին բերդերի միջոցով՝ ձգտելով մասսաներին վոչ միայն վախ ներշնչել դեպի այդ բերդերը՝ այլ և հարգանք։ Վորքան վոր պայքարը ավելի յեր սրվում, այնքան ճնշողները ավելի մեծ լարվածությամբ էին աշխատում ճնշման գործիքները սրել ու լավացնել։ Պայքարը քանի գնում դժվարանում ու բարդանում էր, սակայն չէր դադարում։

Կար ժամանակ յերբ մի կողմից ստրկատերերն էին կանգնած, իսկ մյուս կողմից ստրուկները։ Դրանք յերկու դասակարգեր էին, տարբեր շահերով։ Ստրուկները մի շահ ունեին—այն է, վորքան կարելի յե ավելի լավ ապրել, իսկ ստրկատերերը մի ուրիշ շահ—այն է, վորքան կարելի յե ավելի շատ քամել ստրուկից։ Թեպետ ստրուկները պարզ չէին պատկերացնում իրենց այն

հասարակարգը վորի համար նրանք կարող էին կռվել ու զուրկ էին վորեվե ծրագրից, այնուամենայնիվ կռվում էին։ Ստրկության պատմության մեջ կան շրջաններ, յերբ ստրուկները հրակայական, իրոր վոր ժողովրդական ապստամբություններ են կատարել։

Փոխվեց կյանքը, սկսվեց մի ուրիշ շրջան։ Թրով զինված ասպետը փոխարինեց ստրկատերին։ Ասպետն այնքան յերկար «պաշտպանեց» ու «հովանավորեց» գյուղացիներին, վոր նրանց էլ ստրուկ դարձրեց սակայն հողին ամրացած ստրուկ։ Ճորտատեր—կալվածատիրոջ ու գյուղացիների փոխհարաբերությունները նման չեն ստրուկի ու ստրկատիրոջ հարաբերություններին։ Գյուղացիները կալվածատիրոջ սեփականությունը չէին կազմում. նրանք կալվածատիրոջը պատկանող հողին էին ամրացված։ Այդպիսով գյուղացիները վոչ թե մենակ իրենք էին պատկանում կալվածատիրոջը, այլ հողի հետ միասին։ Բնական է, վոր կալվածատերը այլ շահ ուներ, իսկ գյուղացին ուրիշ։ Կալվածատերը շահագրգռված եր վորպեսզի գյուղացուց ավելի շատ ստանար, իսկ գյուղացին ձգտում եր իր աշխատանքի պտուղները ինքը վայելի։

Բոլոր յերկրներում խուլ պայքար եր գնում։ Գյուղացիները պայքարի վորոշ ծրագիր չունեցին, սակայն նրանք կատաղի կռիվ էին մղում իրենց շահագործողների դեմ՝ հանուն լավ կյանքի։ Ճնշվողները իրանց հերթին պաշտպանում էին իրենց շահերը և ամեն կերպ ճնշում էին գյուղացիներին։ Մենք պատմությունից ծանոթ ենք մի շարք ապստամբությունների, խռովությունների, գիտենք գյուղացիական շարժումների ամբողջական հորձանքներ։ Գյուղացիական ըմբոստացումներով լի է պատմության այն շրջանը, վորը կոչվում է ճորտատիրական շրջան։ Գյուղացիները ձգտում էին հողի լիակատար տերը դառնալ, նրանք կռվում էին կալվածատերերի իշխանության ու հովանավորության դեմ, կռվում էին հողի և ազատության համար։

Գյուղում ցրված գյուղացիական մասսաները անզոր էին միահամուռ կազմակերպված կերպով պայքարել։ Նրանց դժգոհության արտահայտությունը սպանությունները, ընդոստացումները, հրդեհումներն ու ապստամբություններն էին։ Յերբեմն այդ ապստամբությունները հսկայական չափերի էին հասնում։ Դնեպրի ոտանքաքարերը ու Վոլգայի ափերին փռված ժիգուլյան

լեռներն ու անտառները լի են գյուղացիների ազատության համար տարված պայքարին վերաբերող առասպելներով։ Սակայն գյուղացիների թշնամիները, վորոնք ուժեղ էին իրենց կազմակերպությամբ, հենվելով զորքի, վոստիկանության ու ճնշման ամբողջ ապարատի վրա՝ հրի ու սրի էին ժամանում ապստամբներին՝ սպանելով նրանց հարյուրներով ու հազարներով, և այրելով նրանց գյուղերը։ Գյուղացիներն ընկնում էին՝ ազնվաբար կռվելով լավագույն կյանքի համար։ Վերջապես, յերրորդ շրջանը կոչվում է կապիտալիստական, վորովհետև նրա հիմքը կապիտալի իշխանությունն է կազմում։

Կապիտալիստական կարգերում կարծես թե բոլոր մարդիկ հավասարապես ազատ են։

Յեթե մենք դիմելու լինենք Ֆրանսիայի հին բուրժուական հանրապետության պատմությանն ու նրա առաջին հիմնական որենքին, վորը հայտնի է «մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի» անվան տակ, ապա այնտեղ կկարդանք, վոր բոլոր մարդիկ հավասար են ծնվել, վոր բոլոր մարդիկ հավասար իրավունքներ ունին կյանքի բարիքներից ոգտվելու։ Այնտեղ շռայլված են «ազատություն, հավասարություն ու յեղբայրություն» հպարտ խոսքերը։

1776 թվին գրված ամերիկական անկախության դեկլարացիայի մեջ այդ միտքը ցայտուն կերպով և արտահայտված։ Այնտեղ ասված է՝ բոլոր մարդիկ ունին կյանքի ազատության ու բախտավորության հավասար իրավունք։ Արանից էլ ավելի լավ բան։ Բայց դա այդպես միայն գրվում է, կյանքի մեջ այլ կերպ է լինում։

Կապիտալիզմի ժամանակ բոլոր մարդիկ կարծես թե իրոք հավասար են։ Կապիտալիստը բանվորին ծախել չի կարող, կալվածատերը գյուղացուն հողին ամրացնել չի կարող—ստրկությունն էլ, ճորտությունն էլ վերացված են։ Սակայն չկա տնտեսական հավասարություն։ Առաջ է յեկել նոր ստրկություն՝ աշխատավարձի ստրկությունը։

Գոյության կռիվը՝ կռիվը հզոր բնության դեմ, մարդկանց ստիպեց գործիքներ հնարել։ Յերբ մարդը վորսի յեր գնում, նրան արջին կամ գայլին սպանելու համար նետ ու աղեղ էին հարկավոր։ Յերբ նա ձուկ բռնելու յեր գնում, նրան կաթ եր հարկավոր։ Յերբ մարդիկ սկսեցին հողագործությամբ պարապել, նրանց՝ ցանելու, վարելու և հնձելու համար գործիքներ էին

հարկավոր։ Մարդկությունն իր գոյության սկզբից իսկ պետք է դիմեր արտադրության գործիքներին։ Քանի գնում՝ այնքան արտադրության գործիքները մարդկանց կյանքի համար ավելի մեծ նշանակություն էին ստանում։ Յերբ մարդը հնարեց շղթին ու շարժման մեջ դրեց գնացքներն ու շոգենավերը, նա անհամեմատ ավելի ուժեղացավ, նա գտավ բնության գաղտնիքները և ստիպեց բնությանը ծառայել հասարակության։

Հասարակությունը միշտ ու ամեն տեղ բաժանված է յեղել յերկու դասակարգերի—տիրողների ու ճնշվողների։ Ուրեմն հասարակության զարգացման հետ միասին աճում էին ճնշողների հարստությունները։ Նրանք ավելի հարուստ, ուժեղ ու ամուր դարձան։ Գործիքները վիթխարի հսկաներ դարձան, վորոնց հետ համեմատած նրանց վրա աշխատող մարդիկ վոչնչություն էին թվում։ Այդ գործիքների տերերը հզոր իշխանավորներ դարձան։

Իսկ ո՞ւմ էին պատկանում այդ հսկա գործիքները։ Այդ հարցին շատ հեշտ է պատասխանել։ Գործիքները պատկանում են այն դասակարգին, վորը տիրող և հանդիսանում։ Իհարկե՝ ամբողջ դասակարգին չէ վոր պատկանում են գործիքները, այլ մասնավոր առանձին մարդկանց ու խմբակներին։ Այդ մասնավոր մարդիկ ու խմբակներն ամբողջությամբ տիրող դասակարգն են կազմում։ Նրանցից մեկին ֆաբրիկան է պատկանում, մյուսին,—գործարանը, յերրորդին—սերմնացան մեքենան, չորրորդին—շոգեկառքը, իսկ նրանք բոլորը միասին տեր են բոլոր արտադրության գործիքներին։ Արտադրության գործիքների տերերը հասկացան միության ուժն ու նշանակությունը և իվերջո սկսեցին հզոր միություններ կազմակերպել։

Կապիտալիզմի ժամանակ մարդը առանց **արտադրության գործիքների վոչինչ է։** Այն ժամանակ, յերբ մարդը կարող էր իր խրճիթում նստած իր իսկ ձեռքերով իրեն համար հագուստ ու սնունդ պատրաստել, այդ ժամանակը վաղուց է անցել։ Մեքենաներն այդ աշխատանքը հարյուր անգամ ավելի արագ կատարում։ Մեքենա չունեցող մարդը վոչինչ ստեղծել չի կարող. նա կամ սովից պետք է մեռնի, կամ պետք է ֆիզիկական ուժը ծախի գործիքների տերերին ու դրա համար ստանա վորոշ վարձ։ Ազատությունը, վորի մասին այդքան գեղեցիկ ճառում են կապիտալի պաշտպանները, հանդում է նոր ձևի սարկության—աշխատավարձի սարկության։

Ստրուկին մտրակով էին քշում աշխատանքի, ճորտին

թրի ոգնությամբ էին ստիպում աշխատել, իսկ ազատ կապիտալիստական իրավակարգը ազատ բանվորին գործի յեք քաշում սովի միջոցով։ Կապիտալիստական հասարակության մեջ կովում են, մի կողմից գյուղի ու քաղաքի բանվորները, վորոնք զուրկ են գործիքներից, իսկ մյուս կողմից կապիտալիստներն ու կալվածատերերը, վորոնք տեր են և՛ հողին և արտադրության բոլոր գործիքներին։

Ստրուկը կռվում էր ստրկության դեմ, ճորտը, գյուղացին—հարստության, իսկ բանվորը կապիտալի իշխանության դեմ։ Սակայն ուզում է արդյոք բանվորը վոչնչացնել արտադրության գործիքները։ Վո՛չ։ Բանվորը շատ լավ հասկանում է, վոր մեքենայի միջոցով նա ավելի մեծ արդյունքներ կստանա, քան իր տասը մատի միջոցով։ Ցավն ուրիշ բանի մեջ է. ցավը նրանումն է, վոր այդ արտադրության գործիքները պատկանում են վոչ թե նրանց, ովքեր աշխատում են այդ գործիքների վրա, այլ միացյալ կապիտալիստների փոքրիկ խմբակին։

Ուրեմն, բանվորների դասակարգային պայքարի իմաստը կայանում է նրա մեջ, վորպեսզի արտադրության բոլոր գործիքները, վորոնք ստեղծվել են բանվորների և վոչ թե կապիտալիստների աշխատանքով, վորոնց տեր են կապիտալիստները—ահա այդ բոլոր արտադրական գործիքները պատկանեն **ամբողջ** հասարակության։

Սոցիալիզմի գաղափարը ծնվել է աշխատանքի ու կապիտալի մարտադաշտում։ Նրա նպատակն է վերջ տալ դասակարգային կռվին ու հավասարության հիմունքներով միացնել ամբողջ մարդկությունը։ Սակայն վոչ այն հավասարության, վոր թղթի վրա յ՝ գրված, այլ մարդկանց իրական հավասարության հիման վրա։ Սոցիալիզմը ուսմունք է այն հասարակակարգի մասին, վորը վոչնչացնելով արտադրության գործիքների մասնավոր սեփականությունը, վերացնում է շահագործման, անհավասարության ու ճնշման ամեն մի հնարավորություն։ Այն ժամին, յերբ մարդկությունը իրոք կիրագործի սոցիալիզմը, նա կվոչնչացնի իր հին պատմությունը, յերբ մարդիկ բաժանված էին դասակարգերի՝ ճնշողների և ճնշվողների։

Սոցիալիզմը հետ չի նայում դեպի նախնական կոմունան, դեպի այն հավասարությունը, վոր կար ստրկության մեջ։ Նա նայում է առաջ—դեպի այն հավասարությունը, վոր պիտի լինի բանվորության մեջ։ Միլիոնավոր մարդկանց տանջանք-

ներն ու աշխատանքը յերկար դարերի ընթացքում մարդուն զի-
նեցին խելքով, դիտելիքներով, տեխնիկայով, վորպեսզի ճիշտ
կազմակերպված հասարակության մեջ բոլոր մարդիկ կարողա-
նային ապրել, աշխատել ու ոգտվել իրենց աշխատանքի կարիք-
ներով։

Նոր հասարակության կազմակերպումը, իրական յեղբայ-
րության հիմունքներով, աշխատանքի և բախտավորության մեջ
— ահա դա յե սոցիալիզմի նպատակը։

Ճիշտ է, կապիտալիստներն ել իրենց պատանեկության ժա-
մանակ (Ֆրանսիական հեղափոխության ժամանակ) նույնպես հայ-
տարարում եյին աշխարհովը մեկ, թե իրանք կռվում են ամբողջ
մարդկության ազատագրության համար, նրանք ել եր ժամանակին
մարդկության պատմության մեջ հեղափոխական դեր խաղացին,
սակայն, անհավասարությունը վերացնել — նրանք չկարողա-
ցան։ Նրանք դասակարգային պայքարի ձևը փոխեցին միայն։
Մի դասակարգի տեղ նրանք կանգնեցրին մեկ ուրիշը. ծույլ ու
անպետքացած կալվածատիրոջ տեղ նրանք կենդանի ու ճարպիկ
կապիտալիստին դրին։

Այդ ճարպիկ կապիտալիստը միայն իր պատանեկության
տարիներումն եր դեպի առաջ նայում։

Իշխանությունն իր ձեռքն առնելով՝ նա սկսեց զբաղվել իշ-
խանության ամրացումով։ Դուշակելով վոր բանվորն իր թշնա-
մին է, կապիտալիստն սկսեց կռվել նրա դեմ։ Տարեց-տարի նա
դիրանում եր, պառավում ու իր ուղեղով ամբողջապես նվիրվում
ճնշման գործիքների ուժեղացման գործին, — ուժեղացնում է վոս-
տիկանական ու ռազմական ապարատները։ Տնտեսությունը կա-
ռավարելու ամբողջ գործը նա հանձնարարում է իր ծառաներին,
իր հավատարիմ գործակատարներին, վորոնք հնարավորություն
են տալիս նրան ոգտվել հարստություններից՝ անգործության
մեջ ապրելով։

Միակ դասակարգը, վորը կռվում է ու կարող է կռվել ա-
մեն տեսակ սարկության դեմ, այլ վոչ թե ճնշման ձևի փոփոխ-
ման համար, դա բանվոր դասակարգն է։ Նրա կյանքի պայման-
ները, նրա կենսական շահերը թելադրում են նրան կռվել սո-
ցիալիզմի համար։

Կապիտալիստի համար ճորտատիրական կարգերը նեղ եյին,
նրա համար բոլոր ճանապարհները փակված եյին — նա կռվում
եր ճորտատիրության դեմ. նրան այնպիսի մի հասարակարգ եր

հարկավոր, ուր նա ազատ կարող եր շահագործել բանվորին։ Կա-
պիտալիստն այդպիսի իրավակարգ ստեղծեց։ Սակայն այլ դրու-
թյան մեջ է բանվորը. նա վոչ վոքի չի շահագործում, նա վոչ
միայն չի ոգտվում ուրիշի աշխատանքից, այլ իր աշխատանքով
հարստություն է ստեղծում ուրիշների համար։ Հակառակ կա-
պիտալիստի, բանվորը շահագրգռված է վոչ թե ճնշման նոր ձևի
ստեղծելու մեջ, այլ մարդուն մարդու կողմից ճնշելու հնարավո-
րությունը միանգամայն վոչնչացնելու մեջ։

Բուրժուազիայի պայքարի ամենապայծառ եջը ընդդեմ
ճորտատիրության, անկասկած, Ֆրանսիական մեծ հեղափոխու-
թյանն է հանդիսանում, վորը սկսվեց 1789 թ.։ Այն ժամանակ
բուրժուազիան դեռ յերիտասարդ եր, նրա առաջ չեր կանգնած
պրոլետարական հեղափոխության կարմիր վտանգը։ Նա միայն
մի ձգտում ուներ — հարստանալ, ու հարստանում եր։ Բուրժուա-
կան քաղաքը այն ժամանակ հայտարարում եր կալվածատերե-
րին ու տերտերներին. «Մենք վոչինչ եյինք, իսկ այժմ կդառ-
նանք ամեն ինչ»։ Քաղաքներում այն ժամանակ բանվորները ել
կային, սակայն նրանք իրենց և հեղափոխականորեն տրամադրը-
ված բուրժուազիայի միջև յեղած տարբերությունը չեյին նկա-
տում։ Բանվորներին թվում եր, յեթե վոչնչանա պարտատիրա-
կան իրավունքն ու հայտարարվի ազատություն, հավասարու-
թյուն ու յեղբայրություն, ապա բոլորի համար լավ կլինի։
Բանվորները բուրժուազիայի հետ միասին մի դրոշակի տակ
եյին գնում։ Փարիզում թագավորական մի բերդ կար Բաստիլիա
անունով. բանվորները գրոհ տվին և գրավեցին այդ բերդը
(1789 թվի հուլիսի 14-ին)։ Բանվորները մասնակցում եյին բոլոր
ցույցերին ու գնում եյին բուրժուազիայի հետ ձեռք ձեռքի տված՝
հանուն ազատության, հավասարության և յեղբայրության։

Այդ հեղափոխության ժամանակ Փարիզի քարտաշները
գործադուլ հայտարարեցին։ Թվում եր թե ազատության, հավա-
սարության և յեղբայրության պայմաններում դրանից ել ավելի
արդարական բան չեր կարող լինել։ Բայց հպարտ բուրժուազիան,
վորը ամեն տեղ ազատության, հավասարության ու յեղբայրու-
թյան մասին եր յերգում, վախեցավ։ Բանվորների պայքարի
մեջ նրանք զգացին անավոր նախազգուշացումը։ Թեպետ նրանք
թագավորի ու կալվածատերերի դեմ պայքարելով եյին զբաղ-
ված, այնուամենայնիվ շտապով մի որենք հրատարակեցին մի-
ությունների դեմ։ (Բանվորական միությունների ազատության

դեմ կապիտալիստները շատ ճարպիկ կերպով դրին հարցը։ Նրանք ասացին. «Առաջ գոյություն ունեցին համքյարություններ, բանվորների ներփակ խմբակներ, որոնք վոչ վոքի չեյին թողնում իրենց մոտ։ Այդ համքյարությունները վատ ու ծույլ եյին աշխատում։ Մենք վախենում ենք բանվորական միություններից, որովհետև նրանք կարող են ներփակ կազմակերպությունների՝ համքյարությունների վերածվել և այն ժամանակ խոչընդոտ կհանդիսանան արտադրության զարգացման»։

Այդպես միայն ասվում եր, փաստորեն նրանք վախենում եյին գործադուլներից ու բանվորական միություններից, որովհետև զգում եյին, որ բանվորներն այդ միությունների միջոցով կարող են տապալել կապիտալիստների իշխանությունը։

Ցերիտասարդ բուրժուազիան ցույց տվեց, որ բանվորների հետ կռվելիս նա պիտի ույժը միացնի խորամանկության։ Գործադուլավորներին նա բանտ եր նստեցնում, այնպես ձևացնելով՝ իբր թե հետադարձ շարժումից է վախենում։ Փաստորեն նա առաջ շարժվելուց եր վախենում։

Բուրժուազիան դեռ յերկար տարիներ ամեն կերպ հակառակվում եր բանվորական միությունների աղատությանը։ Պարզ է, որ ճորտատերերի լծի դեմ կռվող բուրժուազիան ինքը շահագրգռված եր բանվորներին ճնշելու մեջ և այդ պատճառով ժամանակին միջոցներ ձեռք առավ բանվորական միությունների աղատության դեմ։

Ահա մի ուրիշ որինակ նույն ֆրանսիական հեղափոխության պատմությունից։ Ֆրանսիացի առաջավոր բանվորների մեջ կասկած առաջացավ. ընդունակ է արդյոք հեղափոխությունը կատարելապես աղատագրել իրենց։ Բանվորներն սկսեցին խորհել, թե դա յե արդյոք իսկապես այն վերջին կռիվը, որը բախտավորություն պիտի տա ամբողջ մարդկության։ Յեվ որքան շատ եյին մտածում նրանք, այնքան ավելի եյին համոզվում, որ իրենց վերջին կռիվը դեռ առաջիկայումն է։ Այն ժամանակ, 130 տարի սրանից առաջ, նրանք կազմակերպեցին «հավասարների միություն» Բաբյոֆի ղեկավարությամբ։ Թվում է, թե հավասարության համար կատարվող հեղափոխության ժամանակ «հավասարների միությունը» հեղափոխության որինակ ան զավակը պետք է համարվեր։ Միությունը մի թռուցիկ հրատարակեց, որի մեջ ասված է՝ «մենք հավասարություն ենք ուզում վոչ թե ցուցանակների վրա, այլ մեր խրճիթների կտուրների տակ»—այսինքն տնտեսական հավասարություն։ Բայց բուրժուազիային այդ միտքն ել դուր չեկավ։ Բաբյոֆին ու նրա բոլոր բարեկամներին հավասարության ձգտելու համար կախեցին հենց այն բուրժուաները, որոնք ամենտեղ հավասարության մասին խոսելով եյին զբաղված։

Այդպիսով ուրեմն, դեռ այն ժամանակ, յերբ բուրժուազիան ամենաուժեղ դասակարգն եր հանդիսանում, բանվորների մեջ միտք է հղանում, որ բուրժուական հավասարությունը խաբեբայություն է ու հենց դեռ այն ժամանակ կռիվ սկսվեց սոցիալիզմի համար։

Սակայն միտքը, ինչպես և մարդը, միանգամից հասունացած և ուժեղացած աշխարհ չի գալիս. նա կամաց կամաց և զարգանում։ Ծննդյան րոպեին նա նորածին մանկան պես թույլ ու նվազ է։ Աստիճանաբար նա ավելի ուժեղ է դառնում՝ հասունացող ու զարգացող պայմանների հետ, որոնք նրան առաջացրել են ու սնում են։

Հասունանում ու զարգանում եր կապիտալիզմը—հասունանում ու զարգանում եր բանվոր դասակարգը—հասունանում ու զարգանում եր սոցիալիզմի գաղափարը։

Վերջապես, ֆրանսիական հեղափոխությունից 60 տարի հետո սոցիալիզմը հանձինս «Կոմունիստների միության», որի գլուխը կանգնած եյին Կարլ Մարքսն ու Ֆրիդրիխ Ենգելսը, հանդես է գալիս պարզ սոցիալիզմի ամփոփ ու պատճառաբանված ծրագրով։ Այդ ծրագիրը ձևակերպված է «Կոմունիստական Մանիֆեստ» կոչվող գրքույկի մեջ, որին Յեվրոպայի բանվորները արդարացի կերպով «աշխատավոր մարդկության բիբլիա» անվանեցին։

«Մանիֆեստի» ծրագիրը կայանում է բանվոր դասակարգի կողմից քաղաքական իշխանությունը գրավելու մեջ՝ այն նպատակով, որպեսզի վերացվի արտադրության գործիքների մասնավոր սեփականությունը և այդ արտադրական գործիքներն անցնեն ամբողջ ժողովրդի ձեռքը։

Արտադրության գործիքների համայնացումը պրոլետարիատի տիրապետության միջոցով—այդպես է ընդհանուր գծերով «Կոմունիստական Մանիֆեստի» ծրագիրը։ Սակայն, «Կոմունիստական Մանիֆեստը» չբավականացավ բանվորների պահանջների պարզ ձևակերպումով։ «Մանիֆեստի գլխավոր արժանիքը նրանում է, որ նա ցույց տվեց, թե այդ ծրագրի իրագործման

համար անհրաժեշտ նյութական պայմանները և թե այն մարդկանց, վորոնք այդ ծրագիրը կիրագործեն կյանքի մեջ։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՅԵՎ ԹՈՄԱՍ ՄՈՐԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Անհավասարությունից ծագեց կռիվը հավասարության համար, իսկ բազմամիլիոն բանվորների շահագործումը ֆաբրիկաների ու գործարանների հակա-տերերի կողմից՝ առաջացրեց կռիվ սոցիալիզմի համար։ Դասակարգային պայքարի պատմությունը «Կոմունիստական մանիֆեստի» մեջ հետեվյալ խոսքերով է նկարագրված։

«Ամեն մի հասարակության պատմությունն մինչև այժմ դասակարգային պայքարի պատմությունն է յեղել՝ ազատներ և ստրուկներ, կալվածատերեր և ճորտեր, վարպետներ և քյարգահներ—մի խոսքով ճնշողներն ու ճնշվողները մշտական թշնամություն եյին տածում դեպի իրար և իրար դեմ անընդհատ—կամ բացարձակ, կամ գաղտնի կռիվ եյին մղում։ Կռիվը միշտ վերջանում եր կամ հասարակական կարգերի արմատական փոփոխությամբ, կամ ել կռվող դասակարգերի խորտակումով»։ (Հռոմեական պետությունը, վորը հիմնված եր ստրկության վրա, չկարողացավ հաղթահարել իրեն քրքրող ներքին հակասությունները ու խորտակվեց)։

Բուրժուազիայի կռիվը ընդդեմ կալվածատերերի՝ վերջացավ կապիտալի իշխանության հաստատումով։ Կապիտալի իշխանության տակ սկսվեց բանվոր դասակարգի պայքարն իր ազատագրության համար։

Վերցնենք Անգլիան, վորը կապիտալիզմի օրինակելի յերկիր է համարվում։ Փորձենք նկարագրել հին գյուղացիական տնտեսության պատկերը Անգլիայում։

Գյուղացիներն ապրում եյին մեծ ընտանիքներով։ Նրանք պարտավորված եյին մեծ տուրքեր տալ կալվածատերերին և դրա շնորհիվ, փաստորեն ամբացված եյին հողին։ Յուրաքանչյուր գյուղացիական ընտանիք պատրաստում եր այն ամենը, ինչ վոր նրան հարկավոր եր։ Գյուղացին և հողագործ եր, և խաշնարած, և կոշկակար և կառուցող։ Այն ամենը, ինչ վոր հարկավոր եր գյուղացիական ընտանիքին, պատրաստում եյին ընտանիքի անդամները։ Վոչ ապրանք կար, վոչ առևտուր, վոչ ել

վաճառք։ Դա մի տնտեսություն եր, վոր մենք բնական կամ նատյուրալ ենք անվանում։

Իսկ ինչ վերաբերում է կալվածատերերին, ապա այն ամենը, ինչ վոր նրանց հարկավոր եր, նրանք ել պատրաստում եյին իրենց տան ճորտերի միջոցով։

Աստիճանաբար այդ ճորտերը կատարելագործվեցին, իսկ նրանցից շատերը մասնագետ—արհեստավորներ դարձան։ Մի տուն իր ապրանքների ավելցուկը ծախում եր մյուսին։ Ու տների միջով առաջացավ փոխանակությունը և աշխարհ յեկավ առևտրականը։ Այն տնտեսությունները, վորոնց մեջ տնային ճորտերն եյին աշխատում, մեր քաղաքների սկիզբն եյին։ Տնտեսությունները մեծանում եյին, նրանց թիվն ավելանում եր։ Այդ ժամանակ նրանք սկսեցին իրեր պատրաստել վոչ միայն կալվածատիրոջ համար, այլ և ուրիշների։ Ավազակներից պաշտպանվելու համար կալվածատերն իր տնտեսությունը պատերով եր շրջապատում, բերդեր եր շինում։ Ահա այդ տնտեսություններն են, վոր ժամանակի ընթացքում հսկա քաղաքներ դարձան, վորոնցով այժմս ծածկված է ամբողջ աշխարհը։

Այն ժամանակ առաջին կապիտալիստը վոչ ֆաբրիկանտն եր, վոչ գործարանատերը, վոչ ել նավային կամ ուրիշ ընկերության տերը։ Առաջին կապիտալիստը առևտրականն եր, վորը ավելցուկները մի տեղ գնում եր, իսկ մյուս տեղում—կարիքը հեղած տեղում—ծախում։ Այդ պատճառով առաջին կապիտալը առևտրական կապիտալ եր կոչվում։ Առևտրականը նրանով եր զբաղված, վոր մի տեղում իրերն առնում եր, իսկ մյուս տեղում ավելի թանկ ծախում։

Այն ժամանակ—չորս հարյուր տարի սրանից առաջ—քաղաքները սկսեցին մեծանալ և, վոր գլխավորն է, ուժեղ կերպով սկսեց զարգանալ նավագնացությունը։ Բացված եր ճանապարհը դեպի Հնդկաստան, գտնված եր Ամերիկան։ Առաջացան յրկրներ, վորտեղ կարելի յեր ապրանք ծախել։ Այդ ապրանքները պետք է ճարվեյին, պատրաստվեյին. ամենագլխավոր ապրանքը ստրուկներն եյին։

Ամերիկան սեվամորթներ վորսալու ոգտավետ տեղ դարձավ։ Սեվամորթներին բռնում եյին, ստրուկ եյին դարձնում, ու մաս մաս տանում եյին ովկիանոսի այն կողմը։ Սակայն միշտ միևնույն ապրանքը ծախել չեր կարելի։ Բուրժուազիան իր վերջալույսի օրերին խելակորույս կերպով սկսեց շուկաներ փնտրել,

(54997-ա / 30359-ա)
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում СССР
Հ. Ս. Մաշտոցի անվան

իսկ 500 տարի սրանից առաջ հակառակն էր. կային շուկաներ, չկային ապրանքներ։

Սկսվեց տենդագին աշխատանք։ Ապրանքների արտադրության համար առաջին հերթին ազատ բանվորներ էին հարկավոր։ Ազատ յերկու իմաստով՝ 1) ազատ կալվածատերից, վորը գյուղացիներին հողին ամրացրած է պահում և 2) ազատ հողից ու ամեն տեսակ արտադրական գործիքներից։ Դա անհրաժեշտ էր այն պատճառով, վոր հող ունեցող գյուղացին չէր գնալ կապիտալիստի մոտ աշխատելու։ Առեվտրականին մի հարվածով հարկավոր էր յերկու նպաստակ սպանել. խլել կալվածատերից գյուղացուն, իսկ գյուղացուց խլել հողը։

Միայն այդպես կարողացավ կապիտալիստը բանվորական բանակ ստանալ, վորը նրա համար հարստություններ սկսեց ստեղծել։ Հարյուրավոր, հազարավոր գյուղացիներին հողից քշեցին։ Հարուստ հողատերերին վարելահողերը հարկավոր էին վոչխարների համար արոտատեղիներ դարձնել։ Վոչխարների և գյուղացիների միջև կռիվ սկսվեց։ Վոչխարների հետևի աշխարհի ուժերն էին կանգնած։ Կռիվը վերջացավ նրանով, վոր անգլիական բուրժուաները գյուղացիներին հողից քշեցին և սկսեցին զբաղվել բրդի արտադրությամբ, վորը սկսեցին ծախել նոր շուկաներում։ Այս շրջանը պետք է հիշել։ Հենց բուրժուաները աշխարհ յեկան՝ նրանք իսկույն իրենց ճանկերը ցույց տվին։ «Վոչխարներն սկսեցին ուտել մարդկանց»—ինչպես արդարացի կերպով նկատեց Թոմաս Մորը։

Իսկ գյուղացիների դրությունն ինչ դարձավ։ Նրանք զրկվեցին հողից, գոյության բոլոր միջոցներից ու բնական և, բաշվեցին դեպի քաղաքները։ Արդյունաբերությունն այն ժամանակ դեռ նոր էր ծագում առել, գյուղացիներից շատերը քաղաք յեկան, բայց՝ այնտեղ աշխատանք չէին գտնում։ Սկսվեց Անգլիայի բանվորների պատմության ամենա--սոսկալի ու ծանր ժամանակաշրջանը։ Մի հարվածով նրանց գյուղից քաղաք քշեցին։ Քաղաքում նրանք փաստորեն սովամահության էին դատապարտված։ Նրանց վիճակը շրջմոլիկությունն ու գողությունն էր։ Կառավարությունն սկսեց կռվել այդ շրջմոլիկների ու գողերի դեմ. նրանց դեմ հատուկ որենք հրատարակվեց։

Այդ որենքը պետք է իմանալ։ Պետք է հիշել թե ինչպես էին տանջում ու ծեծում առաջին կապիտալիստները առաջին պրոլետարիատին։ Այդ որենքն ասում է. «Առողջ շրջմոլիկները

յենթակա յեն ծեծի ու բանտարկության։ Նրանց պետք է սայլակին կապել և ծեծել մինչև մարմնից արյուն դուրս գալը։ Այն ժամանակ նրանք պետք է յերդվեն վերադառնալ հայրենիք կամ այնտեղ, ուր վերջին յերեք տարին էին ապրում ու կպչել աշխատանքի»։ Բայց նրանք աշխատանքի չէին կարող կպչել, վորովհետև նրանց հողը գրավված էր։ Յեթե գործազուրկը յերկրորդ անգամն էր նրանց ձեռքն ընկնում, ապա նրան նորից էին ծեծում ու դեռ մի ականջն էլ կտրում էին։ Յերրորդ անգամ նա յենթակա յեր մահվան պատժի։ Հենրիխ VIII-ի թագավորության ժամանակ շրջմոլիկության համար 27.000 մարդ կախեցին։ Կարլ Մարքսն այդ ժամանակի մասին ասում է. «Մեր այժմյան բանվոր դասակարգի հայրերին պատժի էին յենթարկում այն պատճառով, վոր նրանց շրջմոլիկ ու աղքատ էին դարձրել։ Որենսդրությունը նրանց կամավոր հանցագործ էր համարում։

Հետաքրքիր է պատկերացնել այն սարսափը, վորի մեջ ապրում էին մասսաները, յերբ նրանք առաջին անգամ զգացին կապիտալ անուն կրող նոր արյունարբու կենդանու ճանկերը։ Այդ ժամանակ շատերի գլխում միտք է հղանում՝ վորեվե յելք գտնել այդ դրությունից դուրս գալու։ Վոմանք հուսահատության մեջ էին ընկնում, վոմանք մխիթարվում էին նրանով, վոր առաքինությունը կհաղթանակի, վոմանք էլ սկսեցին հասարակական կյանքի այնպիսի նոր ձևերի մասին մտածել, վորտեղ սոսկալի անարդարությունը տեղ չի ունենալ։

Այն ժամանակ նոր կյանքի ծրագրեր կազմող բոլոր մարդկանցից պետք է առանձնացնել մի մարդու, վորի անունն է Թոմաս Մոր։ Նա բանվոր չէր—նա ազնվականի վորդի յեր։ Թոմաս Մորի աչքերի առաջ բացվող սոսկալի պատկերները ստիպեցին նրան մտածել ու միջոցներ վորոնել աշխարհի ամբողջ չարիքը վերացնելու համար։

Նա մի գիրք գրեց «Վոսկի զրքույկ լավագույն պետական կարգերի ու նոր Ուտոպիա կղզի մասին» անվան տակ (Ուտոպիա խոսքը բաղկացած է հունական յերկու խոսքից. «Ուտ» կնշանակե գոյություն չունեցող, իսկ «տոպոս» կնշանակե տեղ, ուրեմն գոյություն չունեցող տեղ (յերկիր) կամ այլ կերպ՝ ֆանտազիա)։ Այդ գրքին արժե ծանոթանալ։

Բայց առաջ մի քանի խոսք ասենք յերիտասարդ կապիտալիզմի զարգացման ընթացքի մասին։ Առաջին կապիտալիստը, ինչպես ասված էր, վաճառականն էր, առաջին կապիտալը առեվ-

տրական կապիտալն էր։ «Հանձինս վաճառականների, ասում է Ենգելսը, մենք առաջին անգամ հանդիպում ենք այն դասակարգին, որը ոչ մի մասնակցություն չունենալով արտադրության մեջ՝ հաստատում է իր իշխանությունը այդ արտադրության վրա ու տնտեսապես արտադրողներին յենթարկում է իրեն։ Նա անխուսափելի միջնորդ է դառնում յերկու արտադրողների միջև և քամում է նրանց հյութը»։ Առևտրականն ազատ արտադրողներ էր փնտրում։ Նա կարողացավ ազատել տալ գյուղացիներին ճորտատիրական իրավունքից ու քշել հողերից։ Այս ամբողջ բանակը կապիտալը չէր կարող կերակրել։ Մեծագույն մասը գործազուրկների բանակ դարձավ, որը շրջմոլիկությամբ էր զբաղվում ու դրա շնորհիվ ընկավ արյունալի որենքների հալածանքի տակ։ Մյուսները սկսեցին աշխատել կապիտալի համար։

Սկզբում առևտրականն արհեստանոցներ չուներ, աշխատանքը տանն էր կատարում։ Տերը բանվորներին տալիս էր բոլոր անհրաժեշտ նյութերը՝ թելը, բուրդը, գործվածքը, իսկ բանվորները պատվերները հենց տանն էին կատարում։ Կապիտալը սահմանափակվում էր այդ տնային արդյունաբերությամբ։ Արդյունաբերությունը քանի գնում զարգանում էր։ Տերը սկսեց արհեստանոցների մեջ բանվորների մեծ խմբեր հավաքել։ Թեպետ բանվորները հասարակ գործիքներով էին աշխատում, բայց արհեստանոցում նրանք ավելի լավ հետևանքների էին հասնում՝ շնորհիվ աշխատանքի բաժանման։ Յերբ յուրաքանչյուրն աշխատանքի միայն մի մասն է կատարում բնական է, որ նա ավելի լավ ու ճարպիկ կերպով է աշխատում։ Աշխատանքն արհեստանոցներում, որտեղ տերն ոգտվում էր աշխատանքի բաժանման բարիքներով, հետ գցեց տնային արդյունաբերությունը։ Արդյունաբերությունը խոշոր արհեստանոցներում — կամ մանուֆակտուրային արդյունաբերությունը — հանդիսանում է կամուրջ դեպի այժմյան — ֆաբրիկայի և գործարանային արդյունաբերությունը։ Կապիտալիզմն իր ճանապարհն սկսեց գյուղացիներին քայքայելուց, նրանց շպրտեց փողոց ու աշխատավարձի ստրուկ դարձրեց։ Քայքայված գյուղացիների ու արհեստավորների սովածության վրա կապիտալիստները կառուցին իրենց ֆաբրիկաները և գործարանները։ Դա պետք է իմանալ և հիշել։ Այժմ մենք գործ ունենք բուրժուազիայի հետ, որը հանդգնություն ունի իր ծագման շրջանը «հումանիզմի» (մարդկայնության) դար անվանել։ Գյուղացիներին հողից ու արտադրական գործիքներից զրկելու դարը նրանց քաղաք բշելու ու քաղաքում աշխատանքի ապարդյուն վորոնումներ անելու դարը, սովածներին ծեծի դատապարտելու դարը, վոչնչացման, ստրկացման, Ամերիկիկայի վոսկե ու արծաթե հանքերում ազդարարակչությունը կենդանի թաղելու դարը Աֆրիկան՝ մարդկանց վայրենի վորսի տեղ դարձնելու դարը — ահա այդ դարը բուրժուազիան «հումանիզմի դար» է անվանում և շանթ ու կայծակ է թափում բանվորների գլխին, որոնք կռվում են իրենց ազատագրության համար։

Դիմենք այժմ Թոմաս Մորի «գրքույկին»։ Նա գրված է յերեք հարյուր տարի սրանից առաջ, յերբ բանվոր դասակարգը թույլ ու անզոր էր։ Թոմաս Մորը պատմում է, որ նա գնաց Անտվերպեն քաղաքը, ուր ծանոթացավ, Ռաֆայել Հեթլեյ անունով մի նավաստիի հետ։ Ամբողջ գիրքը այնպես է գրված, կարծես թե Մորը Ռաֆայելի մոտ նստած է և նա նրան պատմում է մի առասպելական յերկրի մասին, որտեղ մարդիկ բոլորովին այլ կերպ են ապրում։

Այդ զրույցի մեջ առանձնապես գրավիչ է այն տեղը, որտեղ Ռաֆայելը լարված ու կրքոտ կերպով խարազանում է այժմյան կարգերի սարսափը։ «Յես պետք է ասեմ, ասում է Ռաֆայելը, — քանի վոր գոյություն ունի մասնավոր սեփականությունը, քանի վոր դրամն ամեն ինչ է, այնքան ժամանակ և վոչ մի հասարակություն չի կարող իր ժողովուրդի վոչ արդարությունը, վոչ էլ բախտավորությունն ապահովել։

Նա չի կարող տալ բախտավորություն, վորովհետև ամենալավը բաժին է ընկնում ժողովրդի ամենավատ մասին։ Նա չի կարող տալ բախտավորություն, վորովհետև քչերի մեջ է բաշխվում հարստությունը, այն ինչ ամբողջ մասսան տառապում և ծայրահեղ չքավորության մեջ»։

Ահա Ռաֆայելի և մի ուրիշ գիտողությունը. «Քանի վոր գոյություն ունի մասնավոր սեփականությունը, մարդկության ամենամեծ, ամենալավ, ամենաարժանավոր մասը տանջվելու յե ամենամեծ, ամենալավ, ամենաարժանավոր մասը տանջվելու յե հոգսերի ու զրկանքների լծի տակ»։ Ռաֆայելի ամբողջ խոսակցությունը բոլոր յերկրներում գոյություն ունեցող անհավասարության կրքոտ քննադատությունն է, և գոյություն ունեցող հավասարության պաշտպանությունն է՝ «Ուտոպիա» կղզու վրա։ Ռաֆայելը վոգեվորված կերպով պատմում է, որ «Ուտոպիա» կղզու վրա, որտեղ նա իբր թե ապրել է, վոչ ծույլ կա, վոչ էլ ձրիակեր։ Բոլորն էլ աշխատում են։ Յուրաքանչյուրն աշխատելի ձրիակեր։ Բոլորն էլ աշխատում են։ Յուրաքանչյուրն աշխա-

տում է վեց ժամ որական։ Այնտեղ հարստությունը բաժանելու կարգի մասին վեճեր չկան։ Մարդիկ ապրում են ընտանիքներով։ Բոլոր ապրանքները հավաքված են պահեստների մեջ և յուրաքանչյուր ընտանիք պահեստից վերցնում է այնքան, որքան նրան հարկավոր է։ Մորը խորամանկությամբ հարցնում է, թե արդյո՞ք հավասարությունն ու ընդհանուր բարեկեցությունը տզրուկներ ու անգործներ չի առաջացնում։ Ռաֆայելը հպարտ և ուրախ պատասխանում է, որ «Ուտոպիա» կղզու վրա ամեն մեկը ձգտում է ավելի—լավ ու ավելի շատ աշխատել։ Այնտեղ տները այգիներով են շրջապատված, ամեն մի ընտանիք աշխատում է իր տունը ավելի հարուստ այգիով շրջապատել։ Թոմաս Մորի այն հարցին, թե ինչպես են կղզու բնակիչները վերաբերվում գեղի պատերազմը, Ռաֆայելը հայտարարում է. «Զենքով ձեռք բերված փառքը մեզ մոտ ամենավատ փառքն է համարվում»։ Դրա հետ միասին Ռաֆայելը ավելացնում է, որ կան մոմենտներ, երբ հայրենակիցները կռվելն իրենց պարտքն են համարում։ Նրանք կռիվ են գնում, երբ նրանց վրա հարձակվում են։ Նրանք նույնպես իրենց պարտքն են համարում ոգնություն գալ հարևաններին, երբ վերջիններին կռվում են իրենց բռնակալների դեմ։

Ռաֆայելը «Ուտոպիա» կղզին նկարագրում է որպես հավասարների պետություն՝ քաղաքների ամբողջ ցանցով, մայրաքաղաքով ու միանգամայն կազմակերպված պետական մեխանիզմով։

Թոմաս Մորի «Վոսկի Գիրքը» կոմունիստական **կազմակերպված** հասարակության սքանչելի պատկերն է։ Սակայն Մորը անզոր է բացատրել, թե ինչպես անել, որպեսզի այդ կոմունան փաստ դառնա և չմնա ժամացածին մի բան, ֆանտազիա։ Մորը բանվոր դասակարգի պայքարին չեր հավատում. դեռ ավելին, այդ պայքարից վախենում եր։ Նա ասում եր. «Ամեն ինչ ժողովրդի համար, բայց ոչ ժողովրդի միջոցով»։

Մորին այդ բանի համար դատապարտել չի կարելի։ Այն ժամանակ նա չեր կարող նախատեսնել, որ Անգլիայում ապրող ճնշված բանվորների ժասսան կղարգանա, կամրանա, կստեղծի իր դասակարգային կազմակերպությունը և հասարակական խոշոր ստեղծագործող ուժ կդառնա։ Մորը շատ միամիտ եր նրա կարագրում կոմունիզմին անցնելը։ Նրան թվում եր, թե այդ Ռաֆայելին, որն այդքան գեղեցիկ բաներ և պատմում առասպելական յերկրի մասին, պետք է թագավորական խորհրդատու դարձնել։ Ռաֆայելն այն ժամանակ կսկսի թագավորի ու աշխարհի ուժեղների առաջ զարգացնել իր գայլեցուցիչ մտքերը, իսկ նրանք կկազմակերպեն կոմունիստական հասարակությունը։

Այդպես մենակ Թոմասը Մորը չեր մտածում։ Թե նրանից առաջ և թե հետո շատ յերազողներ են յեղել, որոնք կարծում էին, թե նոր հասարակությունը կստեղծեն ոչ թե աշխատավորական մասսաները, ոչ թե բանվորները, այլ նրանք, ովքեր հասարակական սանդուխքի ամենաբարձր աստիճաններն են գրավում—հարուստները, ազնվականները, յեպիսկոպոսները և թագավորները։ Թոմաս Մորն իրենից բարձր չեր կարող դուրս գալ իր ժամանակի շրջանակներից։

Թոմաս Մորից առաջ ոչ մի մարդ չկարողացավ պատկերացնել կոմունիստական արտադրության գաղափարը մի ամբողջ պետության մեջ։ Մարդիկ առանձին կոմունիստական ընկերություններ, արանքներ էին պատկերացնում միայն, իսկ Մորը առաջին մարդն եր, որ գիրք գրեց կոմունիզմի և կոմունիստական հասարակության մասին։ Ճնշվածների ու զրկվածների մեջ, մարդկության լավագույն զավակների մեջ ամենահին ժամանակներից ապրում է ընդհանուր հավասարության գաղափարը։ Այդ յերազը անցնում եր պապերից հայրերին, հայրերից որդիներին։ Թոմաս Մորը ուժեղ է նրանով, որ նա այդ յերազանքը շարադրեց լայն մասշտաբով ու հանձնեց մարդկանց այն ժամանակ, երբ ծնվեց այդ յերազը կյանքի մեջ իրագործելու ընդունակ նոր դասակարգը։

III.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ, ՍՈՑԻԱԼԻՍՏ-ՈՒՏՈՊԻՍՏՆԵՐԸ

Հեղափոխությունը պատմության լոկոմոտիվ են անվանում։ Սքանչելի անուն է։ Խաղաղ ժամանակ մարդկությունը կրնայի քայլերով և առաջ շարժվում։ Դրանից այնպիսի տպավորություն է ստացվում, կարծես պատմությունը շղթայված է իր ծանրությունից ուժասպառ յեղած լինի։ Դանդաղ, բայց անընդհատ կերպով հասարակության մեջ նորանոր հակասություններ են առաջ գալիս։ Այդ հակասությունները կուտակվում են ու

քանի զնում ավելի ցայտուն ու սուր են դառնում: Յեվ ահա հասնում է ժամը, յերբ պատմության խաղաղ ընթացքն ընդհատվում է ու առաջ է գալիս մի արմատական փոփոխություն: Պատմության ընթացքն արագանում է: Մի որում կատարվում է այն, ինչի համար խաղաղ ժամանակ շաբաթներ ու ամիսներ են պահանջվում: Հեղափոխության փոթորիկն արթնացնում է բոլոր քնած ուժերը և լոկոմոտիվը մինչեվ հեղափոխությունն դանդաղ քարշ յեկող ձիուն և փոխարինում: Մարդու բնության վրա տարած ժամանակակից հաղթանակները թույլ են տալիս հեղափոխությանը վոչ թե լոկոմոտիվ, այլ պատմության թեվեր անվանել: Սակայն, հեղափոխությունն ուժեղ է վոչ միայն նրանով, վոր նա մարդկության շարժումն է արագացնում, նա մի ուրիշ հրաշագործ ուժ ել ունի: Մեծ հեղափոխությունն անցյալի ու ներկայի մութ անկյունները է լուսավորում և իր լույսով հեռավոր ապագան թափանցում: Վորքան լայն են լինում հեղափոխության ընդգրկած մասսաները, վորքան խորն է լինում նրա բովանդակությունը, այնքան ավելի մեծ է լինում նրա թափը, այնքան ավելի ուժեղ է լինում նրա ձգտումը դեպի առաջ: **Հեղափոխությունը պատմության պայծառատես աչքն է:**

Անցյալի հեղափոխությունների շարքում Ֆրանսիական մեծ հեղափոխությունը բացառիկ տեղ է գրավում: Նա բուն Ֆրանսիայի սահմաններից անցավ շատ հեռու և նոր կյանքի կանչեց Յեվրոպայի ժողովրդներին: Նրա հզոր հարվածների տակ զարմանալի արագությամբ խորտակվեցին իշխանների ու թագավորների գահերը: Նրա ալիքները հասան նույնիսկ խոր քնի մեջ ընկած Ռուսաստանը: Հեղափոխական առաջին բռնկումն ընդդեմ ռուսական միահեծանության՝ սերտ կերպով կապված է Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցության հետ: (1825 թ. դեկաբրիստների ապստամբությունը):

Ֆրանսիական հեղափոխությունն իր վերելքի շրջանում մի վարկյանով նրան ղեկավարող բուրժուազիայի շահերից բարձրացավ: Թվում եր թե հեղափոխության ղեկավարությունը դուրս յեկավ առևտրականների ու նրանց վաստակավորների ձեռքից: Կալվածատերերի ու տերերների դեմ ժղվող պայքարում ժողովրդական մասսաները դադարեցին թնդանոթային մսի դերը խաղալ—նրանք սկսեցին բարձր խոսել **իրեց** շահերի և **իրեց** գաղափարների մասին: Ֆրանսիայի հեղափոխական պարլամենտում՝ կոնվենտում—մասնավոր սեփականության ու ճնշման դեմ ժերկացնող ճառեր եյին լսվում:

«Բուրժուազիայի ամեն մի ուժեղ շարժման ժամանակ,—ասում է Ենգելսը,—հանդես է գալիս ինքնուրույն կերպով նույնիսկ այն դասակարգը, վորը ժամանակակից պրոլետարիատի քիչ թե շատ զարգացած նախորդն է հանդիսանում»: Ժամանակակից բանվոր դասակարգի հայրերը բարձր ու պարզ խոսեցին իրենց մասին դեռ ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ: Այն ժամանակ շատերին թվում եր, վոր հեղափոխությունը արդարություն կհաստատի յերկրի վրա: Նրան փառաբանում եյին բանաստեղծները, հիմներ եյին յերգում նրան, նրա մասին հրաշքներ եյին պատմում բոլոր լեզուներով: Գերմանական մեծ փիլիսոփա Հեգելը հիացմունքով հայտարարում եր, թե այդ հեղափոխությունը յերկրի վրա կհաստատի «բանականության թագավորությունը»: Հեղափոխությունը յերգում եյին, իսկ ժողովրդական մասսաները ցնծում եյին իրենց մեծ հաղթանակը տոնելով: Բայց այդ տոնը յերկար չտեվեց, նրան շուտով փոխարինեց դառն հուսախաբությունը: Հեղափոխությունը բուրժուազիայի գործն եր, նա չեր կարող ժողովրդական մասսաների կողմից նրա վրա դրած հույսերը արդարացնել: Ազնվականության, թագավորի տապալված գահի տեղը բուրժուազիան կապիտալի տիրապետության գահը կանգնեցրեց: Կաշառքն ու վաճառվելը,—ասում է Ենգելսը,—փոխարինեցին առաջվա բռունցքային ուժի լուծը, իսկ թրի տեղ սովենազոր լծակը դարձավ դրամը: Մենք արդեն հիշատակեցինք, վոր այդ հեղափոխության մեջ բուրժուազիան շատ շուտ ցույց տվեց իր դեմքը (բանվորական միությունների դեմ 1791 թվին հրատարակած որենքը): Շատ հասկանալի յե, թե ինչու հենց այդ հեղափոխության ժամանակ դրվեցին նոր շինքի առաջին քարերը: Նոր շինքի՝ վորը հիմնված է վոչ թե կապիտալի իշխանության, այլ բոլոր մարդկանց տնտեսական հավասարության վրա: «Աշխատանքը և հաճույքը բոլորի համար պիտի լինեն»: Այդպես եր պահանջում «հավասարների միությունը», վորի գլուխը կանգնած եր ֆրանսիական բանվորների ազնիվ ղեկավար Գրակխ Բաբյոֆը:

1796 թվի մայիսի 10-ին Գրակխ Բաբյոֆը ու նրա զինակիցներ Դարտեն, Բուոնարոտտին և ուրիշները ձերբակալվեցին: Նրանցից շատերին, այդ թվում և Բաբյոֆին, կախեցին, իսկ «միության» մնացած անդամներին աքսորեցին: Սակայն, մեծ հեղափոխության հետևանքով իշխանությունը իր ձեռքն առած կապիտալը չկարողացավ վոչ կախել, վոչ էլ աքսորել «հասվա-

սարների միության» հայտարարած մեծ դաղափարները։ Իշխող կապիտալի ուղեկիցը սարուկ—պրոլետարները, իսկ պրոլետարի մտքերը քանի դնում այնքան ավելի ցայտուն կերպով եկին արտահայտվում։

Բաբյոֆը մահապատժի յենթարկվեց 1797 թ. մայիսի 27-ին։ Իսկ հինդ տարի հետո հանդես յեկան բանվոր դասակարդի դաղափարի նոր մունետիկները։ 1802 թվին գրեթե միաժամանակ լույս են տեսնում Սեն-Սիմոնի «ժընեվյան նամակները» և Ֆուրեյի առաջին աշխատությունը։ Նույն այդ ժամանակ Անգլիայի մեծ պրակտիկ Ռուբերտ Ոուենը սկսում է կոոպերատիվ ֆաբրիկներ կազմակերպելու փորձերը, որոնք նրա կարծիքով, կապիտալիստական գործարանները պետք է փոխարինվեին կոմունալ գործարաններով։

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը նոր կապիտալիստական հասարակության ներսում առաջացած կապիտալի աշխատանքի պայքարի խնդիրը շատ կարուկ կերպով դրեց։ Ճիշտ է, մի բուրժուական տնտեսագետ դտնվեց (Մալթուսը), որը փորձում եր «գիտականորեն» ապացուցել, որ բանվորական մասսաների բոլոր տանջանքներն անխուսափելի յեն։ Նրա բացատրությունից ստացվում է այն, որ ժողովրդական մասսաների տանջանքները հետևանք են այն բանի, որ աղդաբնակությունն անհամեմատ ավելի արագ է աճում, քան գոյության միջոցները։ Մալթուսի կարծիքով պատերազմները, գործազրկությունը, սովը, աղքատությունը,—բոլոր այդ սարսափներն անհրաժեշտ են, որպեսզի հավասարակշռություն հաստատվի աղդաբնակչության ու գոյության միջոցների միջև։

Բուրժուազիան ուրախացած կպավ այդ հասարձակ, ճարպիկ ու խորամանկ թեորիային։ Բայց Շարլ Ֆուրյեն արդեն փայլուն կերպով ապացուցեց, որ «քաղաքակրթության մեջ ավելցուկն աղքատության աղբյուր է դառնում»։

Ֆուրյեն ընդհանրապես հանդես յեկավ որպես կապիտալիստական կարգերի սարսափների ցայտուն ու հզոր քննադատ։

Անթիվ օրինակներով Ֆուրյեն վարպետորեն ապացուցում է, որ «ամեն մի արատ իր վայրենի շրջանում հանդես գալով պարզ ձևով ժամանակակից հասարակության կեղծավոր գիմակի տակ՝ հանդես է գալիս ծայր աստիճան բարդ ձևով»։ Ֆուրյեն էլ, Մորի նման, յելքը նոր հասարակակարգի ծրագիրը մշակելու մեջ եր դտնում, մի հասարակակարգի, որտեղ չպիտի լիներ

կապիտալիստական հասարակության արատներն ու սարսափները։ Նա մշակեց կոմունաների կազմակերպության ծրագիրն ամենայն մանրամասնությամբ։ Նա հույս ուներ այդ սքանչելի ծրագրով հրապուրել մարդկանց աշխարհը և ստիպել նրան հրաժարվել անցյալի վատ սովորություններից և հավասարության վրա հիմնած նոր կյանքի կառուցման ձեռնարկել։

Ֆուրյեն յերիտասարդ հասակում Ֆրանսիայի ծովափնյա Մարսել քաղաքում ծառայում եր գործակատարի պաշտոնով։ Նա տեսել եր կապիտալիստի գործունեությունը նրա մաքուր չկեղծած ձևի մեջ։ Նա վկա յեր, թե ինչպես ագահ սպեկուլյանտները հացի բարձր գնները պահպանելու համար հացով բեռնած նավերը բաց ծովը եյին տանում ու այնտեղ ջրասուղում։ Դա արվում եր այն ժամանակ, յերբ Մարսելում և ամբողջ Ֆրանսիայում սոսկալի սով եր տիրում։ Բնական է, որ Ֆուրյեն սպեկուլյացիան ատեր իր ամբողջ հոգով։

Ֆուրյեն կապիտալիստական հասարակության փայլուն քննադատն եր։ Նրա կծու ծաղրանքը լի յե թույնով ու փայլով։ Նա կարողացավ նույնպես նկատել յեղբայրության ու հավասարության վրա հիմնված հասարակության կյանքի հրաշալի ծրագիրը։ Բայց այդ նպատակին տանող ճամբան դտնելու համար միջոց ցույց տալ նա անզոր եր։ Ֆուրեյի նման, Սեն-Սիմոնն էլ իր ամբողջ մտածմունքներով բանվոր մարդկանց տանջանքներին եր նվիրված։ «Մեր դարի բոլոր հասարակական հիմնարկությունների հիմնական նպատակը,—գրում եր Սեն-Սիմոնը—ամենից մեծաքանակ ու ամենազրկված դասակարգի ֆիզիկական ու բարոյական դաստիարակությունը պետք է լինի»։ Սեն-Սիմոնը լարված աշխատում եր հասարակության վերակազմության այնպիսի ծրագիր մշակել, որը փրկություն տար «ամենազրկված դասակարգին»։

Նման վերկարար մի ծրագիր դտնելու անզորությունից տառապելով՝ նա 1823 թ. վորոշեց ինքնասպանություն գործել։ Ինքնասպանության փորձ կատարելու ժամանակ նա իրան միայն վիրավորեց, իսկ մեռավ յերկու տարի հետո։ Հոգեվարքի մեջ նրա ասած խոսքերն իսկական մարգարեության պես են հնչում։ Մահամերձ վիճակում նա խոսում եր բանվորական կուսակցություն կազմակերպելու մասին, որին պիտի պատկանի ապագան։

Թե Սեն-Սիմոնը, թե Ֆուրյեն ունեցին բարեկամներ ու

գինակիցներ, որ նույն ուղղությամբ էին աշխատում, մարդիկ, որոնց միտքն էլ զբաղված էր կապիտալիստական հասարակության հակասությունների վերացման խնդրով։ Նրանք բոլորն էլ լավագույն ձգտումներով էին ոգեշնչված։ Նրանցից շատերը պայծառ մտքի ու հսկայական տաղանդի տեր էին։ Սակայն, նրանք բոլորն էլ միլիոնույն ցավով էին բռնված։ Նրանք չէին տեսնում այն կամուրջը, որը պետք է գցվեր ժամանակակից կապիտալիստական հասարակությանն ապագա սոցիալիստականից բաժանող անդունդի վրայով։

Առանձին տեղ է գրավում սոցիալիստ-ուտոպիստների մեջ անգլիական մեծ պրակտիկ Ռոբերտ-Ուենը։ Նա վոչ միայն քարոզում էր, այլ և գործում էր։ Այն ժամանակվա ճնշման ու շահագործման սարսափների պայմաններում նա ֆաբրիկային ավանը (Նյու.լանարկը) ծաղկող այգի դարձրեց։ Ուսումնասիրելով իր ղեկավարության տակ յեղած ֆաբրիկան՝ նրա առաջ պարզվեց այն հարցը, թե ուր են գնում այն հարստությունները, որ բանվորները արտադրում են, բայց չեն ստանում, ու յեկավ այն յեզրակացության, որ հարստությունները յուրացնում են արտադրության մեջ չմասնակցողները։

Ռոբերտ Ուենը չրավականացավ իր գաղափարները քարոզելով ու ֆաբրիկային կոմունաներ կազմակերպելով։ Նա սկսեց կենդանի ու ակտիվ մասնակցություն ցույց տալ Անգլիայի բանվորական շարժման մեջ, որն այն ժամանակ քիչ թե շատ կազմակերպված էր ընդունում։ Գործնական Ուենը, կարծում էր թե պրոպագանդայով և օրինակով կարելի յե ամբողջ աշխարհը նոր կյանքի բերել։ Ֆրանսիայի մեծ ուտոպիստների նման Ռոբերտ Ուենը չէր տեսնում ներկան ապագայի հետ կապող ողակները։

Բնականորեն մի հարց է ծագում, թե մտքի, զգացմունքի ու գործի այդ հակասները չկարողացան լուծել այն խնդիրը, որին այդքան սերտ կերպով էին մոտեցել։

Այս հարցին «կոմունիստական մանիֆեստը» պատասխանում է. «Այդ գաղափարների հեղինակները (Սեն-Սիմոնը, Ֆուրյեն, Ռոբերտ-Ուենն) շատ լավ գիտակցում են դասակարգերի մեջ գոյություն ունեցող հակասությունը և ժամանակակից հասարակության ներքին քայքայման պատճառը։ Սակայն նրանք վոչ մի պատմական գործողություն բանվոր դասակարգի կողմից չեն նկատում, նրանք չեն նկատում բանվոր դասակարգի քաղաքական շարժումը»։ Հետո «Մանիֆեստը» շարունակում է. «Իրենց

ծրագրերի մշակումով զբաղված՝ նրանք գիտակցում էին, որ առաջին հերթին բանվոր դասակարգի շահերն են պաշտպանում, վորովհետև այդ դասակարգը ամենից տանջված դասակարգն է։ Ընդհանրապես, հոնձինս բանվոր դասակարգի, նրանք միայն ամենից շատ տանջվող դասակարգն են տեսնում։ Բայց նրանք բանվոր դասակարգի մեջ չէին տեսնում ու չէին կարող տեսնել նոր կյանք ստեղծողին, սեփական բաղդի գործիչ»։

Թոմաս Մորն ասում էր. «Այն ինչ ժողովրդի համար, բայց վոչ ժողովրդի միջոցով»։ Նույն միտքը Սեն Սիմոնն է արտահայտում, յերբ նա մասսաներին դիմելով՝ բացականչում է. «Նայեցեք ինչ էր կատարվում Ֆրանսիայում, յերբ այնտեղ ձեր ընկերներն էին տիրապետում. նրանք այնտեղ սով առաջացրին»։

Մորի նման, Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո, իրենց ծրագիրներով դուրս յեկած մեծ ուտոպիստներն էլ իրենց ցից ու իրենց ժամանակից չկարողացան բարձրանալ։ Կապիտալիստական կարգերը դեռ այնքան չէին զարգացել։ Կապիտալիստական կարգերի թույլ զարգացման համապատասխանում էր բանվոր դասակարգի թույլ զարգացումը։ Այդ պայմաններում բանվոր դասակարգի շահերն արտահայտող մտքերն էլ պետք է խակ, խճճված ու ֆանտաստիկ լինեին։

Մեծ ուտոպիստները հայտարարել են աշխարհին, որ արդեն աշխարհին նոր գաղափարներ ու նոր հնարավորություններ բերող դասակարգը ծնվել է։ Բանվոր դասակարգի ազդեցությունն առանձնապես շեշտված կլինի, յերբ մենք ֆրանսիական ուտոպիստներին համեմատենք անգլիական պրակտիկի հետ։ Ֆուրյեն ատում էր բուրժուական կեղծավորությունն ու անխնա կերպով խարազանում էր նրան։ Այլ կերպ դասավորվեց Ուենի կյանքը։

«Կոմունիզմին անցնելը,—ասում է Ենգելսը,—Ուենի կյանքի համար մի շրջակետ էր։ Քանի դեռ Ուենը հասարակ մարդասիրության (բարեգործության) հողի վրա էր կանգնած, նա վայելում էր հավանություն, հարստություն, փառք, պատիվ և այլն, նա Յեվրոպայում ամենահայտնի մարդն էր։ Նրան լսում էին վոչ միայն իր դասի մարդիկ, այլև պետական մարդիկ, թագավորները։ Սակայն, յերբ նա հանդես յեկավ իր կոմունիստական տեսակետներով՝ գործն այլ ընթացք ստացավ։ Նրա կարծիքով դեպի հասարակության վերակազմությունը տանող ճանապարհը փակված էր յերեք մեծ խոչնդոտներով, այն է սեփականատիրությունը, մասնավոր

կանությամբ, կրոնով և ամուսնության ժամանակակից ձևով։ Նա գիտեր, որ այդ բոլորի դեմ դուրս գալը նշանակում է պաշտոնական հասարակության անարգանքին արժանանալ, կորցնել սոցիալական դիրքը։ Բայց նրան չկարողացան զսպել։ Նա հարձակվեց նրանց վրա և ինչ որ նախատեսնում եր, կատարվեց։ Պաշտոնական հասարակությունից արտաքսված (այսինքն կապիտալիստների, տերերների և ատիճանավորների հասարակությունից), մաժուլի կողմից դիտավորյալ կերպով մոռացված շնորհիվ Ամերիկյում կատարած անհաջող կոմունիստական փորձերի աղքատացած՝ (իսկ այդ փորձերի վրա նա դրել եր ամբողջ կարողությունը), այժմ նա ուղղակի անցավ բանվոր դասակարգի կողմը ու նրա հետ գործեց յեվս յերեսուն տարի։ Բանվորների ոգին կատարված բոլոր հասարակական շարժումները Անգլիայում և այն բոլորը, ինչ որ քիչ թե շատ կարեվոր և յեղել և արված և յեղել բանվոր դասակարգի համար, այդ բոլորը կապված և Ոուենի անվան հետ։

Սոցիալիստական միտքը դանդաղ և զարգանում։ Ել ավելի դանդաղ եր հիմնավորվում բանվոր դասակարգի կազմակերպությունը։ Ֆրանսիական հեղափոխությունը մարդկության պատմության մեջ մի շրջակետ և։ Ֆրանսիական հեղափոխությունը կապիտալիստական հասարակությանն ազատեց բոլոր կապանքներից։ Դրանով նա ճանապարհ բացեց կապիտալիստական հասարակության ուղեկցի, սարուկի — ժամանակակից բանվորի համար։

IV

ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆ ՍՏԵՂԾՈՒՄ Է ԻՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐՆԵՐԻՆ

Մեծ ուտոպիստների ուսմունքի կրակը չեր կարող լուսավորել կապիտալիստական հասարակության մութ կողմերը, վորովհետև այն ժամանակ դեռ կյանքը չեր պատրաստել այն ուժերը, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմի հաղթական պայքարի համար։

Վորքան ուժեղանում ու զարգանում եր կապիտալիզմը, այնքան մեծանում ու զարգանում եր սոցիալիզմը։ Կապիտալիզմի զարգացումը միանգամայն արդարացրեց «Կոմունիստական Մանիֆեստի» խոսքերը թե՝ «բուրժուազիան պատրաստեց վոչ միայն այն զենքը, վորը նրան մահացու հարվածը պետք և տար, այլ ստեղծեց նայեվ այն մարդկանց, վորոնք այդ զենքը կվերցնեն իրենց ձեռքը—նա ստեղծեց ժամանակակից բանվոր պրոլետարներին։

Այժմ մենք քայլ առ քայլ հետևելու յենք, թե ինչպես բուրժուազիան կառչելով իշխանության ու կռվելով նրա համար՝ պատրաստեց իր մահվան զենքը և ստեղծեց իր գերեզմանափորների բանակը։ Կապիտալիզմի ծագման հետ միաժամանակ առաջ են գալիս սոցիալիզմի սաղմերը։ Հողից ու արտադրության գործիքներից զուրկ գյուղացիական մասսաները հարկադրված լինելով ծախել իրենց բանվորական ուժը՝ ատելությամբ են ներշնչվում դեպի մասնավոր սեփականությունը։ Դեռ տնային արդյունաբերության ժամանակ յուրաքանչյուր բանվոր անիծում եր մի տեր, վոր քամում եր նրա քրտինքը։

Արդյունաբերության յերկրորդ շրջանը—մանուֆակտուրան և, վոր բանվորներին մեծ արհեստանոցների մեջ և հավաքում՝ դնելով սոցիալիստական արտադրության յեղանակի հիմքը։ Կապիտալիզմն ուժեղ և, յերբ բանվորները բաժան-բաժան են յեղած։ Այն ժամանակից, յերբ արհեստանոցները սկսում են հավաքել բանվորներին նրանք կուռ մասսա յեն դառնում, վորը հանում իր

շահերի պետք է ձգտի արտադրության գործիքների համայնացման։

Առաջին արհեստանոցը սոցիալիզմի առաջին դպրոցն էր։ Առաջին արհեստանոցը այն զորանոցն էր, որտեղ հավաքվեց ու սեղմեց իր շարքերը բանվորական հեղափոխության բանակը։ Սակայն, այդ զորանոցները դեռ փոքր էին ու ցած ու ցրիվ ընկած։ Նրանք դեռ փոքր ու աննշան դպրոցներ էին։ Բանվորները դեռ միասնական մասսայի մեջ չէին ձուլված, նրանք դեռ դասակարգ չէին ներկայացնում իրենցից։

Կապիտալիզմն առաջ էր գնում, նա մի քայլ էլ արավ դեպի առաջ։ Նա հնարեց նոր մեքենաներ, հնարեց շոգին, շարժման մեջ դցեց հսկայական ֆաբրիկաներն ու գործարանները։ Նա ստեղծել սկսեց ոչ թե փոքրիկ ցրված բիվակներ, այլ հսկայական բանակներ։

Յերբ կապիտալիզմն ստեղծեց մեծ ֆաբրիկաները, նա դրանով սոցիալիզմի համար ավելի խոշոր, ավելի կարեվոր քայլ արավ։ Քանի դեռ բանվորը փոքրիկ արհեստանոցներում հասարակ մեքենաների վրա յեր աշխատում, նա կարող էր հույս ունենալ, որ յեթե միքիչ յերկար նստի, ավել աշխատի՝ անհրաժեշտ գումար հավաքելու համար, կարող է ինքն էլ մեքենա գնել իրեն համար ու ինքնուրույն տեր դառնալ։ Սակայն, յերբ նա մեծ ֆաբրիկաներումն է աշխատում, ու այդ վիթխարի մեքենաներն է տեսնում, նրա մտքովն անգամ չի անցնում մեքենայի տեր դառնալ։ Նա մտածում է այն մասին, որպեսզի բոլոր մեքենաների տերը դառնան բոլոր բանվորները միասին։ Նա սկսում է իրեն այն դասակարգի անդամ համարել, որը ամեն ինչ ստեղծել է, ամեն ինչ էլ կտիրի։

Խոշոր արդյունաբերության անցնելը ունի նայել մի ուրիշ նշանակություն։ Խոշոր մեքենաներ ու խոշոր ֆաբրիկներ ստեղծվելու հետ միասին այդ արտադրության գործիքները հասարակության ձեռքում հեշտ հավաքելու հնարավորությունն էլ է ստեղծվում։ Ստացվում է այնպիսի պատկեր, որ կապիտալիստական դասակարգը իր գլուխն այնպես է գնում, որ աճող պրոլետարիատը հեշտ կերպով կարող է այդ գլուխը կտրել։ Կապիտալիստների թիվը քչանում է, իսկ բանվորներինը՝ շատանում։ Արտադրության խոշոր գործիքները փաստորեն այն տեղերումն են լինում, ուր հավաքված է բանվորների բանակը։ Այդ ձեռնարկությունների տերը ոչ մի դեր չի խաղում, նա ոչինչ

է իրեն պատկանող ձեռնակության հետ համեմատած։ Պետք է իջեցնել հարվածը—հեռացնել տիրոջը—ու դրանից հետո կտիրի ներդաշնակություն՝ հասարակական արտադրությունը կդառնա հասարակական գործ։ Գյուղացիներին գյուղերից քշելը, բանվորների բանակ ստեղծելը կապիտալիզմի առաջին քայլն էր։ Կապիտալիստների մեջ յեղած մրցման ազդեցության տակ փոքրիկ տերերի, փոքր կապիտալիստների ու ֆաբրիկանտների թիվը քանի գնում ավելի ու ավելի պակասում էր - իսկ բանվորների բանակը՝ քանի գնում ավելանում։

Տնային արդյունաբերությունը տեղի տվեց մանուֆակտուրային, վորովհետև մանուֆակտուրան ոգտվելով աշխատանքի բաժանումից ավելի լավ հեռանկներ և ոգուտներ էր տալիս։ Փոքր արհեստանոցն անզոր է խոշոր ֆաբրիկայի դեմ մրցելու։ Խոշոր ֆաբրիկան լավագույն մեքենաներից է ոգտվում։ Նա ավելի արագ ու աճուն է ապրանքներ արտադրում։ Փոքր արհեստանոցները չեն կարող հասնել մեծ ֆաբրիկաներին, այդ արհեստանոցների տերերը, իրերի բերումով, բանվորներ՝ պրոլետարներ են դառնում։ Խոշորներից հաղթում է նա, ով իր արտադրության տակ ունի լավ մեքենաներ, ով լավ և արագ է ապրանքներ արտադրում։

Կապիտալը մի բանիսի ձեռքումն է հավաքվում (կենտրոնանում), իսկ աշխատանքի բանակը չլսված հսկայական չափերի յե հասնում։

Մի քանիսի ձեռքում կենտրոնացած արտադրության գործիքները, վորոնք հսկայական հարստություններ ստեղծող միլիոնավորները, վորոնք հսկայական հարստություններ ստեղծող միլիոնավորները բանվորներ են միացնում—ահա այն գենքը, որ պատրաստում է կապիտալիզմը սոցիալիզմի հաղթանակի համար։

Տեսնենք այժմ նրանց, ովքեր գենքն իրենց ձեռքն են առնում։

Յեթե բանվորների բանակը աճեր միայն քանակով—դրանից ոչ մի ոգուտ չէր լինի։ Յենթադրենք, թե մենք Գերմանիայում 30 միլիոն բանվորներ ունենայինք և մի հազար ֆաբրիկաներ։ Յեթե այդ 30 միլիոն բանվորները հնազանդ կերպով կատարեին հազար ֆաբրիկանտների կամքը, ապա այդ բանակը միայն կուժեղացներ կապիտալիստների իշխանությունը։ Մենք գիտենք ինչ էր ներկայացնում իրենից պրոլետարների բանակը կապիտալիզմի առաջին դարում։ Նա խեղճ էր՝ գժված։ Մենք գիտենք նայել ինչպես էր գործի դրությունը հետո՝ ֆրանսիական

հեղափոխության ժամանակ։ Բանվորներն ու բուրժուազիան միևնույն դրոշակի տակ էին գնում։ Բանվորները հավատում էին, վոր բուրժուազիայի հաղթանակից հետո բոլոր մարդիկ հավասար կլինեն, վոր այն ժամանակ լիակատար հավասարություն է լինելու։ Ճիշտ վոր արդեն ֆրանսիական հեղափոխության ժամանակ բուրժուազիային պրոլետարիատի հետ կապող թելերն սկսեցին կտրվել։ Հեղափոխության ամենայեռուն շրջանում նույնիսկ «հավասարների միությունը» կազմակերպվեց գլխավորությամբ Բաբյոֆի, վորն ասում էր.—«Մենք հավասարություն ենք ուզում վոչ թե թղթի վրա, այլ մեր խրճիթների կտուրների տակ»։ Բայց դրանք միայն առանձին ձայներ էին, առանձին քայլեր, վոր ընդհանուր պատկերը չէին փոխում։ Բանվոր դասակարգը ամբողջապես բուրժուազիայի հետևից էր գնում, իսկ բուրժուազիան բանվոր դասակարգի ոգնությամբ իր նվաճումներն էր կատարում։ Ցեղավ մի բոպե, յերբ ֆրանսիական կոնվենտը աշխատավորների համար շատ նպաստավոր հեղափոխական հիմնական որենք մշակեց (սահմանադրություն), սակայն այդ որենքը չկիրառվեց կյանքում։ Հաստատ կարելի յե ասել, վոր բուրժուազիան ոգտվում էր բանվոր դասակարգից վոչ միայն տնտեսական հարստություններ ստեղծելու համար, այլ և հենց բանվորների վրա իր քաղաքական իշխանությունը հաստատելու համար։

Այսպես էր դրությունը 130 տարի սրանից առաջ։ Բայց ահա 50 տարի անց, 1848 թվին Ֆրանսիայում բռնկվեց յերկրորդ հեղափոխությունը։

Յերբ մենք 1848 թվականի հեղափոխությունն ենք ուսումնասիրում,—այստեղ արդեն միանգամայն տարբեր պատկեր ենք տեսնում։ Առաջին որը, առաջին ժամը բանվորները և բուրժուազիան միասին են գնում—բոլորը դուրս են գալիս թագավորի դեմ՝ ազատության համար։ Դա 1848 թվականի փետրվարի 22-ին էր։ Բայց արդեն յերեք որ հետո, այն է՝ փետրավարի 25-ին բանվորները դուրս յեկան իրենց սեփական պահանջներով։ 1779 և 1848 թվականների հեղափոխությունների միջոցին Ֆրանսիայի բանվորները մի շարք ապստամբություններ կազմակերպեցին (1832, 1834 և 1839 թվականներին)։ Դեռ 1848 թվին ել բանվոր դասակարգն իրեն պարզ հաշիվ չէր տալիս իր ծրագրի մասին։ Բանվորներն «աշխատանքի կազմակերպություն» էին պահանջում։ Դա չափազանց անորոշ մի պահանջ էր։ Յեթե Ֆա-

մանավոր սեփականությունը արտադրության գործիքների վրա, այդ դեպքում մրցումը մանավոր սեփականատերերի միջև անխուսափելի յե և վոչ մի աշխատանքի կազմակերպություն լինել չի կարող։ Պարզ է, վոր աշխատանքի կազմակերպության նախապայմանը իշխանությունը աշխատավորների ձեռքն անցնելն է։ Բայց բանվոր դասակարգն իր շահերի պարզ գիտակցությունը չուներ։ Նա կարծում էր, վոր կարող է կապիտալիստական հասարակության սահմաններում ապահովել իր գոյությունը աշխատանքի միջոցով։ Նա հավատում էր «աշխատանքի կազմակերպության» և «աշխատանքի իրավունքին»։ Բայց նա արդեն դեպի բուրժուազիան թերահավատությամբ էր լցված։ Նա արդեն գիտեր, վոր իր շահերը չեն զուգադիպում բուրժուազիայի շահերին։ Բանվոր դասակարգն իր կռիվը վոչ թե բուրժուազիայի հետ ձեռք ձեռքի տված էր տանում, այլ յերես առ յերես նրա դեմ։

Բանվոր դասակարգի պատմությունից մի չափազանց կարևոր, մեծ նշանակություն ունեցող մոմենտ պետք է հիշել։ Դա 1848 թվի հունիսն է։ Հունիսյան դեպքերը նույն չափով պատրաստեցին Փարիզյան կոմունան, ինչ չափով 1905 թվի ռուսական հեղափոխությունը պատրաստեց հոկտեմբերյան մեծ հեղաշրջումը 1917 թվին։ Հունիսյան որերը, դա այն որերն են, յերբ բանվոր դասակարգը առաջին անգամ պատմության մեջ դուրս յեկավ մենակ ճնշող բոլոր դասակարգերի դեմ ու կռվի բռնվեց իր պրոլետարական շահերի համար։ Հեղափոխության ընթացքով բանվոր դասակարգը, վոր դեռ փետրվար ամսին հավատում էր, թե նա կարող է բուրժուական հասարակության մեջ ձեռք բերել կյանքի մարդավայել պայմաններ, հարկադրված յեղավ դուրս գալ կռվի պրոլետարիատի գիկտատուրայի, բանվոր դասակարգի իշխանության համար։ Նա քաջարար կռվում էր բարիկադների վրա և դրանից հետո յերկար տարիներ բուրժուազիան ահ ու սարսափով էր հիշում այն որերը, յերբ դեռ թույլ և անկազմակերպ պրոլետարիատը յերկար դիմացավ ճակատամարտին բարիկադների վրա։

Բնական է, վոր բանվոր դասակարգը պարտության էր դատապարտված։ Բայց մեզ համար այդ տարին նշանավոր է նրանով, վոր նա մի նոր շրջան է բացում։ Բանվոր դասակարգը դադարեց իր ճնշողների իշխանության համար կռվող մասսա լինել։ Բանվոր դասակարգն ինքնուրույն դասակարգ է

դառնում ու հանդես է գալիս կապիտալիզմի դերեզմանափորի դերում։

Կապիտալիզմի առաջ գալու հետ, առաջ յեկավ և առաջին առասպելը սոցիալիզմի մասին։ Իսկ յերբ բանվոր դասակարգի առաջին ապստամբությունն եր պատրաստվում, յերևված այլ վավերագիր, վորը ցույց եր տալիս դեպի սոցիալիզմը տանող ճանապարհը։ Նույն պայմանները, վոր առաջացրին 1848 թ. հունիսյան ապստամբությունը, կյանքի կանչեցին առաջին Կոմունիստական Միությունը, վորը հրատարակեց Մարքսի և Ենգելսի «Կոմունիստական Մանիֆեստը»։ Մորի «Վոսկի գրքում» նիշված է հրաշալի նպատակը։ Մորը սակայն չկարողացավ պարզ ցույց տալ դեպի այդ նպատակը տանող ճիշտ ուղին։ Այդ բանը պակասում եր նայել առաջին սոցիալիստներին գրվածքների մեծ մասում։ Նրանք բոլորը մի պակասություն ունեյին։ Նրանք չեյին տեսնում պրոլետարիատին, նրանք չեյին տեսնում այն միակ դասակարգը, վորը կարող է այդ գաղափարները իրականացնել։

Բանվոր դասակարգը խորապես տանջվում եր, նրան ճնշում եյին։ Նա ընդդիմադրում եր, պայքարում եր, սակայն նա չուներ մի վորոշ նպատակ։ Դեպքեր են յեղել, յերբ բանվորներն առանձին վարպետների դեմ եյին ապստամբվում, յերբ մեքենաներն եյին վոչնչացնում՝ նրանց համարելով մեղավոր իրենց տանջանքների համար։ Նրանք ջերմեռանդ կռվում եյին, բայց չունեյին վորոշված նպատակ, իսկ սոցիալիստ-ուտոպիստներն ունեյին նպատակ, չունեյին պայքար, վոր կարողանար այդ նպատակն իրականացնել։

«Կոմունիստական Մանիֆեստի» մեծ նշանակությունն այն է, վոր նա ցույց տվեց դեպի նպատակը տանող ուղին։ Սոցիալիզմը դադարեց ուտոպիա լինելուց։ Նա մարդկության համար անհրաժեշտություն դարձավ։ «Մանիֆեստը բանվոր դասակարգին տվեց ուղեցույց։ «Մանիֆեստը» չի խոսում այն մասին, թե սոցիալիզմը լավ բան է։ Նա ուրիշ բան և անում. նա ապացուցում է, վոր սոցիալիզմն անհրաժեշտ բան է։ Անարկու կերպով են հնչում «Կոմունիստական Մանիֆեստի» խոսքերը՝ թե «Բուրժուազիան ամենից առաջ իր դերեզմանափորներն է ստեղծում։ Նրա պարտությունը և պրոլետարիատի հաղթանակը հավասարապես անխուսափելի յեն։

V.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՎԸ

«Յուրաքանչյուր ճգնաժամ,—կարդում ենք «Կոմունիստական Մանիֆեստում»,—սիստեմատիկ կերպով վոչնչացնում է վոչ միայն պատրաստի մթերքների ահագին քանակը, այլ և արտադրական ուժերի զգալի մասը։ Հասարակությունն այնպիսի մի համաճարակով է բռնվում, վոր պատմական մի ուրիշ շրջանում անհեթեթություն կթվար,—դա գերարտադրության համաճարակն է։ Հասարակությունը հանկարծ բարբարոսության մեջ է ընկնում»։ Ճգնաժամը ցայտուն կերպով ապացուցում է Ֆուրյեյի այն միտքը, թե մեր դարում առատությունը աղքատության աղբյուր է դառնում։

Բնական է, վոր կապիտալիստական հասարակության ներքին հակասությունները չափազանց պարզ դրսևորող ճգնաժամը հսկայական հեղափոխական դեր է կատարում։ Ճգնաժամերը ժողովրդական մասսաներին ավելի արագ ու հաստատ են հեղափոխականացնում, քան հեղափոխության ու սոցիալիզմի լավագույն քարոզները։

1847 թվականին Ֆրանսիայում ու Յեվրոպայում տարածված ճգնաժամի հետ կապված են 1848 թվի հունիսյան որերը, վորոնց մասին Մարքսը գրում եր, թե «Դա ժամանակակից հասարակությունը ճեղքող յերկու դասակարգերի միջև յեղած առաջին կռիվն է»։ Հետևյալ ճգնաժամը 1856 թվին զարկ տվեց բանվոր դասակարգի կազմակերպմանը յեվրոպական մի շարք պետությունների մեջ։

Իսկ 1866 թվականին ճգնաժամի որերին առաջին Ինտերնացիոնալը, վորի մասին խոսք կլինի հետագայում, հսկայական բեղմնավոր գործունեություն զարգացրեց։

Ճգնաժամերը մինչև այսոր ել շարունակվում են կապիտալիստական հասարակության մեջ։ Կապիտալիստների բոլոր ջանքերը, զանազան միությունների միջոցով առնել ճգնաժամերի ու գործազրկության առաջը, վոչ մի հաջողություն չունեցան։ Մեզ անհրաժեշտ է հիմնովին ծանոթանալ կապիտալիստական հասարակության այդ յուրահատուկ համաճարակի հետ, վորովհետև դա մեզ կոգնի հասկանալ վոչ միայն «պրոլետարիատի և բուրժուազիայի միջև տիրապետության համար տարված առա-

ջին մեծ կոիվը», (հունիսյան որերը), այլ և բանվորական շարժման զարգացման հետագա ամբողջ ընթացքը։

Արդեն կապիտալիստական տնտեսության արշալույսին, մենք հանդիպեցինք գործազուրկների բանակին։ Կապիտալիզմը սրով ու հրով դիմավորեց այդ բանակին։ Սակայն հետզհետե ամբողջ աշխարհը գտավ, վոր գործազրկությունը վոչ թե բանվորների մեղքն է, այլ նրանց դժբախտությունը, և յեթե կա մեկը, վոր մեղավոր է դրա մեջ, ապա դա գոյություն ունեցող հասարակական կարգերն են։ Այն Անգլիայում, ուր Հենրիխ VIII-ը որենք հրատարակեց գործազուրկ շրջմոլիկներին ծեծելու և կախելու մասին, 300 տարի հետո կառավարական հանձնաժողովը գործազրկության մասին հատուկ հետազոտություն կատարեց և նա հարկադրված յեղավ ընդունել, վոր «տնտեսական կյանքի խանգարման ժամանակ ուժեղացող աշխատանքի բացակայության դժբախտությունը ներկա ժամանակի առեվտրի ու արդյունաբերության մշտական յերեվույթն է»։

Քննենք այդ մշտական յերեվույթի պատճառները։

Ա) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մարդը արտադրության գործիքներից ոգտվող հասարակական մի կենդանի է։ Մենք գիտենք, վոր դեռ նախնական ժամանակներում ձուկ բռնելու համար ձկնորսն ոգտվում եր կարթից, իսկ վորսորդը գազաններին ու թռչուններին վորսալիս՝ ոգտվում եր աղեղից ու նետից։ Վոչ մի հասարակություն արտադրության գործիքներն այն աստիճան չզարգացրեց, ինչպես այդ արեց կապիտալիստական հասարակությունը։ Զուր չէ, վոր մեր ժամանակը գոլորշու և ելեքտրականության դար են անվանում։ Ամբողջ աշխարհը յերկաթուղիներով է պատած, վորոնց վրայով գնացքներն են սլանում, ծովերի վրա հանդիստ ու վեհորեն հսկա նավեր են շրջում, իսկ լեռներից վեր ոդանավեր են սավառնում։ Ամեն որ, ամեն ժամ, նոր մեքենաներ և արտադրության նոր գործիքներ են հնարվում։

Մեքենան փոխարինում է մարդու աշխատանքը։ Ամեն մի մեքենա տասնյակ ու հարյուրավոր բանվորներ է դուրս շպրտում։ Յերբ ջուլհակային գործում մեքենա մտցրին, հազարավոր ջուլհակներ անգործ ու անհաց մնացին։ Բանվորական շարժման ծանոթ է ջուլհակների հակայական ապստամբություններն Անգլիայում, Գերմանիայում։ Գերմանական ջուլհակների յերգը Ռուսաստանի բանվորներին ել հասավ։

Այն, ինչ պատահեց ջուլհակներին, հետագայում պատահեց արտադրության բոլոր ճյուղերի բոլոր բանվորներին։ Ամեն մի նոր մեքենա գործազուրկների բանակն է ավելացնում։ Իսկ մեքենաներն անվերջ հնարվում են ու կատարելագործվում։ Այդպիսով արտադրության գործիքների մշտական զարգացումը բերում է իր հետ աշխատանքի **պահեստի** բանակի մշտական աճում, այսինքն գործազուրկների բանակն է ավելացնում։

Մեքենան հնարավորություն է տալիս նույնպես, փոխարինել տղամարդ բանվորներին կանանցով ու յերեխաներով։ Կապիտալիստական արտադրության յեղանակը հիմքից քանդեց հին գյուղացիական ընտանիքը։ Նա ստիպեց ամբողջ ընտանիքին— հորը, մորը, յերեխաներին՝ ծառայել ագահ կապիտալին։

Դեռ յոթանասուն տարի սրանից առաջ մի ֆաբրիկանտ հետևյալ խոսքերով բնորոշեց մեքենայի նշանակությունն իր համար՝ «Յուրաքանչյուր բանվորի աշխատանքը մեքենայի մոտ կայանում է վոչ թե նրա մեջ, վոր բանվորն ինքն ստեղծի վորևե բան։ Վոչ։ Նա պետք է միայն հետևի մեքենայի աշխատանքի կանոնավորության, իսկ դա յերեխան ել կորող է անել։ Մասնագետ բանվորները հիմա այնքան ել կարևոր չեն։ Առաջ յուրաքանչյուր վարպետի մոտ չորս տղա եյի պահում այժմ, մեքենայի շնորհիվ, հասակավոր բանվորների թիվը յես պակասեցրի 1500-ից մինչև 750-ը։ Իմ ոգուտը (շահը), դրա հետևանքով, զգալի չափով մեծացավ»։

Ճիշտ է մեքենայի զարգացումը նպաստում է ապրանքների արագ արտադրության և ապրանքները լայն խավերին մատչելի յեն դառնում։ Արդյունաբերությունը զարգանում է պահանջի զարգացման հետ միասին։ Ճիշտ է նույնպես այն, վոր կապիտալիստական հասարակությունն արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր ստեղծեց,—ճյուղեր, վորոնց մասին մեր պապերն անգամ չեյին մտածում։ Վերջապես, մեքենաների զարգացումը հսկայական մեքենայաշինարարական արդյունաբերություն ստեղծեց, վորը գործ է տալիս միլիոնավոր բանվորների։ Կապիտալիզմի որով զարգացավ մետալուրգիան (մետաղագործությունը), կապիտալիստական հասարակության այժմյան արդյունաբերության գլխավոր ճյուղը։ Սակայն, պետք է հիշել, վոր յուրաքանչյուր նոր հնարված մեքենա, վորոշ ժամանակի ընթացքում, աշխա-

տավորների վորոշ քանակ թողնում և առանց գործի։ Այդ բանվորները պահեստի բանակի մեջ են մտնում ու իրենց հերթին են սպասում։ Նրանց հերթը պետք է գա.—չի վոր արդյունաբերությունն անընդհատ զարգանում է, բայց մինչև վոր նրանք գործ կգտնեն, նոր մեքենան արդեն «ավելորդ ձեռքերի» մի նոր խումբ դուրս կշպրտի։ Մի կախարդական շրջան և ստեղծվում վորից աշխատանքի պահեստի բանակը, կապիտալիստական կարգերի պայմաններում, յերբեք չի կարող յելք գտնել։

Բ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Դեռ մեր նախահայրերը շատ լավ պիտեյին ու հետաքրքրվեյին հաշվի առնում միասին աշխատելու նշանակությունը։ Մեր նախահայրերը կոմունաներով եյին վորսում վայրենի գազաններին, կոմունաներով էլ կռվում եյին թշնամական ցեղերի դեմ։ Սակայն յերբեք մարդիկ չկարողացան ոգտագործել աշխատանքի հասարակական կազմակերպությունն այնպես, ինչպես այդ արեց կապիտալիստական հասարակությունը։ Արդեն իրենց գոյության արշալույսին, յերբ դեռ ժամանակակից կապիտալիստների հայրերը գոլորշու և էլեքտրականության գաղտնիքները չգիտեյին, նրանք բանվորներին մեծ արհեստանոցների մեջ հավաքեցին, վորպեսզի ոգտվեն զանազան բանվորների մեջ յեղած աշխատանքի բաժանումից։ Աշխատանքի բաժանումը մեծ ենթադիտ յե տնտեսում, նա արտադրության համար անհրաժեշտ ժամանակի քանակը կրճատում է։ Հարյուր դերձակները, յերբ նրանցից ամեն մեկը մի զգեստ է պատրաստում, կտան ավելի քիչ քանակությամբ զգեստներ, քան նույն այդ հարյուր դերձակները, յերբ նրանք աշխատանքը բաժանեն իրար մեջ։ Աշխատանքի բաժանման ժամանակ յուրաքանչյուրն արագ ու հեշտ է ձեռքը վարժեցնում իրեն բաժին ընկած աշխատանքի ժամանակը կատարելու համար։ Ժամանակակից մեքենաները հնարավորություն տվին աշխատանքի բաժանումը ծայր աստիճանին հասցնելու։ Մեր զգեստը ամերիկական արհեստանոցում տասնյակ ձեռքերի միջոցով է անցնում։ Յուրաքանչյուր բանվոր զգեստի ամենաչնչին մասն է պատրաստում։ Դրա հետևանքով արտադրությունն այնքան է արագանում, վոր Ամերիկան պատրաստի զգեստեղենի շուկայում հեշտությամբ և մրցում բոլոր պետությունների հետ։

Բայց աշխատանքի կազմակերպության ամեն մի նոր կատարելագործումը կապիտալիստին թույլ է տալիս բանվորներից դոմանց փոխարինել կանանցով և յերեխաներով՝ իսկ վոմանց փողոց շպրտել։ Կարճ ասած, աշխատանքի կազմակերպման կատարելագործումը նույն հետևանքներն են ունենում, ինչ վոր տարելագործումը նույն արտադրության գործիքների կատարելագործումը։ Անկասկած սխալ կլիներ կարծել, թե արտադրության տեխնիկայի զարգացումը միշտ և ամեն պարագայում ինչպես և հասցնում բանվորներին։ Ամենևին։

Այն ժամանակը, յերբ բանվորները մեքենաները վնասացնում ու ֆաբրիկաները այրում եյին, շատ վաղուց է անցել։ Այժմ բանվորների համար պարզ է, վոր չարիքը մեքենայի մեջ չէ, այլ մեր հասարակության կազմակերպության մեջ։ «Ինքը մեքենան,—գրում է Մարքսն իր «Կապիտալի» մեջ, բանվորական ժամերը կրճատում է, իսկ նրա կապիտալիստական գործածության ժամանակ նա աշխատանքի ժամերը յերկարացնում է։ Ինքը մեքենան աշխատանքն ավելի հեշտացնում է, իսկ կապիտալիստական արտադրության ժամանակ նա աշխատանքի լարվածությունը ծայր աստիճանին է հասցնում։ Մեքենան մարդու հաղթանակն է բնության վրա։ Կապիտալիզմի ժամանակ նա տարկացնում է մարդուն բնությանը։ Մեքենան արտադրողին հարստացնում է, իսկ նրա կապիտալիստական գործունեության ժամանակ բանվորին զարձնում է մուրացիկ։ Յեթե մեքենաներն ու ֆաբրիկաներն արագ են զարգանում։ Յեթե կանն այն է, վոր այդ մեքենաները պատկանում են վոչ թե հասարակության, այլ մասնավոր մարդկանց։ Կապիտալիզմի ժամանակ, այսինքն այն հասարակակարգի, յերբ հասարակական արտադրության հակա գործիքները սեփականատերերի փոքրիկ խմբակին են պատկանում, զարգացող տեխնիկան և արտադրության կազմակերպությունը բարելավումը իրենց հետևից բերում, ուժեղացնում են գործազրկությունն իր բոլոր ուղեկիցներով,—սովը, մերկությունը և վաղաժամ մահը։

Գ) ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ՅԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիզմը յերբեմն այնպիսի մամենտներ է ապրում, յերբ գործազրկության գեպակները միանալով՝ կազմում են մի

ամբողջ հզոր դետ և սպառնում են հիմքից քանդել կապիտալիստական հասարակության շենքը։ Այդ պատահում է **ճգնաժամի** միջոցին։

Առաջ է գալիս ճգնաժամը և միանգամից կանգ է առնում ամբողջ արդյունաբերական կյանքը։ Քուրանները հանդչում են, դաշտահները լռում։ Ֆաբրիկաներն ու գործարանները փակվում են։ Դեռ յերեկ աղբյուրի նման հոսող կյանքը՝ կանգ է առնում ու տիրում է մեռելային լռություն։ Ճգնաժամերի ժամանակ գործաղուրկների թիվը հսկայական, աներևակայելի չափերի է հասնում։

Վորտեղից են առաջանում այդ ճգնաժամերը։ Այդ հարցին Կաուցկին հետևյալ կերպով է պատասխանում. «Ժամանակակից շուկաները ցնցող ժամանակակից խոշոր ճգնաժամերը գերարտադրության հետևանք են, վոր իր հերթին արդյունք է համաչափության բացակայության, իսկ վերջինը անհրաժեշտորեն կապված է ապրանքային արտադրության հետ։ Գերարտադրությունն այն իմաստով, վոր ավել է արտադրված, քան հարկավոր է, կարող է առաջ գալ արտադրության ամեն մի յեղանակի ժամանակ։ Սակայն, ինքնին հասկանալի է, վոր նա վնաս չի տալ, յեթե արտադրողն իր սպառողական կարիքների համար է աշխատում։ Յերբ, որինակի համար, գյուղացի ընտանիքն ավել հաց հավաքի, քան նրան հարկավոր է, ապա նա այդ ավելցուկը կպահի վատ բերք տվող տարվա համար, կամ յերբ նրա պահեստները լեցուն լինեն, նա այդ ավելցուկով կսկսի անասուններին կերակրել և կամ՝ ծայրահեղ դեպքում դուրս կթափի։ Այլ դրություն է ապրանքային արտադրության ժամանակ։ Այս տեղ վոչ վոք իրեն համար չի արտադրում, յուրաքանչյուրն ուրիշների համար, յուրաքանչյուրն այն, ինչ վոր նրան հարկավոր է, պետք է գնի։ Բայց ամբողջ արտադրությունը բոլորովին համաչափված չե, ընդհակառակը—յուրաքանչյուր արտադրող ինքը պետք է գլխի ընկնի, թե ինչ չափով է մեծ իր կողմից արտադրվող ապրանքների պահանջը։ Մի ուրիշ կողմից՝ ապրանքային արտադրության ժամանակ վոչ - վոք վոչ ոչ բան չի կարող գնել՝ առանց նախապես իր ապրանքը ծախելու։

Յուրաքանչյուր ֆաբրիկանտ իր ռիսկով է աշխատում։ Շահի հետևից ընկած նա ոգևվում է արտադրության ժամանակակից գործիքներից և շուկա յե հանում անթիվ անհամար ապրանքներ։ Բայց «շուկան արտադրության նման արագ չի կա-

բող զարգանալ ու կոնֆլիկտը (ճգնաժամը) անխուսափելի յե դառնում» (Ֆր. Ենգելս)։

Ճիշտ է, կապիտալիզմն իր զարգացման ընթացքում նորանոր շուկաներ է բանում։ Նա մուտք է գործում յերկրագնդի բոլոր անկյունները, բայց նոր յերկրներն ել են ընկնում շահի հետևից և դրա հետևանքով, արտադրության զարգացումը շուկայի զարգացման առաջն է առնում։

Դեռ յոթանասուն տարի առաջ Մարքսն ու Ենգելսը ճգնաժամը «Կոմունիստական Մանիֆեստի» մեջ նկարագրում եյին վորպես «հասարակական արտադրական հսկայական ուժերի ընդվզում ընդդեմ մասնավոր սեփականության նեղ շրջանակների»։ Այս ժամանակամիջոցի ընթացքում արտադրական ուժերն ավելի յեն զարգացել, իսկ սեփականության շրջանակները սեղմվել են։ Ֆաբրիկանտների միջև յեղած կռվում հաղթեցին խոշորները, ուժեղները։ Փոքրերն ընկան աշխատանքի բանակի շարքերը։ Ֆաբրիկանտների թիվը փոքրացել ել՝ բանվորների թիվը ավելացել, իսկ անիշխանությունը արտադրության մեջ թագավորում եր առաջվա պես։ Մրագրի բացակայությունն, ագահությունը հասցնում եր գեր արտադրության, այսինքն ճգնաժամին։

Յուրաքանչյուր նոր ճգնաժամի միջոցին գործաղուրկությունը ժամանակակից հասարակարգի սարսափների մասին և աղաղակում։ Յուրաքանչյուր նոր ճգնաժամի միջոցին կապիտալիստական հասարակությանն ուղեկցող սեվ ստվերը ավելի պայծառ, ավելի ցայտուն կերպով է գծագրվում։ «Ժամանակակից բուրժուական հասարակությունը,—կարդում ենք «Կոմունիստական Մանիֆեստի» մեջ.—վորը արտադրության ու փոխանակության հզոր միջոցներն է ստեղծել, նման է այն կախարդին, վորը չի կարողանում հաղթահարել իր իսկ կանչած ստորգերկրյա ուժերը»։ Այդ խոսքերը գրվեցին 1847 թվին, յերբ տնտեսական ճգնաժամը տարածվել եր Ֆրանսիայում, իսկ հետո ամբողջ Յեվրոպայում։

Այժմ մի փոքր կանգ առնենք այն հեղափոխության վրա, վորը կատարվեց 1847 թվի ճգնաժամից հետո։

Նա սկսվեց, ինչպես ասված է արդեն, 1848 թվի փետրվարի 22-ին։ Փողոցում կռվում եյին բանվորներն ու աշխատավոր մասսաները։ Իշխանությունը սակայն, իր ձեռքն առավ բուրժուազիան։ Նա իր մեջ բաժանեց մինիստրական աթոռներն ու հանդստացավ, ասելով թե հանրապետություն լինելու կամ

չինելու խնդիրը կվճռի սահմանադիր ժողովը։ Բայց փետրվարի 24-ին բանվորների ներկայացուցիչ Ռասպայլը, բանվորների անունից, հայտարարեց կառավարության. «Տալիս յեմ ձեզ յերկու ժամ ժամանակ։ Կամ հանրապետություն հայտարարեք, կամ մենք ձեզ կտապալենք»։ Ժամանակը գնա չեր լրացել, բայց բոլոր պատերին փակցված եր հետևյալ գրությունը.

«Ֆրանսիական հանրապետություն։ Ազատություն, հավասարություն և յեղբայրություն»։

Ել ավելի հետաքրքիր դեպք տեղի ունեցավ փետրվարի 25-ին։ Աշխատավորների պատգամավորները ժողովրդի սոցիալական պահանջները հայտնելու համար անցնում են այն սենյակը, որտեղ կառավարությունն եր նստած։ Այդ պատգամավորության կազմի մեջ եր նայեվ բանվոր Մարշը։ Նա հանձնեց մինիստրներին, որ լիազորված և հրապարակում հավաքված ժողովրդի կողմից ու հրացանը հատակին խփելով՝ նա հանձնեց «աշխատանքի կազմակերպության և աշխատանքի իրավունքի» պահանջները պարունակող պետիցիան (այդ պահանջների պարզաբանումը տես՝ 4 գլուխ)։ Մարշը հայտնեց, որ ժողովուրդը չի հավատում կառավարության մտադրություններին, և չի հեռանա այստեղից, մինչև որ աշխատանքի իրավունքը, ապահովող դեկրետը չհրատարակվի։

Մարշին ուղեցավ ժամանակավոր կառավարության նախագահ Լամարտինը և փորձեց շոյող ձևով ու դեղեցիկ խոսքերով ստիպել նրան հրաժարվել իր պահանջներից։ Բայց Մարշը կտրուկ կերպով պատասխանեց. «Ձեզ այնքան ել շուտ չի հաջողվիլ քնեցնել ինձ ձեր զատարկախոսությամբ։ Իմ լեզուն այստեղ ամեն ինչ կթափանցի կրակի լեզու է»։ Այդ ասելով նա ձեռքը խփեց հրացանի փողին ու ավելացրեց։ «Այլ բան մեր բանակցությունների մեջ լինել չի կարող»։

Այդ որը հրատարակվեց հետևյալ դեկրետը. «Ֆրանսիական հանրապետության կառավարությունը պարտավորվում է աշխատանքով ապահովել բոլոր աշխատավորներին»։

«Նա պարտավորություն է վերցնում իր վրա զբաղմունք տալ պետության բոլոր քաղաքացիներին»։

«Նա ընդունում է, որ բանվորներին իրենց աշխատանքին համապատասխան վարձատրություն ստանալու համար, անհրաժեշտ է միությունների մեջ կազմակերպվել»։

Ինքնին հասկանալի յե, որ կառավարությունն իր խոստումը չկատարեց և չեր ել կարող կատարել։ Աշխատավորների դրությունն աշխատանքով ապահովելու համար անհրաժեշտ եր վերացնել կապիտալիստական կարգերն ու մտցնել սոցիալիզմը։ Այդ խնդիրը բուրժուական կառավարության հաշիվների մեջ չկար։ Այնուամենայնիվ պրոլետարիատն այդ որերն իր հաղթանակի որերը կարող եր համարել։ Նա կառավարությանն իր կամքն եր թելադրում։

Բուրժուազիան վոխ պահեց ու սկսեց մտածել այն մասին, թե ինչպես հանի իր վրեժը բանվոր դասակարգից։ Ինարիգներով լի մի խուլ պայքար սկսվեց։ Կառավարությունը կարծես զիջում եր բանվորներին, բայց ամեն անգամ մի վորևիզ նոր բան եր պատրաստում։ Բանվորներն աշխատանքի կազմակերպություն եյին պահանջում։ Կառավարությունը համաձայնեց։ Նա աշխատանքի հանձնաժողով կազմակերպեց, նրան հրաշալի շենք հատկացրեց, բայց վոչ մի կոպեկ փող չտվեց։ Բանվորները պահանջում եյին ազգային արհեստանոցներ կազմակերպել։ Կառավարությունը համաձայնեց, բայց ազգային արհեստանոցների տեղ տաժանակիր տների նման մի բան կազմակերպեց։

Հետաքրքրական դեպք պատահեց ապրիլի 16-ին։ Բանվորների ահագին բազմություն հավաքվեց Մարսյան դաշտում, վորպեսզի ազգային զվարդիայի համար իր ներկայացուցիչներին ընտրի։ Կայծակի արագությամբ Փարիզում լուր և տարածվում, վոր բանվորները պատրաստվում են տապալել կառավարությունը։ Կառավարությունը բացառիկ արագությամբ վոտքի յե կանգնեցնում իր կողմնակիցներին և դեռ գրանով չբավականանալով՝ զորքեր և կանչում գավառից։ Բանվորները խաղաղ կերպով ժողով եյին անում։ Միայն յերեկոյան իմացան, որ քաղաքում բուրժուական դեմոնստրացիաներ են կատարվում, «Կորչի Լուի Բլանը, Ալբերը, Ռասպայլը, կորչին սոցիալիստները» լոզունգներով ու բացականչություններով։

Այդ պրովոկացիան կառավարության հարկավոր եր զավոից զորքերը Փարիզ քաշելու համար, վորովհետև նա նրանց ավելի յեր հավատում, քան Փարիզի զինվորներին։ Բուրժուազիան շատ զոհ եր իր խաղից. նա ստացավ այն բանակը, վորի վրա հենվելով՝ կարող եր կռվել բանվորների դեմ։ Մայիսի 4-ին հավաքվեց Ֆրանսիայի «Սահմանադիր ժողովը»։ Բուրժուազիան այնտեղ բացարձակ մեծամասնություն ուներ։ Նա սկսեց խոսել բարձր ու վստահ։ Մինիստրներից մեկը սահմանադիր ժողովի

ամբիոնից հայտարարեց՝ «խնդիրն այն է, որպեսզի աշխատանքը վերադառնա իր հին պայմաններին». այսինքն որպեսզի բանվորներից խլվեն այն, ինչ որ նրանք նվաճել էին հեղափոխության ժամանակ։ Մայիսի 15-ին բանվորները փորձեցին ճնշում գործ դնել բուրժուական պառլամենտի վրա։ Նրանք փողոցային ցույց կազմակերպեցին։ Ցույցը մտավ պարլամենտի շենքը։ Գործը տխուր վերջացավ։ Բանվորների ղեկավարներին ձերբակալեցին. ցուցարաններին ցրեցին, իսկ սահմանադիր ժողովը ավելի մեծ յեռանդով դուրս յեկավ բանվորների դեմ։

Հունիս ամսին կառավարությունը կռվի բացարձակ կոչ արեց բանվորներին։ Բանվորների ճնշման տակ կառավարությունը հարկադրված յեղավ ազգային արհեստանոցները բանալ։ Մենք արդեն ասացինք, որ ազգային արհեստանոցների անվան տակ կառավարությունը տաժանակիր տներ էր կազմակերպել։ Բայց այդ տներում գործազուրկներն այնուամենայնիվ, որեվեն աշխատավարձ գտնում էին։ (Պետք է միշտ հիշել, որ հեղափոխությունը կատարվում էր տնտեսական ճգնաժամի պայմաններում)։ Յեվ ահա կառավարությունը դեկրետ է հրատարակում, ամբողջ բանվորական խմբերը ազգային արհեստանոցներից հեռացնելու մասին։ Կառավարությունը, ցանկանում էր ինչ գնով էլ ուզում է լինի, բանվորներին կռվի կանչել։ Կռիվը սկսվեց։

Թե ինչպես էր ընթանում կռիվը, պատմենք Մարքսի խոսքերով.—«Բանվորներին ընտրություն չէր մնում։ Նրանք կամ պիտի սովից մեռնեին կամ էլ դուրս գային կռվի։ Հունիսի 22-ին նրանք մեծ ապստամբությամբ պատասխանեցին ժամանակակից հասարակությունը ճեղքող երկու դասակարգերի առաջին կռվով»։ Դա կռիվ էր բուրժուական կարգերի պահպանման կամ վերչնչացման համար։ Հանրապետությունը ծածկող թաղանթը պատռվեց։ Հայտնի յե, թե ինչպես բանվորները չտեսնված քաջությամբ ու հանճարով, առանց ընդհանուր ծրագրի, առանց միջոցների և մեծ մասամբ անզեն, հինգ որվա ընթացքում կըռվում էին բանակի, թռուցիկ գվարդիայի, Փարիզի ու գավառից յեկած ազգային գվարդիաների դեմ։ Հայտնի յե, թե ինչպես բուրժուազիան չտեսնված գազանություններով վարձադրեց իր կրած մահացու վախի փոխարեն, և 3000 ավելի գերիներ գնդակահարեց»։

Յեվ այսպես, բանվորները կռվում ու ընկնում էին։ Բան-

վորները բոլորովին մենակ էին այդ կռվում։ Նրանց վոչ վոք չոգնեց։ Քաղաքի ու գյուղի այն աշխատավոր մասսաները, որոնք չորս ամիս առաջ բանվոր դասակարգի հետ էին գնում, հունիսյան որերին թողին նրանց։ Բայց բանվոր դասակարգը տվեց փայլուն և ուժեղ կռիվներից մեկը։ Իր դեմ ունենալով ամեն տեսակի զենքով զինված զորքեր նա գրեթե անզեն, կարողացավ հինգ որ դիմանալ բարիկադների վրա։

Հունիսյան դեպքերը ունեն ավելի մեծ նշանակություն, քան դա կարող է թվալ առաջին հայացքից։

Մենք հիշում ենք, թե ինչպես էին գործում բանվորները 1789 թվին. Նրանք բուրժուազիայի հետևից էին գնում, նրա դրոշակի ու ղեկավարության տակ էին կռվում։ Մենք գիտենք, թե որքան մութ ու անվորոշ էին 1848 թվի սկզբին բանվորների առաջադրած պահանջները՝ «աշխատանքի իրավունք» և «աշխատանք կազմակերպություն»։ Կռվի ընթացքում պատկերը բոլորովին փոխվեց։ Կապիտալի ու աշխատանքի հարաբերությունները ժողովրդական ապստամբության պայծառ կրակի տակ միանգամից լուսավորվեցին։

Բայց նախ քան այդ հեղափոխության խորին իմաստը պարզաբանելը՝ մեզ պետք է մի քանի խոսք ասել հանրապետության մասին։ 1848 թվին բանվորներին թվում էր, թե հանրապետությունն ինքն իրեն մի սրբազան, ամենքին ու յուրաքանչյուրին արդարություն շնորհող մի բան է։ 1848 թվին կատարվեց առաջին լուրջ փորձը բուրժուական հանրապետության եությունը վերկացնելու համար։ «Կոմունիստական Մանիֆեստի» մեջ Մարքսն ու Ենգելսն ասում էին «Ժամանակակից պետական իշխանությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ բուրժուական դասակարգի գործոց գործադիր կոմիտեն։ Դեմոկրատական բուրժուական հանրապետության մեջ, չնայած բոլոր դեղեցիկ խոսքերին ժողովրդի ու ազատության մասին, փաստորեն ամբողջ իշխանությանը բուրժուազիային է պատկանում, պետական հիմնարկությունների ամբողջ ցանցը, ամբողջ պետական կառուցվածքը տիրող դասակարգի շահերին է ծառայում։ Այն, ինչ որ մարդիկ ամբողջ ժողովրդի, բոլոր դասակարգերի կառավարության տեղ են դնում բուրժուական դասակարգի գործադիր կոմիտեն է, որը «ընդհանուր ընտրողական իրավունքի միջոցով է տիրում» (Ֆր. Ենգելս)։

Ահա թե ինչպես է նկարագրել Կարլ Մարքսը հունիսյան

որերի վախճանը։ «Յեղբայրությունը՝ —յեղբայրությունը յերկու հակառակ դասակարգերի, վորոնցից մեկը շահագործում է մյուսին,— այդ յեղբայրությունը, վոր փետրվարին հայտարարվեց ու խոշոր տառերով գրվեց Փարիզի ճակատին ու յուրաքանչյուր բանտի վրա, իր իսկական, վոչ շինծու պառոդային արտահայտությամբ վոչ այլ ինչ է, յեթե վոչ քաղաքացիական կռիվ—քաղաքացիական կռիվ եր—ամենա սոսկալի ձևով, կռիվ կապիտալի ու աշխատանքի։ Այդ յեղբայրությունը փռվում եր հունիսի 25-ի յերեկոյան Փարիզի բոլոր պատուհանների առաջ, յերբ բուրժուազիայի Փարիզը հրավառված եր, այդ նույն ժամանակ պրոլետարիատի Փարիզը այրվում, արյունաքամ եր լինում ու մեռնում հեծեծանքով»։

Յեվ այսպես, հունիսյան որերը ցույց տվին, վոր կապիտալիստական հասարակության մեջ յեղբայրություն չկա. վոր բուրժուական հանրապետությունը՝ դա քաղաքացիական կռիվ է կապիտալի ու աշխատանքի միջև։ Կապիտալը հաղթեց՝ —վայ պրոլետարիատին, վայ ամբողջ հասարակության, ամբողջ մարդկության։

1847 թվականի ճգնաժամը ցույց տվեց, վոր կապիտալիստական հասարակությունը չի կարող հպթահարել իր կյանքի կոչած ուժերը, վոր կապիտալիստների ձեռքում յեղած արտադրության բոլոր գործիքները ժողովրդին վոչ թե բախտավորություն, այլ տանջանք են պատճառում։ Նա ապացուցեց «Կոմունիստական Մանիֆեստի» խոսքերի ճշտությունը, թե «Բուրժուական հասարակարգը շատ նեղ է իր խորքերում ստեղծված բոլոր հարստությունները տեղավորելու համար»։ 1848 թ. դեպքերը ցույց տվին, վոր հին հակասող ձևերը քանդելու և նոր հասարակություն կառուցելու ընդունակ դասակարգն արդեն ապստամբվել է։

Նոր դասակարգի դերն ու նշանակությունը հասկանալու համար, վորը ինքնուրույն կռվի յեր դուրս յելել հանուն աշխատանքի ազատագրության՝ անհրաժեշտ է հիշատակել մի պարագա, վորը տեղի ունեցավ 1848 թվականից հետո։ Հունիսյան դեպքերի ժամանակ պրոլետարիատը մենակ եր կանգնած իր բոլոր թշնամիների դիմաց։ Հենց վոր բանվոր դասակարգը ջարդվեց, քաղաքի ու գյուղի աշխատավոր տարրերն սկսեցին ափսոսել այդ մասին։ Նրանք զգային, վոր իշխանությունը բանկիրներն են վերցրել իրենց ձեռքը։ Նրանք սկսեցին կռվի պատրաստվել բանկիրների դեմ և ուղիղ մի տարի հետո, նրանք իրենք—1849 թվին հունիսին—մի զինված ցույց կազմակերպեցին։ Բայց բանվոր դասակարգը ուժասպառ եր յեղել. նա արյունաքամ յեղավ 1848 թվին։ 1849 թվի դեպքերը կատակերգություն եյին միայն, ուրիշ վոչինչ։ Ռեակցիան ճնշեց հեղափոխությունն ու նրա բոլոր նվաճումները։ Գործը վերջացավ նրանով, վոր Թզուկ Նապոլեոնը դարձավ Ֆրանսիայի ընդապետ։

Համեմատելով այդ յերկու դեպքերը,—1848 և 1849 թվականների դեպքերը,—Մարքսն ասում է. «Յեթե 1848 թ. հունիսի 22-ը հեղափոխական պրոլետարիատի ապստամբությունն եր, ապա 1849 թվի հունիսի 13-ը՝ դեմոկրատական մանր-բուրժուների ապստամբությունն եր։ Այդ ապստամբություններից յուրաքանչյուրն այն դասակարգի կլասիկ արտահայտությունն եր, վորը նրա կրողն է հանդիսացել»։

1848 թ. հունիսյան որերը ուժով ու յեռանդով լի յերիտասարդ բանվոր դասակարգի շարժման արտահայտությունն եր։ 1849 թ. հունիսյան որերը պատմության կողմից խորտակման դատապարտված մանր-բուրժուազիայի գործն եր։ «Բոլոր դասակարգերից,—կարդում ենք «Կոմունիստական Մանիֆեստի» մեջ,—վորոնք այժմ դուրս են գալիս բուրժուազիայի դեմ, դրանցից միայն պրոլետարիատն է, վոր իրոք արմատական հեղաշրջման է ձգտում»։ Յեվ «Մանիֆեստը» յեզրափակում է. «Պրոլետարիատը՝ հասարակության ամենաստորին դասակարգը, կարող է բարձրանալ և հասակով մեկ կանգնել՝ միայն ժամանակակից հասարակության արմատական վերակազմության միջոցով»։

Այդ յեզրափակող խոսքերի մեծ ճշմարտությունն աշխարհին ցույց տվեց 1848 թ. հեղափոխությունը։ Հեղափոխության ընթացքի բերումով Ֆրանսիական պրոլետարիատը հարկադրված եր կռվի դուրս գալ հասարակության արմատական վերակազմության համար։ Մշուշապատ պահանջների տեղը գրավեց կռիվը՝ հանուն պրոլետարիատի դիկտատուրայի։

VI

ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ՑԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Բանվոր դասակարգի դիկտատուրայի համար կռվելու գաղափարը ծագեց բարիկադների վրա։ Կապիտալն ուժեղ և վնասակար միայն սվիններով, որոնց օգնությամբ նա ջախջախեց հունիսյան ապստամբությունը։ Նրա ուժը կայանում է նրանում, որ նա իր իշխանությունը պաշտպանում է իր արտադրության տակ յեղած բոլոր միջոցներով։ Կապիտալի գլխավոր հիմունքները մասնավոր սեփականությունը և վարձու աշխատանքն են։ Այդ հիմունքները կապիտալիստական հասարակության մեջ պաշտպանում են դպրոցական ուսուցիչը, համալսարանի ուսուցչապետը, լրագրական աշխատողը և գիտնականը։ Կապիտալը կարողանում է օգտվել կինեմատոգրաֆի ժապավենով ու գեղարվեստական գրվածքներով։ Կապիտալի իշխանությունը տապալելու համար բավական չէ միայն կրակի ճակատամարտը։ Աշխատավորների հաղթանակի նախապայմանը կանոնավոր նախապատրաստական աշխատանքն է՝ գաղափարական ճակատում։

Բանվոր դասակարգի մեծ ուսուցիչները շատ լավ յեին հասկացել կապիտալի գաղափարական իշխանության դեմ կռվելու կարեվորությունը։ Նրանք շատ լավ հաշիվ յեին տալիս իրենց, թե քանի դեռ բուրժուական միտքը իշխող է լայն մասսաների ուղեղի վրա, չի կարելի յերազել այն լուրջ ու յերկարատև պայքարի մասին, առանց որի հաղթանակն անկարելի յե։ Կրակոտ լեզվով գրված «Կոմունիստական Մանիֆեստը» միայն առաջին հարձակումն եր, որին հետևեց կապիտալի գիտական գիրքերի կանոնավոր ռմբակոծումը։ Այս պայքարում Մարքսը, Ենգելսը, նրանց աշակերտներն ու գինակիցները հսկայական յեռանդ դրսևորեցին։ Նրանք առանց հանգստության աշխատում եյին, չնայած այն բոլոր հալածանքներին, որոնց յենթարկվում եյին նրանք կապիտալի սպասավորների կողմից։ Յերկրե-յերկիր թափառելով, հալածվելով կապիտալի վոստիկանության կողմից՝ նրանք շարունակում եյին սոցիալի հարվածներ հասցնել փորձված ու վարժված թշնամուն։

Մարքսն ու Ենգելսը մեծ աշխատություններ շատ են թողել մեզ համար։ Բոլոր յերկրների բանվորները մինչև այսոր ել հաղթանակելու համար այդ աշխատություններով են սովորում։ Այդ գրքերի շարքում բացառիկ տեղ է գրավում Մարքսի «Կապիտալը», որը լույս է տեսել 1867 թվին։

Այդ գրքի ուժը նրանումն է, որ Մարքսը նրա մեջ պատեց բուրժուական շահագործման գաղտնիքները վարագուրող պատմուճանը, սեվ փարաջաները և առհասարակ բոլոր ծածկոցները։ Մարքսն իր «Կապիտալ»-ի մեջ ամբողջ աշխարհի առաջ բացեց հարստությունների նախնական կուտակման պատմությունը։ Նա ապացուցեց, որ դրա աղբյուրը գյուղացիների կողոպուտն է, վոչնչացումն է, Ամերիկայի վոսկու և արծաթի հանքերի մեջ ազգաբնակչության սարսափելի սարսափելի ոչնչացումն ու կենդանի տեսակի մեջ թաղելն է և վերջապես կողոպտված գյուղացիներին աշխատավարձի սարսուռ դարձնելն է։

Մարքսն իր «Կապիտալ»-ի մեջ զարմանալի պարզությամբ վարոշում է հիմնական գիծը կապիտալիստական տնտեսության, այն է՝ ապրանք արտադրողների տնտեսության։ Անցյալ ժամանակներից տարբերվելով՝ ժամանակակից տնտեսությունը վարձու աշխատանքի վրա յե հիմնված։ Իսկ վարձու աշխատանքը հնարավոր դարձավ մի կողմից գյուղացիներին կողոպտելու, մյուս կողմից արտադրության գործիքները կապիտալիստների ձեռքում կենտրոնանալու շնորհիվ։

Մասնավոր սեփականությունը արտադրության գործիքների վրա և վարձու աշխատանքը, բանվորներին զարձրին բանվորական ուժի զիմաղուրկ տեր։ Բանվորական ուժն իր հերթին ապրանք է դառնում։ Բայց այդ կենդանի ապրանքը անհամեմատ ավելի վատ դրության մեջ է գտնվում, քան վորևվ ուրիշ ապրանք։ Այդ ապրանքին կապիտալիստը բանվորի աշխատանքով ստեղծած մթերքի միայն մի փոքրիկ մասն է վճարում։ Այն վարձի փոխարեն, որը կապիտալը վճարում է բանվորին, նա պահանջում է, որպեսզի բանվորը հավելյալ արժեք ստեղծի։ Այս հավելյալ արժեքը (չվճարված) մայրն է կապիտալիստների բոլոր ոգուտների, շահերի, մուտքերի։ Կապիտալիստների կողմից հավելյալ արժեքը յուրացնելու շնորհիվ՝ շատերի աշխատանքը քչերի համար ստեղծում է հարստություն։

Արդեն կապիտալիստական հասարակության արշալույսին հիշատակված եր, որ բնությունը բոլոր հարստությունների մայրն է, իսկ աշխատանքը՝ հայրը։ Բայց պրոլետարը՝ բոլոր հարստությունների ստեղծողը, իր ստեղծածի միայն չնչին մասն

և ստանում աշխատավարձի ձևով։ Արտադրության գործիքների տերը հավելյալ արժեքի ձևով ստանում է այդ հարստությունների ամենամեծ մասը։

Մասնավոր սեփականությունը և վարձու աշխատանքը կապիտալին հենց նրա համար է հարկավոր, որպեսզի նա անպատիժ կերպով կարողանա ոգտվել բանվորի անվճար աշխատանքից։

Գյուղացիներին թալանելը և նրանց աշխատավարձի սարսուռ դարձնելը ահա հարստությունների կուտակման սկիզբը։ Հավելյալ արժեք դուրս քաշելը նախապես թալանված հարստություններն ավելացնելու հիմնական միջոցն է եղել։

«Կապիտալ»-ի անմահ արժանիքը նրանումն է կայանում, որ նա, տալով գոյություն ունեցող կապիտալիստական հասարակակարգի ճիշտ և գիտականորեն հիմնավորված բացատրությունը՝ բացատրեց նայել նրա խորտակման անխուսափելիությունը։

Սխալ կլիներ կարծել սակայն, որ Մարքսի մտքով կապիտալիզմն ինքն իրեն կկործանվի։ Այդպիսի բան չկա։ Մարքսը բացատրեց բանվոր դասակարգի կազմակերպված պայքարի նշանակությունը։ Մարդկության պատմության ուսումնասիրության հիման վրա Մարքսը ցույց տվեց, որ յուրաքանչյուր նոր հասարակության տատմայրը բռնությունն է։ Բայց բռնությունը չպետք է հասկանալ որպես մի ինքնուրույն, լավ մտածված հարված։ Այդ տեսակ մտքեր ունեցին անհամբեր հեղափոխականներից շատերը, որոնց թվում էր, թե լավ կազմակերպված դավադրության կամ հաջող հարձակման միջոցով հնարավոր է կապիտալի իշխանությունը դեն շպրտել։ Մարքսն այդ տեսակ դավադրական փորձերի միամտությունն ու անմտությունը մերկացրեց։ Նա սովորեցնում էր, որ հաղթանակի համար յերկարատև պայքար է հարկավոր, որի միջոցին բանվորները սեղմում են իրենց շարքերը, միանում են և պատրաստվում են տիրող դասակարգ դառնալու։

Ինչպես «Կոմունիստական Մանիֆեստը» հանդիսացավ կապիտալի դեմ մղած գաղափարական պայքարի սկիզբը, նույնպես էլ հունիսյան դեպքերը բանվորական շարժման զարգացման յելակետը պետք է ընդունել։

Մինչև հունիսյան դեպքերը բանվորական կազմակերպություններ գոյություն ունեցին մի շարք պետություններում։ Ամենից շատ տարածված եյին արհեստակցական միությունները

Անգլիայում։ Նրանց սկիզբը դեռ XVIII դարին է վերաբերվում։ XIX դարի սկզբին Անգլիայի, Ֆրանսիայի և ուրիշ յերկրների բանվորները փորձեր եյին անում կազմակերպվել՝ իրենց շահերը պաշտպանելու համար։ Մինչև 1848 թվականը բանվոր դասակարգի կազմակերպվելու համար կատարված բոլոր փորձերից հատուկ ուշադրություն արժանի է «չարտիզմ» անվան տակ հայտնի շարժումը։

Անգլիական բանվորները իրենց դառն փորձով համոզվեցին, որ բուրժուական պարլամենտը տերերի հաստատ պաշտպանն է։ Նրանց մեջ միտք ծագեց, թե ընդհանուր ընտրական իրավունքի միջոցով նրանք կարող են պարլամենտը իրենց շահերին ծառայեցնել։ Մշակվեց «իրավունքների խարտիան» (այստեղից և առաջ յկկել «խարտիստներ» խոսքը, կամ անգլիական արտասանությամբ՝ «չարտիստներ») ու նրանք սկսեցին կռվել նրա իրագործման համար։ Չարտիզմը սկսում է 1837 թվից։ Դա տնտեսական ճգնաժամի տարի յեր։ Այդ ճգնաժամի զոհերը ջերմ կերպով ձայնակցեցին չարտիստների մարտական կոչերին։ Շարժումը գլխապտույտ արագությամբ յեր ծավալվում։ Մասնյակ, հարյուրավոր, հազարավոր բանվորներ ջահերի լույսով հավաքվում, զինվում ու հանդիսավոր յերդում են տալիս կռվել՝ իրենց գրությունը բարելավելու համար։

Բանվորներն այն ժամանակ դեռ չեյին հասկանում, որ կապիտալի իշխանությունը մի շարք ցանկապատերով և շրջապատված և որ նրան միայն ընտրական թերթիկներով չի կարելի հաղթահարել։ Նրանք դեռ չեյին պատկերացնում իրենց, թե կապիտալը կարող է ընդհանուր ընտրողական իրավունքը մասսաներին ճնշելու գործիք դարձնել։ Բայց բանվորների մասսայական մասնակցությունը չարտիզմի դրոշակի տակ՝ շարժումը դարձրեց բանվոր դասակարգի իսկական հեղափոխական շարժում։ Չարտիստական միտինգներում ճառեր եյին արտասանվում հոգուտ աշխատանքի պաշտպանության։ Միտինգներից մեկում բանվոր Այերը հայտարարեց, թե «Բանվոր դասակարգի շահերը ամեն տեղ մեկ են և ճնշողները կտեսնեն, որ հիմա բանվորներն ամեն տեղ ուզում են միանալ։ Գիտությունը իշխանություն է տալիս, իսկ միությունը՝ ուժ»։

Չարտիզմը խորը արմատներ ձգեց։ Շարժումը շարունակվում էր մերթ բարձրանալով, մերթ իջնելով։ Անգլիական կապիտալիստներն իրարանցման մեջ ընկան։ Նրանք գործ դրին իրենց

բոլոր վորձած միջոցները՝ բանությունը, խորամանկությունը և պրովոկացիան։ 1848 թիվը—հեղափոխական փոթորկի թիվն եր, չարտիզմի գոյության վերջին թիվն եր։ Ռեակցիան հաղթեց ու հարձակման անցավ։ Արյունաքամ ու ջախջախված բանվորական շարժումն անցավ գաղտնի աշխատանքի։

Հանգստությունը տեվեց մինչև վաթսունական թվականները, յերբ նորից սկսվեց հակայական ցնցումների շրջանը։ 1861 թվին Ռուսաստանում վերացավ ճորտությունը։ Ռուսաստանն այդպիսով մտավ կապիտալիստական պետությունների ընտանիքի մեջ։ Ամերիկայում սկսված եր կռիվ ստրկության դեմ, վորը 1864 թվին վերջացավ ստրկության վերացումով։ Ամերիկայի առաջ կապիտալիստական զարգացման նոր ուղիներ բացվեցին։ Ֆրանսիայի ու Անգլիայի բանվորները 1848 թվին կրած ծանր ցնցումներից հետո սկսում են ուշքի գալ։ Գերմանիայում համառ աշխատանք եր տարվում բանվորական կուսակցություն կազմակերպման համար։ Ահա այս պայմաններում ծնվեց առաջին Ինտերնացիոնալը՝ (բանվորների միջազգային ընկերությունը)—1847 թ. «Կոմունիստների Միության» հաջորդը։

1864 թվին Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսում հավաքվեցին գերմանական, ֆրանսիական ու անգլիական բանվորների ներկայացուցիչները։ Նրանք միացյալ ընդհանուր ժողովում հիմք դրին միջազգային միության։ Նրա կազմակերպման անմիջական ազդակը ռուս ցարիզմի կողմից բարբարոս կերպով ճնշված լեհական ապստամբությունն եր (1863 թ.)։

Մարքսին վիճակվեց գրել «Բանվորների Միջազգային ընկերության» սահմանադիր ուղերձը։ Դրանից բացի, նա կազմեց կանոնադրության նախագծի ներածությունը։

Այդ հետաքրքրական վավերագիրը բերում ենք ամբողջությամբ։

«Ելնելով ունենալով, վոր բանվորների ազատագրումը բանվորների իրենց գործը պետք է լինի, վոր կռվելով իրենց ազատության համար՝ բանվորները պետք է ձգտեն վոչ թե նոր արտոնություններ ստեղծել, այլ հաստատել բոլորի համար հավասար իրավունքներ ու արտոնություններ, վոչնչացնել ամեն տեսակ դասակարգային տիրապետություն,

«Վոր բանվորին տնտեսապես արտադրության գործիքների (այսինքն կյանքի աղբյուրի) տիրոջը յենթարկելը ստրկական բոլոր տեսակների, սոցիալական բոլոր ագքատությունների, ժողովրդի բթացման ու քաղաքական կախման հիմնական պատճառն է կազմում,

«Վոր այդ պատճառով բանվոր դասակարգի մեծ նպատակը տնտեսական ազատագրությունն է, վորին պիտի յենթարկվի ամեն տեսակ քաղաքական շարժում վորպես միջոց,

«Վոր այդ մեծ նպատակին հասնելու բոլոր միջոցները մինչ այժմ ապարդյուն են անցել, շնորհիվ յուրաքանչյուր յերկրի ազգային արհեստի բանվորների մեջ յեղած համերաշխության պակասության ու ազգային յերկրների բանվորների մեջ յեղբայրական միության բացակայության,

«Վոր բանվորների ազատագրումը վոչ թե տեղական կամ ազգային, այլ սոցիալական մի խնդիր է, վորը ընդգրկում է բոլոր յերկիրները, վորտեղ գոյություն ունի նորագույն հասարակությունը և կարող է վճռվել առաջավոր յերկրների մեծամասնության փոխադարձ գործնական ու տեսական աջակցությամբ,

«Վոր Յեվրոպայի ամենից արդյունաբերական յերկրների բանվորների մեջ վերակենդանացնող շարժումը նոր հույսեր զարթեցնելով՝ միևնույն ժամանակ հանդիսավոր նախազգուշացում է տալիս սխալների դեմ ու ստիպում է ձգտել մինչ այժմ ցաք ու ցրիվ ընկած ջանքերը միացնելու, վերոհիշյալի հիման վրա՝

«1864 թ. սեպտեմբերի 28-ին Լոնդոնում Սենտ-մարտենս Հոլլեյում կայացած ժողովում ընտրված կոմիտեի ներքո ստորագրյալ անդամները անհրաժեշտ միջոցներ ձեռք առան բանվորների Միջազգային ընկերություն հիմնելու համար։

«Նրանք հայտարարում են, վոր Միջազգային ընկերությունը, ինչպես նաև նրան միացած ընկերություններն ու անձնավորությունները, իրենց հարաբերությունների ժամանակ բոլոր ժարդկանց հետ, անկախ նրանց կրոնից, ազգությունից և բաստայից, հիմք են ունենալու հշմարտությունը, արդարությունը և բարոյականությունը։

«Նրանք պարտք են համարում ձեռք բերել ժարդու և քաղաքացու իրավունքը վոչ միայն իրենց համար, այլ և իր պարտականությունները կատարող ամեն մի մարդու համար։ Չկան պարտականություններ առանց իրավունքների, չկան իրավունքներ առանց պարտականությունների»։

Այդ վոգով և կազմեցին Նրանք Միջազգային ընկերության ժամանակավոր կանոնադրությունը»։

Ասվածից հետո և յեզրակացնել, թե Մարքսի կարծիքով առաջին Ինտերնացիոնալն ինչ նպատակների յեր հետամուտ։ Նա

պետք և վերջ տար այն ժամանակ բանվորական ցրված խմբերի ու խմբակների միջև թագավորող թափթփվածության։ Մարքսը վորոշակի կերպով խոսում է անցյալի սխալների մասին, իսկ այդ սխալները քիչ չեին։ Մի քանիսը մենք գիտենք չարտիզմի (հավատը դեպի ընտրողական իրավունքը՝ վորպես փրկարար միջոցի) և հունիսյան որերի («աշխատանքի կազմակերպության» պահանջը) փորձից։ Իհարկե, նրանց թիվն անհամեմատ ավելի շատ եր։ Բուրժուազիան դեռ իր գաղափարների իշխանության տակ եր պահում մինչև անգամ ամենաառաջավոր բանվորներին։

Պրոլետարական մտքի միասնականություն.—այդ եր Ինտերնացիոնալի առաջին խնդիրը, վորի լուծումը «ցաք ու ցրիվ ընկած ջանքերի միավորման պիտի բերեր, այսինքն՝ գործողության միավորման։

Ժամանակակից բանվորը թերևս զարմանա, վոր Մարքսը մարդկանց հարաբերությունների հիմքը վորոշելու համար մանրբուրժուական քարոզիչների զգայուն սրտին այդքան դուրեկան խոսքերով և ոգևվել՝ ճշմարտություն, արդարություն, բարոյականություն։ «Կոմունիստական Մանիֆեստ»-ի քաղվածքներից մենք գիտենք, վոր Մարքսի գրվածքները «Դամասկոսի պողպատի փայլող սայրի նման սուր են և մահաբեր» (այդ պատկերավոր բնորոշումը մենք վերցրել ենք Ռոզա Լյուքսեմբուրգի ճառից)։ Ակնհայտնի է, վոր տվյալ դեպքում Մարքսը կռվի բընդվելով անցյալի հետ՝ հաշվի չեր առնում այն մտքերն ու տրամադրությունները, վորոնք այն ժամանակ թագավորում եին բանվորության մեջ։ Եվ այդ խոսքերին պետք է նայել վորպես մի զիջումի՝ «ժամանակի վոգուն»։

Առաջին Ինտերնացիոնալն ընդամենը հինգ տարի տևեց և ունեցել է երկու կոնգրես։ Իր կարճատև կյանքը նա անցկացրեց բանվորական կուսակցության ամրողջական ծրագրի մշակման համար տարված յեռուն պայքարի մեջ՝ կռվի կանչելով բոլոր երկրների բանվորական մասսաներին։

Ամենից դժվար եր պարզություն ձեռք բերել բանվոր դասակարգի քաղաքական պայքարի նկատմամբ։ Բուրժուազիայի իշխանությունը դեռ շատ եր ուժեղ, իսկ բանվոր դասակարգը դեռ շատ եր թույլ, վորպեսզի իշխանությունը գրավելու միտքը նրա կողմից հեշտությամբ հավանություն գտներ։ Ֆրանսիայում մեծ հաջողությամբ եին ոգևվում Պրուդոնը և Բլանկին։ Առաջինը

ծրագրներ եր կազմում կոոպերատիվների ու փոխանակական բանկերի միջոցով հանգիստ ու աննկատելի կերպով հաղթահարել բուրժուազիային։ Նրա մտքերի աղքատությունը կարել Մարքսը Ինտերնացիոնալի կազմակերպվելուց առաջ եր ցույց տվել։ Յերկրորդը՝ Բլանկին, ընդհակառակը, գավազրությունների հրաշագործ ուժին եր հավատում։ Խառնաշփոթությունն այն ժամանակ այն աստիճան ուժեղ եր, վոր Ինտերնացիոնալը հարկադրված յեղավ շատ ջանքեր գործ դնել՝ մասնավոր սեփականության վերացման անհրաժեշտությունը և անխուսափելիությունն ապացուցանելու համար։

Պրուդոնի և նրա կողմնակիցների ժանր-բուրժուական մտքերի հետ Ինտերնացիոնալը բավականին արագ վերջացրեց իր հաշիվները։ Քիչ ավելի վատ եր գործ ունենալ այն մարդկանց հետ, ովքեր քարոզելով հեղափոխությունը՝ ժխտում եին քաղաքական պայքարն ու բանվոր դասակարգի կողմից քաղաքական իշխանությունը գրավելը։ Այդ խմբակի գլխավորը ռուս անարխիստ Բակունինն եր։ Նրա քարոզը հավանություն եր գտնում Իտալիայի յերկրներում, վորտեղ բանվոր դասակարգը դեռ շատ թույլ եր, վոր քաղաքական պայքարի համար բանվորական կուսակցություն ստեղծեր։

Ներքին տարաձայնությունները չխանգարեցին Ինտերնացիոնալին հաստատությամբ իր մշակած ծրագիրն անցկացնել։ Նրա վարվուն ու բեղմնավոր աշխատանքի ազդեցության տակ բանվոր դասակարգը կազմակերպեց իր միջազգային բանվորական կուսակցությունը։

Արդեն չարտիստների բերնից լսեցինք մենք միջազգային բանվորական համերաշխության կոչը։ «Բանվորների առաջին միջազգային ընկերությունը» պրոլետարական համերաշխությունը իր գործունեության հիմքն եր դարձրել։ Յերբ 1866 թ. Ավստրիայի և Պրուսիայի միջև պատերազմ ծագեց, առաջին Ինտերնացիոնալը կոչ արավ բանվորներին՝ կռվել այդ յերկրների բռնակալների դեմ։ Յերկու տարի հետո՝ 1868 թվին, առաջին Ինտերնացիոնալն իր յերկրորդ կոնգրեսում իր ծրագրին համապատասխան հայտարարեց, թե միայն սոցիալական հեղափոխությունն է, վոր վերջ կտա բոլոր պատերազմներին։

Առաջին Ինտերնացիոնալի շուրջը շատ առասպելներ եին պտտվում։ Այդ ուղղությամբ առանձնապես աշխատեցին նրա թշնամիները։ Նրանք պնդում եին, վոր Ինտերնացիոնալն իր տրամադրության տակ ունի հատուկ բանակ, զենքերի ու պայ-

թուցիկ նյութերի պահեստներ և այլն։ Այդ բոլորն իհարկե մի նպատակ ուներ. սեղմել ռեակցիայի շարքերը՝ յերիտասարդ բանվորական միջազգային կազմակերպության դեմ կռվելու համար։ Այդ ամրոցանությունները իհարկե, վորոշ հաջողություն ունեցան։ Սակայն Ինտերնացիոնալի գլխին թափած հալածանքները չկարողացան կանգնեցնել նրա զարգացումն ու ուժեղացումը։ Ինտերնացիոնալը, իրոք, ուներ իր հատուկ բանակը—դա աշխատանքի բանակն եր։ Նա ուներ նայեվ իր զենքը—դա նրա գաղափարներն եյին, վորոնց Փարիզյան կոմունան «սոցիալական հեղափոխության արտիլլերիա» անվանեց։

Փարիզյան կոմունան, վորի մասին կխոսենք հետո, վոչ միայն Ֆրանսիական բանվոր դասակարգի, այլ և ամբողջ Ինտերնացիոնալի համար մի լուրջ փորձություն եր։ Ինտերնացիոնալի Փարիզյան սեկցիան Կոմունայի ժամանակ բավականին խոշոր դեր խաղաց։ Սակայն Ինտերնացիոնալն անզոր գտնվեց հեղափոխությունը Յեվրոպայի մեջ տարածելու։ Նա չկարողացավ մինչեվ անգամ շոշափելի ոգնություն ցույց տալ Կոմունային։

Առաջին Ինտերնացիոնալի ուժը կայանում և նրանում, վոր նա զարկ տվեց բանվոր դասակարգին, նա ցույց տվեց նրան կազմակերպության ճիշտ ուղին։ Բայց սոցիալական հեղափոխության հաղթանակի համար անհրաժեշտ և, վորպեսզի բանվոր դասակարգն ամեն մի պետության մեջ ունենա իր մարտական մասսայական ուժը, իսկ հետո այդ մասսայական կազմակերպությունները միացված լինեն մի հզոր միության մեջ։ Այդ դեռ չկար և չեր կարող լինել Առաջին Ինտերնացիոնալի ժամանակ։

Փարիզյան Կոմունայի անկումը ռեակցիայի հաղթանակն եր նշանակում ամբողջ աշխարհում։ Անհրաժեշտ եր Ինտերնացիոնալի նվաճումների վրա հիմնվելով՝ անցնել բանվոր դասակարգի կազմակերպության ազգային մասսայական կազմակերպությունների ձեվին։

Այդ պայմաններում Առաջին Ինտերնացիոնալի համար այլևս հող չեր մնում։ Դրա հետ միասին, Կոմունայի ջախջախումից հետո առաջացած հուսահատության ու հոգնածության պայմաններում, Ինտերնացիոնալի ներքին հակասությունները խիստ սրվել եյին։

Առաջին Ինտերնացիոնալը քայքայվեց (նրա անարխիստական թեվը դեռ մի քանի տարի եկ շարունակեց իր հոգեվարքը,

վորպեսզի անփառունակ մահով մեռնի)։ Բայց Առաջին Ինտերնացիոնալի ղեկավարները չեյին վհատվում։ Նրանք գիտեյին ու գիտակցում եյին, վոր իրենց վրա դրված դժվար պարտականությունը կատարել են նրանք։ Առաջին Ինտերնացիոնալը բանվոր դասակարգի միջազգային պայքարի հիմքը դրեց։ Այդ պայքարը շարունակելու համար անհրաժեշտ եր նոր շինարարության անցնել—ներքևից։ Առաջին Ինտերնացիոնալը մեռնելով՝ իր կտակի մեջ այն հաստատ համոզմունքը հայտնեց, վոր նոր Ինտերնացիոնալը ծնունդ կառնի գանազան յերկրների սոցիալիստական կուսակցությունների միությունից։

Յերբ 1889 թվին ծնունդ առավ նոր Ինտերնացիոնալը, Վիլհելմ Լիբկնեխտը Առաջին Ինտերնացիոնալի նշանակությունը հետեվյալ խոսքերով բնորոշեց.

«Ինչպես հնուվանից՝ ճակատամարտների ու պաշարումների ժամանակ, առաջավոր մարտիկներն իրենց նիզակները թշնամու բերդի պատերի հետեվին կանգնած թշնամու շարքերի մեջ եյին նետում, վորպեսզի մարտիկների բազմությանը ստիպեն հետեվել գցած զենքին, այնպես եկ Առաջին Ինտերնացիոնալը միջազգային ազատագրական պայքարի նիզակը նետեց առաջ—բանակի մեջ տեղը—կապիտալիզմի բերդի մեջտեղը։ Յեվ պրոլետարիատն առաջ նետվեց իրեն նիզակը հետ բերելու, թշնամու բանակը ցրելու, թշնամու բերդին տիրելու համար»։

«Ցույց տալով բոլոր յերկրների բանվորներին նրանց ընդհանուր նպատակը, պարզելով նրանց միացյալ գործունեության ու պայքարի անհրաժեշտությունը՝—«Բանվորական Միջազգային Միությունը» կատարեց իր գործը։ «Ինտերնացիոնալը չի մեռել, նա վերածնվել և հզոր բանվորական շարժման ձեվով առանձին յերկրներում և շարունակում և ապրել բանվորական շարժման մեջ։ Նա մեր մեջ և ապրում։ Այս կոնգրեսը Բանվորական Միջազգային միությունն և ստեղծել»։

VII.

ՓԱՐԻԶՅԱՆ ԿՈՄՈՒՆԱՆ ՅԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1848 թվի փոթորիկը վերջացավ նրանով, որ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը նվաճող Նապոլեոն բոնապարտի յեղբորորդին՝ փոքրիկ Նապոլեոնը, Ֆրանսիական հանրապետության նախագահ դարձավ։ Հանրապետության նախագահի պաշտոնն այդ անհուսալի կոնձաբանի համար կարյերի սկիզբն եր միայն։ Նա վոչ միայն յեռանկյունի գլխարկի և իր հորեղբոր փառքի մասին եր յերազում, այլ և ձգտում եր թագավորական պաշտոնի հետ կապված դրամները առանց հաշվի ու ստուգման ծախսելուն։

Իր նպատակին հասնելու համար նա հիմնեց «դեկտեմբերի 10-ի միությունը», որի որինակով Դուբրովինը Ռուսաստանում իր սեվ հարյուրակային միությունը կազմակերպեց, իսկ Մուսսոլինին Իտալիայում ֆաշիստական բանդաները։ Մարքսն այդ միությունը «սրիկաների, հանցագործների, անկարգության, պոռնկության և զողության ընկերություն» անվանեց։ Այդ միությունը բավական եր, որպեսզի Թզուկ Նապոլեոնը ստանար թագավորական ծիրանին ու դառնար Ֆրանսիայի միահեծան բռնակալը։

Առաջին տարիները Նապոլեոնը գրեթե խաղաղ թագավորեց։ Սակայն խեղդված Ֆրանսիան սկսեց արթնանալ։ Առաջին հերթին կենդանացավ Ֆրանսիական բանվորական շարժումը՝ ուշքի գալով հունիսյան արյունալի որերին ստացած ծանր հարվածներից։ Բանվորական շարժման արթնացմանը մեծ չափով նպաստեց Առաջին Ինտերնացիոնալը։

Նապոլեոնի գահն սկսեց տատանվել։ Հիշելով վոր իր հորեղբոր ուժը հաղթանակների համրանքն եր՝ նա սկսեց մտածել իր դրությունը պատերազմի միջոցով ուժեղացնելու մասին։

Ֆրանսիայի հետ պատերազմ եր սպասում և Պրուսիան։ Նրա կանցլերը ձգտում եր Գերմանիան յերկաթով ու արյունով միացնել—մեծ պետություն դարձնել։ Յերկաթե Բիսմարկը սկսեց պատերազմի պատրաստություններ տեսնել՝ հոգ տանելով սակայն, որպեսզի ռազմական գործողությունների նախաձեռնությունը Նապոլեոնի Ֆրանսիան իր վրա վերցնի։ Թզուկ Նապոլեոնն ընկնում և ճարպիկ Բիսմարկի թակարդի մեջ ու 1870 թ. հուլիսի 19-ին պատերազմ և հայտարարում Պրուսիային։

Պրուսիան նախապես համաձայնություն կայացնելով հարավ-գերմանական մասերի հետ ոգնության մասին, իր 1866 թվին Ավստրիայի վրա տարած հաղթանակով թեվավորված՝ Ֆրանսիայի դեմ 380,000 մարդուց բաղկացած, լավ կազմակերպված բանակ և դուրս բերում։ Պատերազմը Գերմանիայի համար մի հաղթական մարշ եր։ Նա հայտարերեց Ֆրանսիայի ուժասպառությունը, փտածությունը, վոր հետևանք եր բոնապարտական վոհմակի քսան տարվա տիրապետության։ Ֆրանսիական զորքերը պարտություն պարտության հետևից եյին կրում և ահա Սեդանի մոտ Նապոլեոնն ինքը գերի յե ընկնում պրուսացիների ձեռքը։

Պարտությունները ուժեղացրին Ֆրանսիայի լայն ժողովրդական մասսաների դժգոհությունը։ Սեդանը Ֆրանսիական ժողովրդի համբերության բաժակը լցրեց։ Ֆրանսիան յերբորդ անգամ հանրապետություն հայտարարվեց։ Հեղաշրջման մոմենտին բանվորներն անպատրաստ եյին իշխանությունը գրավելու համար։ Ֆրանսիական բանվորական շարժումը փոխադարձ կռվով բռնված խմբակների յեր բաժանվել։ Ամենից ուժեղ խմբակը Առաջին Ինտերնացիոնալի սեկցիան եր։ Սակայն նա յել փոքրաթիվ եր ու վոչ այնքան ազդեցիկ։

Իշխանությունն ընկավ այն բուրժուական խմբակների ձեռքը, վորոնք ջախջախել եյին 1848 թ. բանվորական շարժումը և չեյին կարողանում դիմանալ Նապոլեոնի «դեկտեմբերի 10-ի միությանը»։

Պարտությունները պարտությունների հետևից եյին գալիս։ Բուրժուական կառավարությունն ամեն կողմից թշվառ դուրս յեկավ։ Բանվորական մասսաները շարժվեցին։ Ժողովրդական զայրույթն առաջին անգամ պայթեց 1870 թ. դեկտեմբերի 31-ին, վորին հաջորդեց ժողովրդական մասսաների փորձը՝ միջամտել 1871 թվի հունվարի 21 որը։ Բայց այդ փորձերն անհետևանք մնացին։

Դժգոհությունն աճում եր։ Նա ամենից ցայտուն կերպով արտահայտվեց ազգային գվարդիայի մեջ, վորը մեծ մասամբ բանվորներից և աշխատավոր մասսաներից եր կազմված։ Թշվառ ու անզոր բուրժուական կառավարությունը շտապեց ծանր պայմաններով հաշտություն կնքել Գերմանիայի հետ, իսկ իր ամ-

բողջ ուշադրությունը դարձրեց ազգային գվարդիան զինաթափ անելու վրա։

Զինաթափումը մարտի 17-ին էր նշանակված։ Բուրժուական կառավարության նախագահ Թիերը այդ օրը Փարիզի ազգաբնակչությանը կոչ հրատարակեց «չարագործների» դեմ։ Կոչը վոչ մի հաջողություն չունեցավ։ Թնդանոթները Փարիզից դուրս տանելու փորձը վերջացավ բանվորների ու զինվորների յեղբայրացումով և ամենից առելի զեներալների սպանությամբ։

«1871 թ. մարտի 18 առավոտյան,—պատմում է Մարքսը, Փարիզը զարթնեց «Կեցցե՛ Կոմունան» վորոտնդոստ կանչերից։ Իսկ Փարիզի ինքնավարության շենքի վրա արդեն ծածանվում էր կարմիր դրոշակը՝ աշխատանքի հեղափոխության խորհրդանշանը»։

Ի՞նչ էր ներկայացնում Փարիզյան Կոմունան։ Մարքսն իր «Քաղաքացիական կռիվը Ֆրանսիայում» անունը կրող աշխատության մեջ, վորը Կոմունայի ջախջախումից անմիջապես հետո գրեց, այս հարցին հետևյալ խոսքերով է պատասխանում. «Կոմունայի նշանակության տարբեր մեկնաբանությունները, նրա արտահայտած տարբեր շահերը, ապացուցանում են, վոր Կոմունան ամենաճկուն պետական ձևն էր, այն ինչ, կառավարությունների բոլոր նախկին ձևերն իրենց եությամբ ճնշման ձևեր էին։ Դրա գաղտնիքը նրանում է, վոր Կոմունան իր եությամբ բանվոր դասակարգի կառավարությունն էր, չշահագործող ու արտադրող դասակարգերի պայքարի արդյունքն էր. նա վերջը գտնվող քաղաքական այն ձևն էր, վորի շնորհիվ միայն հնարավոր է աշխատանքի տնտեսական ազատագրությունը»։

Սկզբում իշխանությունն անցավ Ազգային Գվարդիայի կենտրոնական կոմիտեի ձեռքը։ Իր կազմակերպչական ձևով նա զինված բանվորների ու մանր բուրժուազիայի պատգամավորական խորհուրդն էր։ Իր մանիֆեստի մեջ այդ խորհուրդը գրում էր. «Փարիզի պրոլետարները տեսնելով տիրող դասակարգի պարտությունը և դավաճանությունը՝ հասկացան, վոր հասել է ժամը, յերբ յերկիրը նրանք իրենք պետք է փրկեն։ Իրենց ձեռքը առնելով հասարակական գործերի կառավարությունը՝ նրանք հասկացան, վոր այդ պարտականությունը նրանց վրա յե դրված, վոր միայն նրանց է պատկանում իրենց սեփական բախտը տերը լինելու և կառավարական իշխանությունը գրավելու անվիճելի իրավունքը»։

Հպարտ խոսքեր։ Դժբախտաբար, բանվոր դասակարգը դեռ

պատրաստված չէր կառավարության զեկն իր ձեռքն առնելու։ Սրտաճաք յեղած Թիերի կառավարությունը վերսալ փախավ։ Թվում էր, թե պատմությունը ինքն էր թելադրում Ազգային Գվարդիային, ընկնել բարոյապես ջախջախված թշնամու հետևից՝ նրան ֆիզիկապես վոչնչացնելու համար։ Դրա փոխարեն կենտրոնական կոմիտեն Փարիզյան կոմունայի ընտրություններով զբաղվեց՝ հույս ունենալով համաձայնության գալ տիրող դասակարգերի հետ։ Բուրժուական փորձված իշխանությունը ոգտվում է այդ տատանումներից՝ իր քայքայված շարքերը կարգավորելու համար։

Իշխանությունն անցավ Կոմունայի ձեռքը ճիշտ այն օրը, յերբ Վերսալի փախստականներն արդեն ճանապարհվել էին ու հեղափոխական Փարիզի վրա հարձակում պատրաստել էին սկսել։ Այդպիսով Կոմունայի հաղթանակի առաջին օրերն իսկ կանխորոշեցին նրա անխուսափելի անկումը։ Այնուամենայնիվ, Կոմունան յերկու ամսից ավելի գոյություն ունեցավ։ Պրոլետարների համար բանվորական հեղափոխության առաջին յոթանասուն յերկու օրվա յուրաքանչյուր ժամը հսկայական նշանակություն ունի։ Մենք կփորձենք կարճ կերպով տալ Կոմունայի հաջողությունների գումարը։

Վորո՞նք էին փարիզյան Կոմունայի հիմնական նախաձեռնությունները։ Այդ հարցի պատասխանը տալիս է Առաջին Ինտերնացիոնալի Գերագույն Խորհրդի մանիֆեստը. «Կոմունայի մեծ սոցիալական նախաձեռնությունը—դա նրա գոյությունն է, նրա աշխատանքը։ Նրա ձեռք առած առանձին միջոցները կարող էին վորոշել միայն այն ուղղությունը, վորով պիտի գարգանար ժողովուրդը ժողովրդի միջոցով կառավարելու կարգը։ Դրանց թվին էին պատկանում՝ հացթուխների գիշերային աշխատանքների արգելումը, պատժի սպառնալիքով արգիլվում էր աշխատավարձի կրճատումը, վորը կատարվում էր գանազան պատրվակի տակ բանվորների վրա տուգանք նշանակելով... Նույնպիսի մի միջոց էր բանվորական ոլորտներին հանձնելը բոլոր ֆաբրիկանտներն ու արհեստանոցները, (վորոնց տերերը կամ փախել էին, կամ աշխատանքն էին դադարեցրել՝) վերապահելով այդ տերերին վարձատրություն ստանալու իրավունք։

Դրան ավելացնենք, վոր մարտի 30-ին մշտական բանակը վերացվեց և ազգային գվարդիան հայտարարվեց միակ զինված ուժը։ Ապրիլի մեկին Կոմունան վորոշեց, վոր իր բոլոր ծա-

ռայոնների ռոճիկը տարեկան 6000 ֆրանկից չպիտի անցնի։ Ապրիլի յերկուսին հայտարարվեց յեկեղեցու բաժանումը պետությունից, ամբողջ յեկեղեցական ունեցվածքը ազգային սեփականություն հայտարարվեց։

Լուսավորության ասպարիզում կոմունան իր ծրագիրն այսպես ձևակերպեց. «Փարիզն ուզում է, որ գյուղացու որդին հարուստի որդու պես կրթված լինի և որ այդ կրթությունը նա ձրի ստանա։

Թե ինչպես եր աշխատում Փարիզյան կոմունան, նրան մոտիկից դիտող ռուս պատմաբան Լավրովն է պատմում։ Մենք թույլ ենք տալիս մեզ կոմունային նվիրված նրա հետաքրքիր աշխատությունից մի մեծ քաղվածք բերել, պատասխան ստանալու համար այն հարցին, թե հայտարարեց արդյոք բանվոր դասակարգը կոմունայի ժամանակ կառավարելու ընդունակություն։

«1871 թվի հեղափոխությունը, գրում է Լավրովը,— պատմության մեջ առաջին անգամ վճռեց սկզբից յեվեթ իր գլուխը կանգնեցնել «անհայտ մարդկանց»։ Փարիզյան կոմունան հասարակության առաջին կազմակերպությունն եր, որի գլուխ կանգնած եյին ֆիզիքական աշխատանքով զբաղվող ֆրանկելները, Վաբլիները, Թիյները, Ֆինդլիները և ուրիշները։ Կոմունայի կառավարության ժամանակ արած իրենց բոլոր թերությունները և սխալները հանդերձ, նրանք ապացուցեցին, որ բանվոր դասակարգը կարող է հասարակական գործերը կառավարելու համար այնպիսի մարդիկ տալ, որոնք վարչական աշխատանքն իրենց մասնագիտությունը համարող ինտելիգենտներից վատ չեն կառավարել։

Պարլամենտներից ու մինիստրություններից դուրս յեկած դեկրետների հետ համեմատած՝ կոմունայի օրենսդրությունը դժվար թե որևիվ նկատողության արժանանա։ Կազմարարները, փականագործները, վոսկերիչները այդ գործի համար նույնքան պիտանի դուրս յեկան, որքան ժամանակական դպրոցներից, ճեմարաններից, բանիմաց ու քաղաքագետ մարդկանց շրջանից դուրս յեկած սանները։ Փարիզյան կոմունան իր կարճ գոյության ընթացքում վերջնականապես վերացրեց այն իլյուզիան, թե բուրժուական զարգացումը որևիվ առավելություն և տալիս հասարակական գործերը կառավարելու մեջ, թե պրոլետարիատն իր հաղթանակի հետևյալ օրը դաղթած բուրժուազիայի ինտելիգենցիայի կարիքն և գալու և սիրված և լինելու գործի գլուխ դնել նրանց, ում գեմ ապատամբվել եր։ 1871 թ. մարտի օրերը

առաջին օրերն եյին յերբ պրոլետարիատը վոչ միայն հեղափոխությունը կատարեց, այլ և կանգնեց նրա գլուխը։ Դա պրոլետարիատի առաջին հեղափոխությունն եր»։

Պրոլետարիատի առաջին հեղափոխությունը ցույց տվեց, վոր բանվոր դասակարգն արդեն հասունացել է իրեն կառավարելու համար։ Բայց այդ բանին դեռ պատրաստված չեր։ Մարտի 18-ին իշխանությունը, միանգամայն անսպասելի կերպով, ձանրացավ նրա ուսերին։ Հետագա օրերին պարզվեց, վոր նա դեռ լավ չի կազմակերպված, վորպեսզի հենվելով իր թշնամու իշխանության վրա՝ կարողանար ամրացնել իր դիրքերը։ Նա թշնամուն թողեց վոտքի կանգնել և Վերսալը Փարիզն ամբողջ Ֆրանսիայից բաժանող մի պատ դարձավ։ Կոմունան մեծ զինված ույժ ուներ։ Նա այդ ույժը չկարողացավ իր հաղթանակների գործիքը դարձնել։ Կարճ ասած՝ բանվոր դասակարգը չուներ իր կուսակցությունը, վորն իր մեջ մարմնացներ նրա փորձը և նրա հաղթելու կամքը։

Վերսայլի դահիճներն ավելի լավ գրության մեջ եյին։ Նրանք ունեյին կառավարելու փորձառություն. նրանք իզուր ժամանակ չեյին կորցնում։ Զորքերը կոմունայի վարակիչ գաղափարներից պաշտպանելու համար՝ Թիերն իր զինվորների մեջ լարված և ուժեղացրած զինվորական պարապմունքներ մտցրեց։ Հաղթահարված բուրժուազիան ոգտագործում եր ամեն մի ժամը, ամեն մի որը՝ իշխանությունը վերադարձնելու համար։ Յերբ Թիերն իրեն բավական ուժեղ զգաց, նա վճռական ու վստահ կերպով սկսեց իր հարձակումը։ Կոմունան կանոնավոր պաշտպանության պատրաստ չեր։ Այդ և պատճառը, վոր պրուսացիներից խայտառակ պարտություններ կրած ֆրանսիական բուրժուազիայի բանակը կարողացավ այդքան հեշտ կերպով հաղթել աշխատանքի առաջին հեղափոխությունը։

Բանվորները մի զարմանալի արիությամբ եյին պաշտպանում կոմունայի բարիկադները։ Նրանք հերոսական վճռականություն հայտարարեցին՝ կոմունայի դրոշակների տակ նահատակվելու համար։ Սակայն, նրանք անզոր եյին կռվելու կատաղած բուրժուազիայի զավակների զեկավարության տակ գտնվող կանոնավոր զորքերի դեմ։

Փարիզյան կոմունան ընկավ։ Նրա դահիճներն իրենց հաղթանակը վայրենի կոտորածով հավերժացրին։ Վրեժխնդրության ծարավից հարբած՝ նրանք բառիս բուն իմաստով, չեյին կարողանում, չեյին հասցնում սպանել կոմունարներին ու խմբերով՝ վողջ, կենդանի, թաղում եյին նրանց գերեզմանների մեջ։

Կոմունայի ոված դասերի յեզրակացությունները պարզ են։ Աշխատանքի առաջին հեղափոխությունն ամենահամոզեցուցիչ կերպով ցույց տվեց, որ այժմյան հասարակության միակ հեղափոխական դասակարգը պրոլետարիատն է։ Նա ընդունակ է վոչ միայն կռվելու և մեռնելու իր գրոշակների տակ, այլ և բավականին հասունացել է նոր կյանք ստեղծելու համար։ Սակայն, կոմունայի ծագման մոմենտին, նա դեռ չկարողացավ իր ծոցից դուրս բերել այն միացյալ ու շաղկապված առաջապահ մասը, որի մասին ու կարգապահ ղեկավարության տակ միայն կարող է բանվոր դասակարգը նվաճել կապիտալի իշխանությունը պաշտպանող հզոր բերդերը։

Կոմունայի փորձը մեզ ել է հետաքրքրում, որովհետև այդ փորձը պատասխան կտա Առաջին Ինտերնացիոնալին հուզող հարցին։ Յես նկատի ունիմ բանվոր դասակարգի քաղաքական իշխանության խնդիրը։ Փարիզյան Կոմունայից շատ առաջ Մարքսը «Նոր Ռեյնի թերթ»-ի մեջ գրում էր, թե «Յուրաքանչյուր հեղափոխությունից հետո—անցողական շրջանը պահանջում է ամենակատաղի դիկտատուրա»։ Ֆրանսիական բանվորական դասակարգը սերա կերպով մոտեցավ այդ գործին՝ կոմունան հայտարարելու որը։ Կոմունայի փորձը ցայտուն կերպով լուսավորեց մեր առաջ սոցիալիստական հեղափոխության խնդիրը։

Մենք արդեն գիտենք Փարիզյան Կոմունայի նշանակության այն գնահատումը, որտեղ ի միջի այլոց ասված է, թե Կոմունան «վաղուց փնտրվող քաղաքական այն ձևն է, որի շնորհիվ միայն հնարավոր է աշխատանքի տնտեսական ազատագրությունը»։ Չորս տարի հետո, 1875 թվին Մարքսը նույն միտքը արտահայտեց ավելի կտրուկ կերպով. «Կապիտալիստական ու կոմունիստական հասարակությունների միջև ընկած է առաջինի (կապիտալիստականի) յերկրորդին (կոմունիստականին) հեղափոխական կերպով փոխանցելու շրջանը։ Այդ շրջանին համապատասխանում է քաղաքական փոխանցման շրջանը։ Այդ շրջանի պետությունն այլ բան չի կարող լինել՝ քան պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա»։

Բանվոր դասակարգն այժմ կարող է ոգտվել ռուսական սոցիալիստական հեղափոխության ավելի հարուստ և բեղմնավոր փորձից։ Սակայն, սոցիալիզմի զարգացումը լավ հասկանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ չափով եր Փարիզյան Կոմունան գինել առաջավոր բանվորներին՝ իր առաջ դրված

խնդիրների ճիշտ ըմբռնողությամբ։ Այդ խնդիրը կարելոր է պարզել մանավանդ այսոր, յերբ մենք դեռ հանդիպում ենք Մարքսի ու Ենգելսի անունների տակ թաքնվող «սոցիալիստներին», որոնք կատաղի կռիվ են մղում պրոլետարական դիկտատուրայի դեմ, մինչդեռ Մարքսն իրան հատուկ վճռականությամբ դեռ 1875 թվին ընդունեց պրոլետարիատի դիկտատուրան որպես կապիտալիզմից դեպի կոմունիզմը տանող մի անխուսափելի անցողական ձև։ «Փարիզյան Կոմունայի» փորձի վրա Ենգելսը նույն միտքն ավելի լրիվ և ձևակերպում։ «Հեղափոխությունը,—գրում եր Ենգելսը, մի գործողություն է, որի ժամանակ ազգաբնակչության մի մասն իր կամքը թելադրում է մյուսին՝ հրացանների, սվիններով, թնդանոթների, այսինքն չափազանց դիկտատորական միջոցներով»։ Ուրեմն Ենգելսը լավ եր հասկանում, որ ընտրական թերթիկներով կապիտալիստական հասարակությանը չի կարելի հաղթահարել։ Յեվ իր միտքը վերջացնելով՝ Ենգելսը հայտարարում է. «Յեթե փարիզյան Կոմունան բուրժուազիայի դեմ չհենվեր զինված ժողովրդի հեղինակության վրա, ապա մի՞թե նա մի որից ավելի կապրեր։ Իրավունք չունի՞նք մենք արդյոք, ընդհակառակը, կշտամբելու Կոմունան՝ այդ զենքի հեղինակությունից թույլ ոգտվելու համար»։

Ենգելսի պրոլետարիատի դիկտատուրայի մասին (Փարիզյան Կոմունայի առթիվ) արտահայտած մտքերը միանգամայն համապատասխան են Մարքսի և Ենգելսի հիմնական հայացքներին՝ պետության դերի ու նշանակության վերաբերյալ։ Մարքսը և Ենգելսը պետությունը հասկանում էին որպես մի կազմակերպված ույժ, որը կոչված է պահպանելու ու պաշտպանելու տիրող դասակարգը։ Պետության նկատմամբ յեղած այս ընդհանուր հայացքից հետևում է յեզրակացնել, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ունենա բանվոր դասակարգը դեպի պետությունը։

«Պետությունը,—գրում եր Ենգելսը,— մի անցողական հիմնարկություն է, որից բանվորները հարկադրված են ոգտվել պայքարի, հեղափոխության ժամանակ՝ իրենց թշնամիներին բռնի կերպով խեղդելու համար»։ Առանց պետական իշխանության բանվոր դասակարգն իր թշնամիներին չի կարող ճնշել։ Յերբ բանվոր դասակարգը լիակատար կերպով կհաղթե, այսինքն յերբ կհաստատվեն կոմունիստական կարգերը, այն ժամանակ, բնական է, որ պետությունը կմեռնի։

Մինչև այժմ մենք զանազան պետական ձևեր ունեցինք միայն։ Դրանք վոչ այլ ինչ են, յեթե վոչ ճնշման զանազան ձևեր։ Հնումը, ինչպես գիտենք, յեղել է ստրկատերերի պետությունը, ճորտատիրության ժամանակ՝ կալվածատերերի պետությունը, կապիտալիզմի ժամանակ՝ բուրժուազիայի պետությունը։ Պետության, վորպես ճնշման գործիքի, վոչնչացումը հնարավոր է միայն բանվոր դասակարգի դիկտատուրայի միջոցով։ Բանվոր դասակարգը պատմությունից կոչված է հաստատելու իսկական հավասարություն և այդպիսով վերացնելու պետության գոյության անհրաժեշտությունը։

Այդ ճանապարհի վրա կանգնեց Փարիզյան Կոմունան։ Նա պարավեց, վորովհետև անպատրաստ էր։ Սակայն, նրա ճանապարհը ճիշտ էր։ Նրա անկումն ապացուցեց, վոր մարդկությունը արյունալից ճակատամարտների, ծանր պարտությունների միջոցով միայն կհասնի մեծ հաղթանակներին։

VIII

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

«Կոմունիզմի տեսիլը շրջում է Ցեվրոպայում»- գրված էր «Կոմունիստական մանիֆեստում» դեռ 1847 թվին։ Փարիզյան կոմունան այդ տեսիլին բանվոր դասակարգի դիկտատուրայի ձևը տվեց։ Դրանով է բացատրվում բանվոր դասակարգի թշնամիների բանակում կոմունայի առաջացրած կատաղությունը։ Մարքսը, դիկտատուրայի նշանակությունը հեղափոխության հաղթանակի համար, հետևյալ խոսքերով արտահայտեց. «Դասակարգային կռվի մասին ինձնից առաջ էլ գիտեին, բայց իմ ուսմունքը կայանում է նրանում, վոր կապիտալիզմի զարգացումը անխուսափելիորեն գեպի պրոլետարիատի դիկտատուրան է տանում»։

Սակայն, Փարիզյան կոմունան կայծակի պես մի վայրկյանով միայն ճեղքեց կապիտալի ճնշող տիրապետության խավարը։ Կոմունայի պարտությունից հետո վագր-կապիտալը շարունակեց իր արյունոտ ճանապարհը և այնպիսի գիշատիչ ախորժակներ հայտաբերեց, վորոնց մասին մենք կասկածել անգամ չէինք կարող՝ նրա առաջին քայլերը դիտելով։

Մենք հիշում ենք առաջին կապիտալիստին-առևտրականին-արտադրողներին ծծողին։ Իր գործերն ավելի լավ տանելու համար՝ առևտրականը վոչ միայն իր հարստությունից էր օգտվում, այլ և բանկից վարկ էր առնում (պարտք էր առնում)։ Բանկը շատ հին ժամանակներից գոյություն ունի։ Սկզբում նրա գործերը քիչ էր։ Նա հավաքում ու փոքրիկ վարձատրությամբ պահպանում էր հարուստների դրամները։ Դա հարուստի համար շատ հարմար բան էր.—նրա քունը հանգիստ էր, իսկ բանկիրին՝ օգուտ։

Առևտրի զարգացումը հնարավորություն տվեց բանկերն ավելի լավ օգտագործելու։ Ձեռնարկությունները մեծանում էին, ապրանքային շրջանառությունը շատանում էր։ Կապիտալիստը բանվորներից ստացած հավելյալ արժեքը միանգամից չի կարո-

ղանում ուտել։ Դժվար էր նույնպես ձեռնարկությունն ամեն ոք լայնացնել-մեծացնել։ Հարց առաջ յեկավ. ինչպես ոգտագործել կապիտալը՝ նրա ստանալու ու նոր ձեռնարկության մեջ դնելու ժամանակամիջոցի ընթացքում։ Այդ ճանապարհն ինքը կյանքը թելադրեց։ Կապիտալները վորոշ ժամանակի ընթացքում ոգտագործել չկարեցող կապիտալիստի կողքին կային նույնպես այնպիսիները, վորոնք իրենց ձեռնարկության համար դրամի մեծ կարիք ունեին զգում։ Մնում էր միայն գտնել այն միջոցը, վորի շնորհիվ ազատ կապիտալը կարող էր անցնել նրանց ձեռքը։ Այդ գործն իր վրա վերցրեց բանկը։ Նա դադարեց դրամ պահելու համար վարձատրություն պահանջել։ Ընդհակառակը, նա բանկում դրամ պահավորներին սկսեց վորոշ տոկոս տալ։

Դրամը պահ տվողներին բակը փոքր տոկոս էր տալիս, իսկ պարաք վերցնողներից ավելի մեծ տոկոս էր ստանում։ Այդպիսով, բոլորն էլ հարստանալու միջոց գտան։ Ազատ կապիտալի տերն իր դրամը բանկում պահելով՝ տոկոս էր ստանում։ Դրամի կարիքն զգացող կապիտալիստն էլ իր գործերը կանոնավորելու ու լայնացնելու համար՝ անհրաժեշտ կապիտալ էր ստանում։ Իսկ միջնորդը՝ բանկիրը, իհարկե ձրաս չեր անում։

Բանկի դերը փոխվեց։ Ճիշտ է, վոր բանկային նոր խաղը ռիսկի հետ էր կապված։ Պատահում էր, վոր պարտապանը վոչ տոկոսն էր տալիս, վոչ էլ ստացած վարկն էր վերադարձնում։ Կրիզիսների ժամանակ այդ տեսակ դեպքերը հաճախակի էին դառնում։ Ծանր էր լինում և այն բանկերի համար, վորոնք պահ տվողների կապիտալները չեին կարողանում վերադարձնել։ Սակայն, առեվտրականներն ու սպեկուլյանտները, շահի հետևից ընկած, դիտեին արդեն, վոր «ռիսկը լավ բան է, ռիսկ չանես՝ չես շահվիլ»։ Յեվ ահա բանկերը ծաղկում են։

Առեվտրականն իր տեղը զիջեց արդյունաբերողին։ Կապիտալիստական տնտեսության մեջ առաջին տեղը գրավեցին ֆաբրիկանտներն ու գործարանատերերը առեվտրականը հետ ընկավ։ Արդյունաբերողների կողքից հաղթական դուրս յեկան խոշորները, այսինքն հարուստները։ Արդյունաբերության զարգացման ընթացքում դրանցից հատկապես առանձնացան ածուխի ու յերկաթի արդյունաբերողները։ Ածխահանքերի ու յերկաթահանքերի տերերը կապիտալիստական տնտեսության բարոնները դարձան, իսկ յերկաթն ու ածուխը, մեքենաների զարգացման շնորհիվ, արդարացի կերպով կոչվեցին այժմյան արդյունաբերու-

թյան հացն ու ջուրը։ «Ածխորժակն ուտելու ժամանակ է բացվում», ասում են ֆրանսիացիք։ Բացվում էր և յերկաթի ու ածուխի բարոնների ախորժակը, զարգանում էր նույնպես նրանց փոքր յեղբայրների ախորժակը։ Հին մրցումը, վորի միջոցով նրանք կլանեցին միջին և փոքր ֆաբրիկանտներին, այլևս նրանց քեֆով չեր։ Այն մրցման ժամանակ հաղթելու համար նրանք գներն էին եժանացնում։ Ճիշտ է արտադրության բարձր տեխնիկայի և լավ կազմակերպության շնորհիվ ապրանքներն անհամեմատ եժան էին նստում, սակայն, նրանք ձգտում էին ավելացնել շահը, այսինքն գները վոչ թե պակսեցնել, այլ բարձրացնել։

Դրա համար անհրաժեշտ էր փոխադարձ մրցմանը վերջ տալ։ Մասնավոր արդյունաբերողի տեղը, ֆաբրիկանտների ու գործարանատերերի միությունն է բռնում։ Սկզբում միությունը շատ համեստ նպատակներ է դնում իր առաջ։ Միասին գնել, միասին գներ սահմանել և այլն։ Այդ միությունները շահն ավելացնելու համար նոր ճանապարհներ են բացում։ Աստիճանաբար ֆաբրիկանտների միությունն այնպիսի մի արտադրական կազմակերպություն է դառնում, վոր թույլ և տալիս արտադրության վրա բիչ ծախսելով ապրանքները թանկ ծախել։

Ֆաբրիկանտների միությունները զարգանում և ուժեղանում էին։ Սկզբում համաձայնություն կայացնող մասնավոր ֆաբրիկանտներն ու գործարանատերերը ազատ էին գործում։ Միությունների զարգացումը մասնավոր ֆաբրիկանտի ազատությունը ավելի ու ավելի յե սահմանափակում։ Մասնավոր ֆաբրիկանտին ու գործարանատիրոջը սինդիկատի վարչությունը սկսում է չեզոքացնել։ Նա վոչ միայն գնումներն ու վաճառքն է կատարում, այլ և ամբողջ գործն է սկսում կառավարել՝ բոլորովին դուրս վռնդելով մասնավոր տիրոջը։

Միության ոգուտները ակնհայտ են։ Հսկա հնոցները, վիթխարի մեքենաները չափազանց թանկ են. նրանք չեն կարող մի ֆաբրիկանտին պատկանել։ Ֆաբրիկանտների միությունը ձեռնտու է նոր թանկ կատարելագործումներ մտցնել, վորոնք վերջին հաշվով եժանացնում են արտադրությունը։ Դրա հետ միասին, նրանք գները նշանակելու խնդրում ավելի ազատ են, նրանք ազատ են և փոխադարձ մրցումից։ Բնական կերպով միաք է ծագում արդյունաբերության զանազան ճյուղերի ֆաբրիկանտներին միացնելու մասին։ Հատկապես գրավիչ են այն միու-

թյունները, վորոնք հում նյութ ստացող արդյունաբերությունը միացնում են հում նյութը մշակող արդյունաբերության հետ։ Մեքենաշինարարական արդյունաբերության համար առանձնապես ոգտավետ է՝ ածուխի բարոնին միացնելը յերկաթի բարոնի հետ։ Ածուխը յերկաթին եր ձգում, իսկ յերկաթը ածուխին, և ֆաբրիկանտների միությունը նրանց միացրեց, ի մի ձուլեց։ Միացյալ կապիտալը հզոր ուժ դարձավ։ Ամենահարուստ կապիտալը նույնքան անզոր է նրա դեմ, վորքան փոքր արհեստանոցի տերը անզոր եր հարուստ ֆաբրիկանտի դեմ։ Կապիտալիստների միության համար հեշտ և ամեն ինչին հետևել և բուրժուական պետությունը իր շահերին հարմարեցնել։

Հարուստ սինդիկատներին հարկավոր եյին վոչ միայն միության մեջ մտնող կապիտալիստների դրամները, այլ և այն ազատ կապիտալները, վորոք ցրված են ու պահվում են պետության զանազան մասերում։ Հին բանկերը կապիտալիստների միություններին չեյին կարող ոգնել։ Բանկի հիմնական հաջողությունը նրա շրջանառության արագությունն է։ Բանկն ամենից շատ կարճատև վարկից եր շահվում։ Բանկը գիտեր, վոր կապիտալիստը հոժարությամբ բանկը կմատնի իր կապիտալի ավելցուկները, յեթե նա վստահ է, վոր իր ուզած բոպեին այդ պահ տված դրամը կարող է հետ ստանալ։ Այդ պատճառով բանկին հեշտ և կարճատև վարկեր տալ։ Բայց խոշոր արդյունաբերությունը յերկարատև վարկի կարիքն է զգում։ Մեծ մեքենաների, հսկայական շենքերի, մեծ արդյունաբերական ձեռնարկությունների վրա ծախսած կապիտալները յերկար տարիների ընթացքում են վերադարձվում։

Անյիլանելի դրություն ստեղծվեց։ Կապիտալիստը ձգտում եր հնարավորություն ունենալ կապիտալը արտադրությունից իր ուզած բոպեին հանելու, իսկ արտադրությունը յերկար ժամանակով է ծախսեր պահանջում։ Այդ դրությունից յելք գտավ կապիտալիստների միության նոր ձևը, այսպես կոչված «ակցիոներական ընկերությունը»։

«Ակցիոներական ընկերությունը» կամ «փայերի ընկերությունը»—կապիտալիստների ընկերություն է։ Իրենց կապիտալը ավելացնելու համար՝ նրանք համեմատաբար հարմար գտան փայեր կամ ակցիոներ բաց թողնել։ Այդ փայերի գնումը մատչելի յե և վոչ այնքան հարուստ մարդկանց։ Կապիտալիստները փայերը բաց թողնելով՝ միանգամից իրենց կապիտալն ավելացնում

են։ Այդ փայերը, կամ ակցիոները, ուզած բոպեին կարելի յե ծախել։ Այդպիսով, կապիտալիստների միությունը յերկարատև վարկ է ստանում, իսկ ակցիա գնողները հնարավորություն ունեն ուզած բոպեին իրենց փայը հետ ստանալու։ Ուրեմն ծանր դրությունից յելք գտնվեց։

Ակցիոներական ընկերությունը շատ խորամանկ բան է։ Ակցիոներական ընկերությունների կանոնադրությունների մեջ սովորաբար գրվում է, վոր բոլոր ակցիոներները այդ ընկերության տերն են։ Նրանք ընտրում են կառավարչին ու վճռում են ընկերության բոլոր ձեռնարկությունները վերաբերվող հարցերը։ Բայց դա միայն գրվում է։ Ակցիոներական ընկերությունների հիմնադիրները ձեռք են առնում բոլոր միջոցները՝ ակցիաների կեսից ավելին իրենց ձեռքում պահելու համար։ Թեպետ այդ քանակությամբ ակցիաներ ունենալը անհրաժեշտել չի։ Նրանց բավական է ունենալ բոլոր փայերի մոտավորապես մի յերրորդը։ Մնացած փայատերերը ցրված են։ Նրանք ակցիոներական գործի նրբություններից դժվար են գլուխ հանում։ Փայատերերի ընդհանուր ժողովում ընկերության հիմնադիրները իրենց գործը բոլոր մյուս ակցիոներների առաջ անհասկանալի կերպով են դրատում։ Ամբողջ ոգուտը հիմնադիրներին է մնում։ Նրանք յերեսի սերն են քաշում, իսկ մնացյալ ակցիոներներին չնչին տոկոս են վճարում։

Այսպիսով ակցիոներական ընկերությունը հնարավորություն ունի հավաքելու և միացնելու բոլոր ազատ կապիտալները խոշորագույն ձեռնարկողների ձեռքում։ Նրանց ազդեցությունը Մարքսը ձևակերպեց հետևյալ խոսքերով. «Նրանք արտադրության ու ձեռնարկության չափերը հսկայական կերպով լայնացնում են, մի բան, վոր անհնարին է առանձին կապիտալի համար»։ Դրան պետք է ավելացնել, վոր Մարքսի ժամանակ ակցիոներական ընկերությունները նոր եյին հիմնվում։ Սակայն և այնպես, Մարքսը դեռ այն ժամանակ եր տեսնում կապիտալի միավորման այդ ձևի անխուսափելի հետևանքները։ Մարքսը նախատեսում եր, վոր կապիտալիստների միությունները ձգտելու յեն կապիտալիստների մի ընկերության ձեռքում միացնել ամբողջ կապիտալը։ Բանկերի համար գործունեության նոր տարածություն բացվեց։ Ակցիոներական ընկերությունների գոյության համար անհրաժեշտ են ակցիաների շրջանառությունը չափավորող, նրանց գնումներով ու վաճառքով զբաղվող հիմնար-

կութիւններ։ Այդ հիմնարկութիւնները բնականորեն բանկերը պետք է լինէին։ Նրանք ակցիաների փոխարեն ֆաբրիկանտների ամեն տեսակ միութիւններին տալիս էին և տալիս են հրամայական վարկեր։ Ակցիաների վրա հենվելով՝ բանկերը հնարաւորութիւն ունեն ազդելու ֆաբրիկանտների ու գործարանատերերի միութիւնների վրա, նշանակելու այնտեղ իրենց կարգադրիչներին, իրենց լիազորներին և ամեն կերպ հետեվելու տերերի միութիւնների գործերին։ Բանկերը արդիւնաբերութիւնը միացնող ու նրա վրա հսկող բարձրագոյն որդաններ են դառնում։

Ակցիաների գնումն ու վաճառքը բանկային խաղը ավելի մեծ ոլորտի յն յենթարկում։ Բանկերը նոյնպես էին կռվում իրար դեմ, ինչպես առանձին առևտրականները առանձին ֆաբրիկանտների դեմ։ Այդ պայքարից հաղթող են դուրս գալիս ամենից հարուստ բանկերը, այսինքն այն բանկերը, որոնք ամենահարուստ ակցիոներական ընկերութիւնների հետ են կապված։ Բանկերի ինքնուրոյն կյանքը մի տեսակ կտրվում է։ Բանկերը միանում ու ձուլվում են խոշոր արդիւնաբերական միութիւնների հետ։

Ակցիաների խաղի կենտրոնը բորսան է։ Նրա նշանակութիւնը քանի գնում ավելի մեծանում է։ Ֆրանսիական վաշխառուներն իրանց բորսան տաճարի ձեվով էին շինել՝ ցույց տալու համար, թե նրանց աստվածը դրամն է, իսկ ժամերգութիւնը բորսայական խաղը։ Ամերիկայում բոլորն էլ գիտեն, որ պետական խնդիրները լուծում են ոտանում վոչ թե Վաշինգտոնի պարլամենտում, այլ Նյու-Յորկի նեղ փողոցի (Վոլստրիտ) վրա գտնվող ամերիկական բորսայում։ Անգլիական «դեմոկրատական» որենսդիրները տերերի միութիւնների լիազորներն են։ Նրանց մեջ, իհարկե, վճռողական դեր խաղում են ածուխի ու յերկաթի բարոնները։ Նրանք բորսայի հետ ավելի սերտ են կապված, քան իրենց ընտրողների հետ։

Ակցիոներական ընկերութիւնների մեծ դերը նախատեսավ վոչ միայն Մարքսը։ Ռոտբերտուսը նրանց մասին բառացի հետեվյալն էր գրում. «Սովորական ազատ, վոչ ակցիոներական ձեվ ունեցող, առևտուրը ձեռքի խղճուկ ավել է միայն։ Ազատ առևտրի ակցիոներական ձեվը շողիավել է։ Նա տասը տարվա ընթացքում այնպես մաքուր կսրի, որպես սովորական տնական ավելը հազիվ կարողանա հարյուր տարում սրբել»։ Այդ շողիավելով զինված կապիտալը, իրոք որ այնպես է մաքրում, ինչպես այժմյան կապիտալիստների հայրերը յերազել անգամ չեին կարող։

Կապիտալիստների մի վոհմակ, իր ձեռքում կենտրոնացնելով հսկայական կապիտալներ, արդիւնաբերութիւնն ու պետութիւնն ղեկավարելու համար յերազում եր այնպիսի մի միութիւն ստեղծել, որն իր ձեռքը կհավաքեր **ամբողջ մարդկութիւնը**։ Տերերի փոքրիկ վոհմակի ամբողջ հասարակութիւնը ապաշկարա շահագործելու ձգտումը, գտավ իր գրական արտահայտութիւնը ամերիկական գրող Ջեկ-Լոնդոնի «Յերկաթի կրունկի տակ» սքանչելի աշխատութիւնն մեջ։ Ջեկ-Լոնդոնը նկարագրեց «յերկաթի կրունկը» բայց նրա լուծը միայն ինքը չե որ գգաց։

Ֆաբրիկանտների միութիւնների ու ակցիոներական ընկերութիւնների կազմակերպութիւնը վերջ տվեց առանձին ֆաբրիկանտների մրցմանը յուրաքանչյուր յերկրի սահմաններում։ Սակայն համաշխարհային արտադրության մեջ անիշխանութիւնը չվերջացավ։ Արտադրության զարգացումն ավելի ուժեղ կերպով սկսեց շուկայի զարգացման առաջն առնել։ Առանձին արդիւնաբերողների մրցման տեղը, պետության իշխանութիւնը իրենց ձեռքում պահող հզոր միութիւնների մրցումը բռնեց։ Մրցման գենքը ածխի գների փոխարեն հզոր բանակները դարձան, որոնց միջոցով յուրաքանչյուր պետություն յերազում եր իր սահմանները, իր գաղութները, իր շուկաները լայնացնելու մասին։

Միացյալ միութիւնները կարողացան հավաքել բոլոր կապիտալները ու ինքնակամ կերպով բարձրացնել գները։ Նրանք սկսեցին ձգտել՝ առաջինը թույլ չտալ ոտար ապրանքներին մուտք գործել իրանց շուկաները, իսկ յերկրորդ արտահանել ու անարգել տարածել ոտար շուկաներում վոչ միայն իրենց ապրանքները, այլ և կապիտալները, որոնք ակցիոներական ընկերութիւնների հաջող աշխատանքի շնորհիվ շատ եին ավելացել։

Սկսվեց կապիտալիզմի զարգացման նոր շրջանը։ Մասնավոր արդիւնաբերողի տիրապետության ժամանակ կապիտալիստները առևտրի ընդհանուր ազատություն եին պահանջում՝ պնդելով, որ այդ ազատությունը տանում է դեպի ընդհանուր խաղաղություն։ Ազատ առևտուրը ակցիոներական ընկերութիւններին ու ֆաբրիկանտների միութիւններին անցնելուց

հետո փոխարինվեց որեցոր աճող բանակներով պաշտպանվող մաքստաններով։ Բանակը կոչված եր վոչ միայն իր յերկրի մուտքը ոտար ապրանքների առաջ փակելու, այլ և ոտար յերկրները, ոտար շուկաները գրավելու։

Կապիտալը բռնեց նվաճողական քաղաքականության ուղին՝ **իմպերիալիզմի ուղին**։

Իմպերիալիզմի առաջին ուղեկիցը բնականաբար հանդիսանում է միլիտարիզմը կամ ուժեղ բանակը ցամաքում, ծովում և ոդում։ Միլիտարիզմը կապիտալի համար վոչ միայն միջոց է, այլ և նպատակ։ Կառավարությունը, ուժեղացնելով իր բանակը, ռազմական արդյունարերությանը հսկայական պատվերներ է տալիս՝ հրացաններ, գնդացիրներ, թնդանոթներ, ոդանավեր, փամփուշտներ, շարասայլեր և վոչնչացման ուրիշ շատ գործիքներ պատրաստելու համար։ Միլիտարիզմը, այդպիսով, կապիտալի համար աքանչելի ներքին շուկա յե։ Կապիտալիստական միությունների անսահման իշխանությունը (մենաշնորհը) հնարավորություն է տալիս նրանց բարձրացնել մթերքների գները ու այդպիսով, բանվորների վրա աշխատավարձի ձևով ծախսված դրամի մեծ մասը յետ ստանալ։ Մնացած մասը պետությունն ինքն է գուրս քաշում՝ ռազմական աուրքերի ձևով, վորոնք իրենց հերթին նորից բանկիրների ու տերերի միությունների ձեռքն են անցնում։

Զարգացման նոր ուղիի վրա կանգնելով՝ կապիտալիզմը փոխեց վոչ միայն իր արտաքին, այլ և ներքին քաղաքականությունը։

Սկզբում կապիտալը ամեն կերպ ընդդիմադրում եր բանվորական կազմակերպությունների գոյությանը։ Կապիտալիստական կառավարությունները հսկայական ուժեր ու ջանքեր ծախսեցին բանվորական շարժման դեմ կարիճներ ստեղծելու վրա։ Փարիզյան կոմունայից յերկու տարի հետո Բիսմարկը որինագիծ մտցրեց՝ պայմանագիրը խախտող բանվորներին (այսինքն գործադուլավորներին) քրեական կարգով պատասխանատվություն յենթարկելու մասին։ Այդ տեսակ ու նման որինագծերի վրա, կարծես թե փոխադարձ համաձայնությամբ, աշխատում են բոլոր յերկրների կապիտալի ստրատավորները։ Սակայն, բանվոր դասակարգի կոիվը կապիտալիստներին հոտոտեց, վոր բանվորական կազմակերպությունները բանվորների համար կենսական անհրաժեշտություն են և վոչ մի հալածանքով նրանց չի կարելի վերացնել։

Անհերքելի փաստի առաջ կանգնած՝ կապիտալը իրեն ավելի լայն, ավելի համարձակ նպատակ դրեց։ Նա ընտրեց դեպի բանվորական միությունները վոչ միայն համեմատաբար համբերատար լինելու ճանապարհը, այլ և նպատակ դրեց այդ կազմակերպությունները իր հաղթական կառքին լծել։ Սկսվում է միացյալ կապիտալի նուրբ ու ճարպիկ խաղը բանվոր դասակարգի հանդեպ։ Կապիտալը գործի յե գցում կաշառքը խարերայության հետ, խոստումները սպառնալիքների հետ, դիջումները բռնությունների հետ, բաղդրեղենը մարտակի հետ։ Այդպես խաղալով՝ նա ձգտում է բանվոր դասակարգի վերին բավերն իր կողմը քաշել, կապելով նրանց բախտը իր գաղութային թալանչիական քաղաքականության և իմպերիալիստական ձգտումների հետ։ Սահմանագծերի վրա մաքստաններ կազմակերպելու հետ միասին՝ ամբողջ ազգը կապիտալի յերկաթե կրունկի տակ միացնելու լարված աշխատանք է կատարվում։

Ահա այդ պայմաններում ծնվեց, մեծացավ ու զարգացավ յերկրորդ Ինտերնացիոնալը։

Կոմունայի պարտությունը բանվոր դասակարգի շարժման համար մեծ հարված եր։ Սակայն, շարժումը շուտ վոտի կանգնեց։ Առաջին Ինտերնացիոնալի քայքայումից հետո անմիջապես սկսվում է Մարքսի ուսմունքի տեսակետի վրա կանգնած բանվորական կուսակցությունների կազմակերպությունը։ Այդ տեսակ կուսակցություններ առաջ են գալիս Ֆրանսիայում, Բելգիայում, Իտալիայում և մի շարք ուրիշ պետություններում։

Սոցիալիստական կուսակցությունները խնամքով են վերաբերվում դեպի արհեստակցական միությունները և այն յերկրներում, ուր արհեստակցական շարժումը դեռ չեր հիմնավորվել, նրանք նպաստում եյին միությունների ամրանալուն ու զարգանալուն։

Նոր առաջացած կուսակցությունների մեջ բավականին ուժեղ և լինում ձգտումը դեպի միջազգային միավորումը։ Արդեն 1876 թվին Ինտերնացիոնալը վերստեղծելու առաջին փորձն է արվում։ Սակայն անհրաժեշտ պայմանները դեռ չեյին հասունացել։ Նոր կուսակցությունները դեռ չեյին ամրացել, իսկ հին տարաձայնությունները դեռ թարմ եյին։ 1881 թվին արվեց յերկրորդ փորձը, բայց նա յել ցանկալի արդյունք չտվեց։ Այդ միջոցին կուսակցությունները ուժեղանում ու զարգանում եյին։ 1886 թվին զանազան կուսակցությունների ներկայացուցիչների

կոնֆերանսը սկսում է կազմակերպչական աշխատանք՝ միջազգային համագումար հրավիրելու համար, որը կարող կլիներ շարունակել Առաջին Ինտերնացիոնալի սկսած փառավոր գործը։ Այդ համագումարը, իրոք, հրավիրվեց 1889 թվին—ֆրանսիական մեծ հեղափոխության հարյուրամյակի տարեդարձին։ Համագումարի նախորյակին համաձակ հայտարարություններ էին արվում այն իմաստով, որ նոր 89 թիվը և մոտենում, այսինքն աշխատանքի մեծ հեղափոխության թիվը։ Համագումարում գրվեց Յերկրորդ Ինտերնացիոնալի հիմքը։

Համագումարն անցավ բարձր տրամադրությամբ։ Փարիզյան Կոմունայի հերոսական օրերի հիշողությունները դեռ կենդանի էին. Առաջին Ինտերնացիոնալի պատվերները չէին մոռացվել։ Վիլհելմ Լիբկնեխտի խոսքերը այն մասին թե՝ «այս համագումարը միջազգային բանվորական միության ստեղծածն է»—շատ խորը արձագանք գտավ։ Ծեր Լիբկնեխտը չէր կարող իմանալ, այն ժամանակ նախատեսնել, որ իր որդուն՝ Կարլ Լիբկնեխտին, Ինտերնացիոնալին ազնիվ ծառայելու համար, քառասուն տարի հետո պետք է դավաճանորեն սպանեն Յերկրորդ Ինտերնացիոնալի այն կուսակցության աջակցությամբ, որին Վիլհելմ Լիբկնեխտը ներկայացնում էր Յերկրորդ Ինտերնացիոնալի առաջին համագումարում։

Յերկրորդ Ինտերնացիոնալն իր առաջին համագումարում հանդես եկավ որպես բանվոր դասակարգի դասի հետևողական մարտնչող։ Համագումարը աշխատում էր այն ժամանակները գծագրվեց կապիտալիստական զարգացման նոր ուղին։ Կապիտալիստական պետություններն իրենց սահմանագծերի վրա բարձր պատեր էին կառուցում ու նրանց շուրջը հսկայական բանակներ հավաքում։ Ռազմականության զարգացումը մեծ արագությամբ էր կատարվում։ Ապագա համաշխարհային կոտորածը պատրաստող ուժերը արդեն նկատվում էին։ Յեվ ահա այդ պայմաններում Յերկրորդ Ինտերնացիոնալը մայիսի մեկի որը աշխարհի բոլոր բանվորների յեղբայրության տոնն է հայտարարում։ Այդ տոնը հայտարարելու մեջ արտահայտվեց բանվոր դասակարգի մեծ համարձակությունը։ Տոներ ընդհանրապես շատ կան։ Սովորաբար նրանք հաղթանակից հետո յեն հայտարարում։ Պրոլետարիատը մարդկության պատմության մեջ միակ դասակարգն է, որը իր տոնը հայտարարեց այն ժամանակները նրան խեղդում էին, վատահ լինելով, որ գալիք հաղթանակը իրենն է, շղթայված պրոլետարիատը հպարտ հայտարարեց ժողովրդների յղբայրության ապագա տոնը։

Յերկրորդ Ինտերնացիոնալին էր գոյության սկզբունքային շրջանում, վիճակեց հանդիպել արձագանքներին այն պայքարի, որը պառակտում էր Առաջին Ինտերնացիոնալը։ Առաջին Ինտերնացիոնալի կատարած հսկայական աշխատանքը և մանավանդ Մարքսի ու Ենգելսի տարած գաղափարական կռիվը անհետևանք չմնացին։ Յերկրորդ Ինտերնացիոնալը հեշտ մաքրեց իր հաշիվները անարխիստական խմբակների մնացորդների հետ՝ ամուր կանգնելով այն տեսակետի վրա, որը քաղաքական պայքարը բանվոր դասակարգի ազատագրության անհրաժեշտ միջոցն է։

Յերկրորդ Ինտերնացիոնալը առաջինից խիստ կերպով տարբերվում էր. Առաջին Ինտերվացիոնալը ձգտում էր միացնել ու ղեկավարել բանվորական շարժումը։ Յերկրորդ Ինտերնացիոնալը իրեն ավելի համեստ նպատակներ էր դնում։ Նա իրենից միանդամայն ինքնուրույն սոցիալիստական կուսակցությունների միավորում էր ներկայացնում։ Կուսակցությունները իրար հետ միքանի ընդհանուր ղեկավարող սկզբունքներով էին կապված։ Իր ընթացիք աշխատանքի մեջ յուրաքանչյուր ազգային կուսակցություն ինքն իրեն էր թողնված։ Այդպիսի պայմաններում բանվորական շարժման իրական միջազգային միասնականության մասին խոսելն ավելորդ է։ Բանվորական կուսակցությունները քանի գնում՝ պետական կուսակցություններ էին դառնում։ Նրանք իրենց պայքարի տեղական պայմանների հետ ավելի էին կապվում, քան ամբողջ բանվորական շարժման ընդհանուր շահերի հետ։

Ճիշտ է, Ինտերնացիոնալի համագումարները միլիտարիզմի դեմ ամբողջ բանվոր դասակարգի ընդհանուր ջանքերով կռվելու կարևորությունը շեշտում էին։ Միլիտարիզմի դեմ կռվելու խնդրով առանձնապես զբաղվեցին Շտուտգարտի (1907 թ.) և Բազելի (1912) համագումարները։ Բայց այդ համագումարները բանակներից հեռու չգնացին։ Զանազան սոցիալիստական կուսակցությունների իրական պայքարը նրանք չէին ղեկավարում։ Բանվորական կուսակցությունների կյանքը միանգամայն այլ կերպ էր ընթանում։ Կուսակցությունները գլխավորապես—յեթե վոչ բացարձակապես—պարլամենտական գործունեությամբ էին զբաղված։ Նրանք ավելի ու ավելի էին տարվում բուրժուական պետության սպարապետներով։

Յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ մտնող սոցիալիստական կուսակցությունների մեծ մասը ձեվականորեն Մարքսի ուսմունքն էին դավանում։ Բայց չպետք է մոռանալ, վոր Մարքսի ուսմունքը իր մեջ յերկու տարբեր մասեր է պարունակում։ Մարքսն ամբողջ աշխարհի առաջ դուրս յեկավ վորպես մեծ գիտնական և բացեց կապիտալիստական հասարակության զարգացման որենքները։ Նա իր հանճարի ուժը գործադրեց կապիտալիստական հասարակության խորը հակասությունները հայտարերելու վրա։ Մարքսի ուսմունքի այդ նվաճումները վոչ միայն անսահման են, այլ նրանց կողքով չեն կարող անցնել աշխատավորների ամենավոխերիմ թշնամիներն ամգամ։ Պրոլետարիատի համար, սակայն, կարեվոր է Մարքսի ուսմունքի վոչ միայն այս մասը։ Մենք գիտենք արդեն, վոր Մարքսը բացառիկ նշանակություն էր տալիս բանվոր դասակարգի դիկտատուրայի գաղափարին։ Մարքսի ուսմունքը բոլոր ճնշվածների ու զրկվածների փարոսը դարձավ, վորովհետև նա աշխատավորների տանջանքներով ու բանվոր դասակարգի ստեղծագործական հաղթական կամքով էր թափթփված։

Պարլամենտական խաղաղասիրության պայմաններում Մարքսի ուսմունքի հեղափոխական վոգին սասիճանաբար գոլորշիանում էր։ Նույն իրկությունն առաջ յեկավ «վերաքննելու» Մարքսի «վտանգավոր», այսինքն ամենահեղափոխական մասերը, «մեղմացնելու» նրանց և պարլամենտական խաղաղ հանդիստ պայքարին հարմարեցնելու։ Այդ տեսակ փորձեր գրեթե միաժամանակ արվեցին Ֆրանսիայում և Գերմանիայում։ Ֆրանսիայում փորձեցին գործնականապես ուղղել սոցիալիստների մասնակցությունը բուրժուական կուսակցության մեջ թույլ տալու համար։ Միլերանը, վոր այն ժամանակ ֆրանսիական սոցիալիստական կուսակցության անդամ էր, իսկ այժմ ֆրանսիական վաշխառուական հանրապետության նախագահ, մտավ բուրժուական մինիստրության կազմի մեջ։ Գերմանիայում փորձ կատարվեց տեսականորեն վերաքննել հեղափոխության և նրա նախապայմանների խնդիրը։ «Վերատուգումը» (ռեվիզիան) սկսեց գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության հայտնի տեսաբան Ե. Բերնշտայնը։

Այդ վերաքննության խնդրի շուրջը յեռանդուն պայքար սկսվեց։ Նա իր արտահայտությունը գտավ Յերկրորդ Ինտերնացիոնալի Ամստերդամի համագումարում (1904 թ.)։ Միլերանի

պաշտպան ժորեսը, իմիջիայլոց ասաց, վոր մարքսիստների պարծանք գերմանական սոցիալ-դեմոկրատիան «կազմակերպած անզորություն է ներկայացնում իրենից։ Ժորեսը Միլերանի խնդրում, իհարկ է, սխալվում էր։ Նա չէր կարող նախատեսել, վոր սոցիալիստին կառավարության մեջ մտցնելը կապիտալիստների կողմից մի ճարպիկ շախմատային քայլ է, վորը նպատակ ունի քայքայել բանվորական շարժումը։ Ժորեսը չէր հասկանում նույնպես, վոր Միլերանը տիպիկ դավաճան է, վոր նա բանվոր դասակարգի մեջքի վրայով գեպի իշխանությունն է սողում։ Սակայն ժորեսը իրավացի յեր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ։ Նա ավելի իրավացի յեր, քան ինքն էր մտածում, վոչ միայն գերմանական սոցիալ-դեմոկրատիան, այլ Յերկրորդ Ինտերնացիոնալի բոլոր կուսակցությունները **կազակերպված անզորություն** էին ներկայացնում իրենցից։

Ամստերդամում մարքսիստները հաղթեցին։ Բայց դա միայն յերեվակայական հաղթանակ էր։ Միլերանին դատապարտող բանաձևի մեջ հեղափոխական խայթ չկար։ Բանաձևի մեջ կոնտրաբանդայով այն միտքն էր անցել, վոր հայրենիքի պաշտպանության նպատակով սոցիալիստը կարող է բուրժուական մինիստր դառնալ։ Մարքսի հպարտ խոսքերը, թե պրոլետարիատը հայրենիք չունի, թե նա կորցնել կարող է միայն շղթաները, մոռացված էին։ Հաղթված համաձայնողականները վստահ կարող էին ասել իրենց հաղթողներին՝ մի այդպիսի հաղթանակ յեվս և դուք վերջնականապես կորած եք։

Մարքսի ուսմունքի «վերաքննության» աշխատանքը շարունակվում էր։ 1870 թվին գերմանական սոցիալիստները հասկանում էին դեռ, վոր «արհեստակցական միություններն անկարող էին լուրջ ու քիչ թե շատ յերկար ժամանակով բարելավել բանվոր դասակարգի դրությունը»։ Յերեսուն տարուց հետո նրանք այդ բանը կասկածի տակ առան։ Զնկատելով վոր բանվոր դասակարգի դրության յուրաքանչյուր խարուսիկ բարելավումից հետո թանկությունը աճում է, նրանք սկսեցին պնդել, վոր բանվոր դասակարգը կարող է իր դրությունը լավացնել արհեստակցական միությունների միջոցով, բանվորական որենսդրության միջոցով, կապիտալիստական հասարակության մեջ և վոր այդ պատճառով նա պետք է վախենա հեղափոխությունից, վորի ընթացքում բացի իր շղթաները նա ուրիշ մի քանի բան էլ կարող է կորցրել։

Ավելի «համարձակ» քննադատները իրենց միտքը մինչև վեր չարտահայտեցին։ Նրանք հեղափոխությունը ժխտելով՝ մասնավոր բարեփոխումներ էին քարոզում։ Նրանք չէին կռվում իրենց կառավարությունների նվաճողական գաղութային քաղաքականության դեմ։ Ավելի վախկոտները Մարքսի խոսքերից էին պլինդ բռնում, սակայն գործնականում ռեֆորմիստների ու համաձայնողականների հետ էին գործում։ Առանձնապես հետաքրքիր է Շտուտգարդի համագումարը (1907 թ.)։

Այդ համագումարում գաղութների հարցն էր դրված։ Դա այն ժամանակ էր, երբ կապիտալիստական կառավարությունները արյունով ու երկաթով նոր կայսրություններ էին կառուցում՝ իրար մեջ բաժանելով «ազատ» հողերը։ Պարզվեց, որ ամենահարուստ, ամենաթալանչիական պետությունների սոցիալիստական կուսակցությունները յերկյուղով էին վերաբերվում գաղութային թալանի խիստ քննադատության։ Իմպերիալիզմի թույնը արդեն մտել էր Յերկրորդ Ինտերնացիոնալի ամենից խոշոր սոցիալիստական կուսակցությունների մեջ։ Ամբողջ աշխարհի միասնական բանվոր դասակարգն արդեն բաժանվեց սպիտակ և սև վոսկրի—արիստոկրատիայի և ճորտերի։

Յերկրորդ Ինտերնացիոնալի հանդիսավոր համագումարները շատ թույլ չափով էին արտացոլում այն թեք մակերևույթը, որի վրայով գալարվում էին իմպերիալիստական պետությունների սոցիալիստական կուսակցությունները։ Ավելի ցայտուն, ավելի պայծառ կերպով այդ կուսակցությունների անկումը վոչ թե համագումարների ճառերից ու բանաձևերից էր յերևվում, այլ գործից։ Դեռ «Կոմունիստական Մանիֆեստը» ընդգծել էր, թե կոմունիստների ուժը նրանումն է, որ նրանք բաց և բաց պատրաստվելով տապալել գոյություն ունեցող հասարակարգը՝ չենթադրվում իրենց հայացքներն ու տրամադրությունները։ Ահա հենց այդ բանն էին ծածկում ու մոռացում Յերկրորդ Ինտերնացիոնալի սոցիալիստական կուսակցությունների մեծամասնությունը։

1905 թվականի ռուսական հեղափոխությունը Յեվրոպայի բանվոր դասակարգի մեջ վորոշ կենդանություն առաջացրեց։ Ռոզա Լյուքսեմբուրգը պատմում է, որ 1905 թվականի սկզբին, երբ Պետրոգրադում թնդաց հեղափոխական փոթորկի առաջին վորոտը, գերմանական սոցիալիստների մեջ կենդանություն առաջացավ։ Այդ կենդանացման առաջին հետևանքը գերմանական սոցիալիստների Իյենայի համագումարում ընդհանուր գործադուլի մասին ընդունված բանաձևն էր։ Այդ բանաձևը ընդհանուր գործադուլը բանվոր դասակարգի քաղաքական պայքարի միջոցն էր համարում։ Գերմանական սոցիալիստների ձախ խմբակներն առաջ էլ փորձեր էին անում իրենց ուշադրությունը ակտիվ պայքարի ուղղությամբ զարգացնել, սակայն նրանք ռուսական հեղափոխության ազդեցության շնորհիվ միայն կարողացան մեծամասնություն ունենալ։ Ռուսական հեղափոխության հետագա զարգացումը՝ մանավանդ 1905 թվականի հոկտեմբերյան որերը, յերբ ռուս բանվորներն սկսեցին իրենց խորհուրդները կազմել ու կանգ չառան հեղափոխությունը բարիկադների վրա պաշտպանելու առաջ, կենդանությունն ուժեղացավ վոչ միայն Գերմանիայում այլ և ուրիշ յերկրների բանվորական մասսաների մեջ։

Ռուսական հեղափոխությունը յերկար չտևեց։ Նա պարտությունով վերջացավ։ Նրա առաջացրած կենդանությունն իջավ։ Յեվրոպական սոցիալիստները վերադարձան իրենց պարլամենտական պարապմունքներին։ Հեղափոխության ամենաթունդ քննադատներից վոմանք հինգ թվի պատմության մեջ դատն իրենց համաձայնական հայացքների ճշտության հաստատումը։

Սոցիալիստական կուսակցությունները շարունակում էին աճել ու ընդարձակվել։ Կապիտալն իր ամբողջ հոգով իմպերիալիստական ժտադրությունների ետ նվիրվել։ Սոցիալիստական կուսակցությունները միակ կուսակցություններն էին, որոնք կապ էին պահպանում ժողովրդական լայն մասսաների հետ։ Նրանց ձայն էին տալիս վոչ միայն բանվորները, այլ և մանրբուրժուական մասսաները, որոնք քանի գնում այնքան ավելի էին մուտք գործում սոցիալիստական կուսակցությունների մեջ։ Յեվ դա հասկանալի է։ Սոցիալիստական կուսակցություններն այլ յեվս սոցիալական հեղափոխության տեսիլով չէին սնվում։ Սոցիալիստները արժանապատիվ ավելի հայրենասերներ դարձան։ Նրանք կարողանում էին խոսքով հարձակվել կապիտալիստների վրա ու պերճախոս ճառել ի պաշտպանություն բանվոր մասսաների։

Վորքան շատ «ուղեկիցներ» էին շահում սոցիալիստական կուսակցությունները մանր-բուրժուական միջավայրից, այնքան համաձայնական թիվն ավելի յեր ուժեղանում։ Կոմունայի ավանդները մոռացվում էին։ Նրանց, հանդիսավոր դեպքերում հիշելն ուներ այն նշանակությունը, որ հեղափոխականորեն տրամա-

դրված մասսաները կապում եր սոցիալիստական կուսակցությունների հետ։ Հեղափոխական ֆրազան խաղաղ կերպով կենակցում եր համաձայնական գործելակերպի (տակտիկայի) հետ։ Սոցիալիստական կուսակցությունների նիստը տաք վեճերը շարունակվում եյին։ Նրանք հաճախ բուռն ընդհարումների բնավորություն եյին ստանում։ Հեղափոխականորեն տրամադրված բանվորների մեջ սոցիալիստական կուսակցությունների ուժասպառ համաձայնականության դեմ դժգոհություն եր առաջանում։

Սակայն սոցիալիստական կուսակցությունները բուրժուական պետությունների հետ սերտ կերպով կապված հզոր կազմակերպություններ եյին դարձել։ Հեղափոխական ազդեցություն նրանց վրա տարածելը քանի գնում ավելի յեր դժվարանում։ Յեվ դա, մանավանդ շնորհիվ նրան, որ համաձայնական կուսակցությունները հրաշալի կերպով տիրում եյին սոցիալիստական ֆրազային, որի ոգնությամբ իրենց ազդեցությունը պահպանում եյին բանվորական մասսաների վրա։

Այն յերկրներում, որտեղ սոցիալիստական կուսակցությունները լուրջ ույժ եյին ներկայացնում իրենցից, կազմակերպված բանվորական շարժումը լուրջ զիջումների յեր ձգտում։ Այդ զիջումներն առանձնապես շոշափելի եյին բանվոր դասակարգի վերին շերտերի համար, ավելի լավ սովորած, լավ վարձատրվող բանվորների համար, որոնք բանվորների քաղաքական ու տնտեսական կազմակերպությունների միջուկն եյին կազմում։ Ամերիկայում բանվորներին սպիտակ ու սեվ վոսկի բաժանելը ափաշկարա-ցինիկ կերպով եր տարվում։ Բանվորների ամենաճնշված մասի մուտքը միությունների առաջ փակելու համար չափազանց բարձր անդամավճարներ եյին սահմանվում։ Յեվրոպայում, որպես հնդհանուր կանոն, արհեստակցական միություններն այդ տեսակ միջոցները չեյին թույլ տալիս։ Յեվրոպական արհեստակցական կազմակերպությունների «դեմոկրատական» վարքագիծը, այնուամենայնիվ, չեր խանգարում, որպեսզի նրանք ել իրենց գործունեության ժամանակ հաշվի առնեյին գլխավորապես բանվորական արիստոկրատիայի շահերը։

Մարքսը Անգլիայում տասը ժամյա բանվորական օրվա որենք անցկացնելը սկզբունքի հաղթանակ անվանեց։ Հաղթանակը կայանում եր նրանում, որ կապիտալը հարկադրված յեղավ շահագործման գործում մի քանի «ազատություններից» հրաժարվել։ Բանվոր դասակարգի ճնշման տակ հետագայում

կապիտալը հարկադրված յեղավ աշխատանքի պաշտպանության վերաբերյալ մի շարք որենսդրական միջոցներ մտցնել, իսկ միությունները (ֆաբրիկանտների ու գործարանատերերի) բանվորական միությունների հետ պայմանագրեր սկսեցին կապել։

Կազմակերպված բանվորական դասակարգի այդ հաղթանակները հսկայական նշանակություն կարող եյին ունենալ, յեթե նրանք նկատվեյին որպես իշխանության համար կռվող պրոլետարիատի հենակետեր։ Սոցիալիստական կուսակցություններն այդ հաղթանակներին նայում եյին որպես ինքնանպատակի՝ մոռանալով պրոլետարական պայքարի վերջնական նպատակը՝ սոցիալիզմը։ Բանվորական կուսակցությունները կապիտալիստական հասարակության բաղկացուցիչ մասը դարձան, որը լավագույն դեպքում առանձին բարեփոխումների, առանձին զիջումների համար եր կռվում։ Հզոր միությունների մեջ կազմակերպված, հզոր պետական մեքենայով զինված, աճող բանակով պաշտպանվող կապիտալը բանվոր դասակարգի վերին շերտերին զիջումներ անելու համար միջոցներ եր գտնում։ Այդ զիջումների փոխարեն նա հարյուրապատիկ եր վարձատրվում։ Առաջին Ինտերնացիոնալը ուժեղ եր նրանով, որ նա իրոք բանվոր դասակարգը իշխանությունը գրավելու համար եր միացնում՝ հանուն սոցիալիստական գաղափարի իրագործման։ Նրա թույլ կողմը մասսայական պրոլետարական կազմակերպությունների բացակայությունն եր։ Յերկրորդ Ինտերնացիոնալի ժամանակ բանվորական մասսայական կազմակերպությունները մեծացան, ուժեղացան։ Սակայն Յերկրորդ Ինտերնացիոնալը չկարողացավ նրանց միացնել ու միջազգային հզոր ույժ դարձնել։ Նրա կազմի մեջ մտնող սոցիալիստական կուսակցությունները խոսքով սոցիալիստական լինելով՝ գործով ավելի ու ավելի ազգային կազմակերպություններ եյին դառնում։ Պրոլետարական համերաշխության տեղը իմպերիալիստական ձգտումները գրավեցին։ Սոցիալական հեղափոխությունն ապագայի մշուշապատ հեռուները մղվեց, նրա տեղը իմպերիալիստական - իշխանավորների սեղանից շպրտվող փշրանքները բռնեցին։ Բանվոր դասակարգին մնում եր Առաջին և Յերկրորդ Ինտերնացիոնալի փորձի վրա հենվելով՝ զբաղվել նոր մարտական կազմակերպության ստեղծումով։

IX

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Կար ժամանակ, երբ գաղութները կապիտալիստներին պետության վզին ընկած ջաղացաքարերի պես ծանր էին թվում։ Դա դեռ մասնավոր կապիտալի իշխանության ժամանակ էր, երբ այդ կապիտալը ազատ առևտրի և ընդհանուր խաղաղության մասին էր երազում։ Այդ պատանեական երազները մոռացվեցին այն ժամանակ, երբ կապիտալը բռնեց իմպերիալիստական զարգացման ուղին։ Ֆաբրիկանտների, գործարանատերերի և բանկիրների հզոր միությունները վոչ թե ազատության էին ձգտում, այլ անսահման տիրապետության, այսինքն մենաշնորհին։ Սկսված է գաղութներ վորսալու կատաղի շրջանը։

Ընկ. Լենինը իմպերիալիզմի մասին գրված գրքում մեզ պատմում է, թե ինչպես XIX յեվ XX դարերի սահմանում «վերջացված էր» աշխարհի բաժանումը։ 1876 թվից մինչեվ 1914 թիվը գաղութների տարածությունն ավելի քան մեկ ու կես անգամ ավելացավ։ 40 միլիոն կիլոմետրից (կիլոմետրը վերստից քիչ պակաս է) տարածությունը հասավ 65 միլիոն կիլոմետրի։ Յերկրի այդ հսկայական տարածությունը գտնվում էր վեց խոշորագույն պետությունների ձեռքում (Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ամերիկա, Յապոնիա և Ռուսաստան)։ Մինչեվ 1876 թիվը Գերմանիան, Ամերիկան և Յապոնիան վոչ մի գաղութ չունեին։ Այդպիսով ազատ յերկրների բաժանումը և գրավումը կատարվեց այն ժամանակ, երբ քաղաքական իշխանությունը կենտրոնացավ կապիտալիստների փոքրիկ խմբակի ձեռքում։

Բանի դեռ յերկրագնդի վրա կային «ազատ» յերկրներ, այսինքն այնպիսի յերկրներ, վորտեղ մարդիկ իրենց համար ազատ ապրում ու աշխատում էին, գաղութների գրավումը «խաղաղ» ճանապարհով էր կատարում։ Տիրապետողները կռիվ էին մղում միայն այն ժողովրդների հետ, վորոնց ստրուկ էին դարձնում։ Գիշատիչների մեջ արյունալի ընդհարումներ գրեթե չեյին տեղի ունենում։ Յուրաքանչյուր խոշոր պետություն իր հայեցողությամբ էր կոլորացնում իր տիրապետության սահմանները-մինչեվ յերկրի վերջնական բաժանումը։

Տիրապետության սահմանների կոլորացումը և լայնացումը

ամենադաժան միջոցներով էր կատարվում։ Ահա գիշատիչ Անգլիայի ներկայացուցիչ Սեսիլ Ռոդսի առաջին քայլերի համառոտ նկարագրությունը, յերբ նա գրավեց Ռոդեզեն (Հարավային Աֆրիկայում)։ Առաջին հերթին գրավված յերկրամասում նա ստրկություն մտցրեց։ Այդ «նոր ձեռնարկությունը» առաջացրեց ամբողջ խաղաղ ազգաբնակչության ընհանուր ապստամբությունը։ Վոչնչացման հզոր միջոցներով զինված «Քաղաքակիրթ» Անգլիան գաղանաբար ճնշեց ապստամբներին։ Պատմությունն ասում է, թե ապստամբության ճնշումից հետո կախած ապստամբների թիվն այնքան շատ էր, վոր անտառի ծառերը ծռվել էին նրանց մարմինների ծանրությունից։ Այդպես էին տիրություն անում իրենց գաղութներում բոլոր խոշոր պետությունները։

Ակցիոներական ընկերությունները ավելացրին չեկեր ստորագրելով իրենց վաստակը ստեղծող մարդկանց թիվը։ Գաղութային թալանչիական քաղաքականության զարգացման հետ միասին շահագործվող գաղութների հաշվին ապրող կապիտալիստները անգործներ-ազրուկներ դարձան։

Այդ ազրուկ կյանքի կատարյալ հաղթանակի համար, կապիտալին անհրաժեշտ էր բանվորների միջից վերին շերտը առանձնացնել, նրան աշխատավորների լայն խավերից կտրելու համար։ Մարկատերերի այդ ձգտումը ենգելսը նկատեց դեռ այն ժամանակ, յերբ դա տակավին սաղմային վիճակի մեջ էր։ 1858 թվին ենգելսը Մարքսին գրում էր, թե բոլոր ազգերից ամենաբուրժուական Անգլիան,—այդ ժամանակ գաղութների ամենից հարուստ տերն էր,—ձգտում է բանն այն տեղը հասցնել, վորպեսզի բուրժուազիայի կողքին «բուրժուական» պրոլետարիատ էլ լինի։ այսինքն շահագործողների հետ արյունակցական կապերով կապված պրոլետարիատ լինի։ Բիչ ուշ, այն է՝ 1881 թվին, ենգելսը գրում էր այն մասին, թե Անգլիայում գոյություն ունեն արհեստակցական միություններ, վորոնք թույլ են տալիս իրենց զեկավար ունենալ բուրժուազիային ծախված, կամ նրանից վարձատրություն ստացող մարդկանց։ Յերբ բոլոր մնացյալ պետությունները գաղութային հափշտակությունների ճամփան բռնեցին, ապա նրանք էլ ջանասիրությամբ սկսեցին աշխատել այլասեռել բանվոր դասակարգը։

Հզոր միությունների միջոցով վերացնելով մրցումը՝ կապիտալը բարձրացրեց իր վաստակը։ Խարեբայության ու կաշառակերության միջոցով նա ձեռք բերեց իրեն համար ներքին

հանգստություն։ Նա բաժան-բաժան արեց բանվոր դասակարգը— այլասերեց նրա վերին շերտերը։ Հզոր բանակների միջոցով նա նվաճեց իրեն համար բոլոր ազատ յերկրները։ Իր նվաճումների ու գյուտերի վրա հենվելով՝ նա ձեռք բերեց ազդուկի կյանք վարելու հնարավորությունը։ Մնում եր միայն բանկիրների ու ֆաբրիկանտների բոլոր միություններին մի այնպիսի միակ միության մեջ հավաքել, որը կարող կլիներ անսահման կերպով, առանց վերահսկողության, կառավարել ամբողջ աշխարհը։

Այս խնդիրը միացած ահռելի կապիտալի ուժերից բարձր եր։ Ամբողջ պետությունների մեջ միավորված գանազան միությունների միջով պայքար և սկսվում այն հողի վրա, թե դրանցից վերը պիտի ամբողջ աշխարհը կառավարող միակ միությունը դառնա։ Առանձին մասնավոր կապիտալիստների մեջ յեղած մրցման տեղը գանազան պետությունների կազմակերպված զինված պայքարը բռնեց։ Գաղութներ ձեռք բերելու ձգտումն առաջացրեց զինվորական ուժեղացում։ Աշխարհը վերջնականապես գանազան «հազդեցության շրջանների», այսինքն թալանի գանազան մասերի, բաժանելու բոլոր փորձերը ոչ մի հետևանքի չհասցրին։ Հզոր բանակների վրա հենվող մրցումը դեպի պատերազմներն եր տանում ճիշտ նույն անխուսափելիությամբ, ինչպես մասնավոր կապիտալիստների հին մրցումը ճգնաժամերի յեր հասցնում։

Իմպերիալիզմի զարգացման հետևանքով ամբողջ աշխարհի վրա սկսեց թափառել համաշխարհային պատերազմի ուրվականը։ Հանգուցյալ Ժորեսը XX դարու շեմքին յերկու ուժերի կատաղի խաղի մասին եր խոսում—միջազգային համերաշխության և միջազգային քայքայման ուժերի մասին։ Ժորեսի կարծիքով XX դարը պետք է վորոշեր, թե այդ ուժերից վերը կհաղթի։

Այս խնդրի լուծումն սատարվեց 1914 թվին։

Այն ժամանակ սոցիալիստական կուսակցությունները Յերկրորդ Ինտերնացիոնալի X համագումարին եին պատրաստվում։ Այդ համագումարը յենթադրվում եր համաշխարհային յեղբայրության մեծ ցույց դարձնել, վորովհետև 1914 թվին լրանում եր Առաջին Ինտերնացիոնալի հիսունամյակը և Յերկրորդ Ինտերնացիոնալի գոյության բանտինգամյակը։ Յեվ ահա, յերբ սոցիալիստական պատգամավորները պատրաստ եին ճանապարհ ընկնելու,- իսկ վոտանք արդեն ճանապարհվել եին—դեպի ընդհանուր հանդեսը, բռնկվեց համաշխարհային պատերազմը։

Պատերազմը պայծառ լույսով լուսավորեց II-րդ Ինտերնացիոնալի ներքին անզորությունը։ Մի վայրկյանում այրվեցին այն թելերը, վորոնք պիտի գանազան յերկրների բանվորներին միացնեին՝ պատերազմի դեմ պայքար մղելու համար։ Դրանց տեղը խորը խրամատներ եին փորված։ Բանկիրների և ֆաբրիկանտների միջազգային միությունը, ազդուկների և ստրկատերերի միությունները, յերկաթի և ածուխի բարոնների միությունները II-րդ Ինտերնացիոնալից ուժեղ դուրս յեկան։

Պատերազմը սկսվելուն պես II-րդ Ինտերնացիոնալի բոլոր կուսակցությունները, բացառությամբ Ռուսաստանի, Սերբիայի և հետո Իտալիայի, անցան իրենց կառավարությունների կողմը։ Գերմանական սոցիալ դեմոկրատիան իր գրոշակները կայզերին տվեց, ֆրանսիական սոցիալիստները—հանրապետական վարիչներին և այդպես բոլոր յերկրներում։ Ինտերնացիոնալի գրոշակները, վորոնք պատերազմի դեմ մղած կռվում միության սիմվոլը պետք է լինեին, համաշխարհային գիշատիչներին եին հանձնված։

Ստրկության մռայլ շրջանում կար ժամանակ, յերբ հռոմեական կայսրները սիրում եին նստել իրենց ոթյակներում ու հաճույքով նայել իրար հետ կռվող գլադիատորներին։ 1914 թ. ամբողջ Յեվրոպան հսկայական ցիրկի ասպարեզ եր դարձել։ Ոթյակներում ամբողջ աշխարհի բանկիրներն եին նստել։ Նրանք հաճույքով նայում եին, ինչպես միլիոնավոր գլադիատորներ—բանվորները և գյուղացիները,—ժամանակակից վոչնչացման հզոր զենքերի միջոցով իրար վոչնչացնելով են զրաղված։ Նրանց առանձնապես ուրախացնում եին ժամանակակից ստրուկների վրա ծածանվող II-րդ Ինտերնացիոնալի կարմիր դրոշակները։

Պատերազմի բռնվեցին գիշատիչների յերկու միությունները՝ մի կողմից Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Բելգիան, մյուս կողմից Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Տաճկաստանը։ Պատերազմն իր զարգացման ընթացքում նորանոր յերկրներ եր ընդգրկում։ Պատերազմը համաշխարհային հրդեհ դարձավ։ Այդ հրդեհի մեջ միլիոնավոր ժարդիկ այրվում, իսկ փոքրիկ խմբակները տաքանում եին։ Այդ խմբակների համար պատերազմն իսկական հանդիսավոր մի հաղթանակ եր։ Ամբողջ արդյունաբերությունը պատերազմի նպատակներին յենթարկվեց։ Ածուխի և յերկաթի բարոնները այնպիսի մի սպառող դառն,

ինչպիսին յերազում անգամ չեյին կարող տեսնել։ Կրիզիսների նման պատերազմը վոչ միայն ստեղծված մթերքներն ու վոչընչացնում, այլ և արտադրական ուժերը։ Պատերազմն ավելի արագ և ուժեղ ու գործում մոտավորապես տարը տարին մեկ անգամ կրկնվող կրիզիսներից։ Նա ամեն որ, անընդհատ վոչընչացնում ու քայքայում ու։ Դրա հետ միասին կռվող կողմերի տերերը հույս եյին պատում, թե պատերազմից հետո մրցակիցները վոչնչացված կլինեն և թե յերկրագունդը վերաբաժանելու ավելի հարմար հնարավորություններ կստանան նրանք։

Պատերազմը շարունակվում ու։ Մեռնում եյին միլիոնավոր մարդիկ։ Դաշտերը ծածկվում եյին ընկածների վոսկորներով։ Ծովերը կարմրում եյին մարդկային արյունից։ Կապիտալն այդ ահռելի «մսի մեքենային» նայում ու վորպես իր հզորությունը ուժեղացնող միջոցի։

Սակայն, հզոր գիշատիչներն իրենց հաշիվների մեջ սխալվեցին։ Մինչև պատերազմը կարելի յեր անպատիժ կերպով յերգել ու փառաբանել իմպերիալիզմը։ Պատերազմն ամեն մի քննադատությունից լավ ու գործում։ Նա հայտնաբերեց իմպերիալիստական կապիտալիզմի փթած, անպետք, զարշելի ներքին եյությունը։

Իզուր եյին աշխատում կռվող կողմերը իրենց գիշատիչ գործողությունները վարագուրել դեղեցիկ խոսքերով՝ մեծ գաղափարների մասին։ Արամատների մեջ, ռազմական գործողությունների անսահման դաշտում դժգոհությունն աճում ու նոր կայսրների դեմ, վորոնք ժամանակակից ամբողջ մարդկությունը դարձրել եյին սարուկ։

Պատերազմից տարի ու կես առաջ հավաքված II Ինտերնացիոնալի Բազելի հանդիսությունը ճիշտ արձանագրեց, վոր պատերազմը հող և ստեղծում ժամանակակից կապիտալիստական հասարակության քայքայման համար։ Նրանից ել ավելի առաջ, Ժորեսը ժամանակակից տերերին—իշխանավորներին, նախազգուշացնում ու, թե համաշխարհային պատերազմը հսկայական սասանում և առաջացնելու, վորը իրերի բերումով արյունալի հեղափոխության բնույթ կընդունի։

Պատերազմն այդ նախազգուշացումներն արդարացրեց։ Շենքը փուլ գալու ժամանակ առաջին հերթին նրա ամենաթույլ մասերն եյին ընկնում։ Կապիտալիստական ճնշման ընդհանուր շենքի մեջ ցարական բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանը ամենափթած մասն ու։ Նա առաջինն ու, վոր ընկավ դուրս յեկավ շարքից։ Ռուս բանվորները և գյուղացիներն ուենենալով յեկար ու համառ պայքարի հարուստ փորձ՝ կարողացան ոգտագործել այդ ժամանակը կապիտալին մահացու հարված հասցնելու ու իշխանությունն իրենց ձեռքն առնելու համար։

1917 թվի մարտի 14 (նոր տոմարով) Նիկոլայ II-ի արյունալի գլխից թագն ընկավ։ Դարերի ընթացքում տիրում ու միահեծան իշխանությունը՝ գիակների վրայից քայլելով ու անհնազանդներին ճնշելով։ Այդ իշխանության վրա եյին հենվում աշխարհի բոլոր մութ ուժերը։ II Ինտերնացիոնալի առաջին հանդումարում ռուսական սոցիալիստական կուսակցության հիմնադիր Պլեխանովն ասում ու, թե «ռուս թագավորները ոծյալ ժանդարմներ եյին։ Նրանք իրենց սրբազան պարարն եյին համարում պաշտպանել ու ոգնել յեվրոպական ռեակցիային՝ Պրուսիայից մինչև Իտալիան և Իսպանիան»։ Պլեխանովն ասում ու, թե «ռուս միահեծանության անկումը միջազգային հեղափոխական շարժման հաղթանակն և լինելու ամբողջ Յեվրոպայում»։

Ռուսական հեղափոխությունն անմիջականորեն ծննուզ առավ իմպերիալիստական պատերազմից։ Ամբողջ աշխարհն արյունից հարբել ու։ Սոցիալիստական կուսակցությունների ղեկավարները միանգամայն ընտելացել եյին իրենց իմպերիալիստական իշխանավորների սպասավորների դերին։ Ռուսական հեղափոխությունը Անտանտայի, այսինքն Գերմանիայի դեմ կռվող պետությունների միության յերկրների սոցիալ-համաձայնողական կուսակցությունների ղեկավարներին վախեցրեց։ Սոցիալիստ-իմպերիալիստները (այսինքն-խոսքով՝ սոցիալիստ, գործով իմպերիալիստ) զգացին, վոր ռուսական հաղթական հեղափոխությունը դուրս կգա պատերազմի դեմ և ազնիվ կերպով կպայքարի ժողովրդների հաշտության համար։ Դաշնակից յերկրներից Ռուսաստան սկսեցին գալ փորձված «սոցիալիստական» պերճախոսներ։ Նրանք ցանկանում եյին ռուսական հեղափոխությունը ծառայեցնել Անտանտայի իմպերիալիզմին։

Մարտի 11-ի լույս 12-ի գիշերը կազմվեց բանվորական պատգամավորների խորհուրդը։ Բանվորական խորհուրդները ծնվեցին 1905 թվի հեղափոխության ժամանակ։ Բանվորական մասսաները դեռ այն ժամանակ այդ խորհուրդները բանվորական կառավարություն եյին անվանում։ Բանվորական խորհրդի կազմակերպման փաստը հեղափոխության առաջին որը կարծես

դուշակում էր այն դերը, որը բանվոր դասակարգը կոչված էր կատարել հեղափոխության ժամանակ։

Միապետության անկումից հետո իշխանությունն անցավ բուրժուական կուսակցությունների ձեռքը, որոնք յերդվեցին պաշտպանել պատերազմի գործը մինչև նրա հաղթական վախճանը։ Սակայն, բուրժուական կառավարության կողքին գոյություն ուներ արդեն բանվորական խորհուրդը։ Բանվորական խորհուրդները խիտ ցանցով պատեցին ամբողջ յերկիրը։ Նույնպես սկսեցին կազմակերպվել զինվորական և գյուղացիական խորհուրդներ։ Բոլոր հեղափոխական խորհուրդների շարքում վճռական դերը բանվորական խորհուրդներն եյին խաղում։

Ճիշտ է, խորհուրդներում գերիշխում եյին սոցիալիստ-հեղափոխականները, որոնք և փորձում եյին II Ինտերնացիոնալի քաղաքականություն անցկացնել, սակայն ռուսական հեղափոխությունը նպաստավոր հող չեր իմպերիալիզմի հաջողության համար ընդհանրապես, իսկ սոցիալ-իմպերիալիզմի համար, մասնավորապես. Ռուսական իմպերիալիզմը չափազանց թույլ և թշվառ եր ռուսական բանվոր դասակարգի վերին շերտը այլասերելու համար։ Ռուսական բանվոր դասակարգը գրեթե ամբողջապես պարլամենտական քաղաքականության վրա չեր դաստիարակված։ Նրան վիճակվեց հեղափոխական պայքարի ուժով ճամփա բացել երեն համար։ Նրա առաջին քայլը, -1905 թվի հեղափոխությունը,—ստիպեց ապագա սոցիալ-իմպերիալիստներից շատերին խոսել այն մասին, թե ռուսական հեղափոխությունը սոցիալական հեղափոխության նախերգանքն և լինելու, թե նա դուրս է գալու Ռուսաստանի սահմաններից։ Ռուսական բանվոր դասակարգը կուռ բանվորական կուսակցություն ուներ։ Այդ կուսակցությունը զինված եր Մարքսի ուսմունքով, յերիտասարդ դասակարգի հաղթական կամքով, որը հաշվով վերջինը մտավ պրոլետարական ընտանիքի մեջ նրա մեջ առաջին տեղը գրավելու համար։

Մենք ի նկատի ունենք Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական (բոլշևիկների) բանվորական կուսակցությունը, որը համաշխարհային սոցիալ-դեմոկրատիայի դավանանության հանդեպ վերակազմվեց և Ռուսաստանի Կոմունիստական կուսակցություն դարձավ։ Այդ կուսակցությունը դեռ անցյալ դարի վերջում կտրուկ պայքարի ճանապարհը բռնեց այն բոլոր Սոցիալիստների դեմ, որոնք Մարքսի ուսմունքի դրոշակի տակ հա-

կահեղափոխական քաղաքականություն եյին բանեցնում։ Այդ կուսակցությունը Բուխարինի արդարացի արտահայտությամբ «իր մեջ մարմնացրեց պրոլետարական դասակարգի մեծությունն ու հզորությունը, նրա հերոսությունը, նրա դասակարգային բանականության պարզությունը, նրա մահացու ատելությունը դեպի կապիտալը և նրա հզոր ձգտումը դեպի նոր հասարակություն ստեղծելը»։

Հեղափոխության սկզբում այդ կուսակցությունը խորհուրդների մեջ փոքրամասնություն եր կազմում։ Նրա դաշնակիցը հեղափոխության հարձակողական ընթացքն եր։ Ինչ չափով վոր դեպքերը ծավալվում եյին, նա համաձայնական խորհուրդները հրում եր դեպի հեղափոխության խորացման ուղին՝ պահանջելով նրանցից իշխանությունը իրենց ձեռքում կենտրոնացնել։ Համաձայնողականների ղեկավարության տակ յեղած խորհուրդները, դաշնակցելով բուրժուական կուսակցությունների հետ՝ փորձում եյին Ռուսաստանի հեղափոխությունը իմպերիալիստական պատերազմի կատքին լծել։

Սկսվեց կազմակերպված բացարձակ պայքարը՝ հանուն Խորհուրդների իշխանության։ Այդ պայքարի մեջ կոմունիստական կուսակցությունն ուժեղանում և մեծանում եր։ Նա իր շուրջն եր հավաքում վոչ միայն բանվոր դասակարգի հեղափոխական շարքերը, այլ և զինվորների ու գյուղացիների լայն մասսաները։ Յեվրոպական սոցիալիստներին և նրանց ռուս-բարեկամ համաձայնողականներին հակառակ, նա լայն պարզեց իր սոցիալիստական դրոշակները՝ մերկացնելով պատերազմի արյանարբու շահերը և սոցիալիստ-հայրենասերների դավաճանական դերը։

Դժվար պայքար եր։ Դա կատարվում եր հեղափոխության պայմաններում, յերբ պատմության լոկոմոտիվը պատերազմի ալիքների վրայով ամբողջ թափով առաջ եր սլանում։ Բոլշևիկների ազդեցությունն ուժեղանում եր։ Հայտնի ոտարյերկրացիներ՝ Ամերիկայի Բոսսելը, անգլիայի Հինդերսոնը, Բելգիայի Վանդերվելդեն Ֆրանսիայի Ալբերթ Թոման—Չկարողացան սոցիալ-համաձայնողականներին անխուսափելի խորտակումից փրկել։ Սոցիալ-համաձայնողականներին չփրկեց նույնվ բոլշևիկական շարժումը ժողովրդական մասսաների արյան մեջ խեղդելու փորձը։

Բանվոր դասակարգը կուռ ու հզոր կուսակցության ղեկավարության տակ իր հաղթանակն եր զարգնում։ Նա զինված

ապստամբության միջոցով պատրաստվում էր գրավել իշխանությունը։

1917 թ. նոյեմբերի 7-ի գիշերը հանձնաժողովական ժամանակավոր կառավարության իշխանությունը տապալվեց։ Հենց նույն օրը խորհուրդների յերկրորդ համագումարը խորհուրդները իշխանության լիազոր մարմիններ հայտարարեց։

II Ինտերնացիոնալի I համագումարում արտասանած ճառի մեջ Պլեխանովը դուշակում էր, «Ռուսաստանի հեղափոխական շարժումը կհաղթանակի միմիայն վորպես բանվորական հեղափոխական շարժում»։ Նրա խոսքերը արդարացան Խորհրդային իշխանության հաստատման մեծ օրը։ Ինքը՝ Պլեխանովը, այդ ժամանակ բարիկադների այն կողմն էր գտնվում։ II Ինտերնացիոնալի զեկավարների նման, նա յել հանցավոր իմպերիալիստական սպանդանոցի պաշտպանը դարձավ։ Ռուսական բանվոր դասակարգը բավականաչափ ուժեղ դուրս յեկավ հին Պլեխանովի հեղափոխական ավանդներն իրականացնելու և դեպի անդունդը տանող ճանապարհով նրան չհետևելու համար, յերբ նա թիկունքով կանգնեց դեպի հեղափոխությունը։

Ցեթե մենք 1917 թվի նոյեմբերի 7-ի օրը համեմատելու լինենք 1871 թ. մարտի 18-ի հետ, ապա կտեսնենք այն մեծ ճանապարհը, վորով բանվոր դասակարգն անցել է Փարիզյան կոմունայից մինչև մեծ ռուսական հեղափոխությունը։

1871 թվի մարտի 18-ին իշխանությունն անցավ բանվոր դասակարգի ուսերի վրա։ Ռուսական բանվոր դասակարգը իշխանության գրավման գիտակցաբար էր պատրաստվում և բնական է, վոր շուտ կարողացավ տիրանալ պետական մեքենային։ Փարիզյան կոմունարներն առաջին օրերը իրենց կորցրին։ Նրանք վճռականություն չունեցան ջարդելու ջախջախված թշնամուն՝ մոռանալով, վոր կտրած անտառը նորից է բուսնում։ Ռուս բանվորները գրավելով իշխանությունը՝ հաստատ ու համառ կերպով սկսեցին այդ իշխանությունն ուժեղացնել և ընդարձակել։ Կոմունարներն առաջին օրերը համաձայնություն եյին փնտրում բուրժուազիայի հետ, նրանք կորցրին նախաձեռնությունը։ Ռուսական բանվոր դասակարգը իշխանությունը գրավելուց հետո գիտակցում էր, վոր ամեն մի հեղափոխության անցողական շրջանը ամենախիստ դիկտատուրա յե պահանջում։ Պատերազմի հրդեհի մեջ ծնված ռուսական հեղափոխությունը գիտակցության ու կամքի շախկապումով՝ ուժեղ կուսակցության

զեկավարության տակ, վոչ միայն կարողացավ դիկտատուրա հաստատել, այլ և իրագործեց կյանքի մեջ։

Բանվորական հեղափոխությունը շշմեցրեց քաղաքենուն պարզ յերկնքից լավող վորոտի պես։ Այդ հեղափոխությունը կապիտալիզմի և նրա ուղեկից բանվորական շարժման պատմական զարգացման անխուսափելի հետևանքն էր։ 1917 թվի հեղափոխությունից 12 տարի առաջ, ռուսական պրոլետարիատի առաջին անգամ քաղաքական ասպարեզ իջնելու փոթորկոտ տարիներին սկսվեց պարզվել, վոր կապիտալիզմի քայքայման պայմաններում ռուսական հեղափոխությունը չի բավականանալ միայն պետության տապալումով, վոր նա կգնա առաջ—սոցիալիզմի պատվերների իրագործման ճանապարհով։ Դեռ այն ժամանակ մի քանի ծագեց, վոր ռուսական հեղափոխությունը «անվերջ տևողական և լինելու» («перманентный»), վոր նա շարունակվելու յե այնքան ժամանակ, մինչև վոր չիրականացնի աշխատանքի ազատագրության գործը (այդ միտքն ընկ. Տրոցկին արտահայտեց դեռ 1905 թվի վերջին)։ Խորհրդային իշխանությունն առաջին մեծ միջազգային քայլը Ռուսաստանի և նրա դաշնակիցների միջև կնքված գաղտնի դաշնագրերը հրատարակելն էր։ Այդ դաշնագրերը համոզեցուցիչ պարզությամբ ցույց տվին, վոր դաշնակիցները կռվում են Գերմանիան անդամահատելու, Ավստրիան և Տաճկաստանը թալանելու համար։ Ժողովրդների ինքնորոշման վերաբերյալ գեղեցիկ խոսքերը, ժողովրդական մասսաներին խաբելու համար եյին հնարված։ Խորհրդային իշխանության առաջին քայլն արդարացրեց Ռուսաստանի կոմունիստական կուսակցության քաղաքականությունը, վոր պատերազմի առաջին իսկ օրից դուրս յեկավ ընդհանուր հայրենասիրական հոսանքի դեմ՝ կոչ անելով աշխատավորներին գիշատիչների միջև մղվող պայքարը վերածել կապիտալի ու աշխատանքի դասակարգային պայքարի։

Ինքնին հասկանալի յե, վոր Խորհրդային իշխանությունը համաշխարհային սպանդանոցին մասնակցելու վոչ մի մտադրություն չուներ։ Նա բոլոր կռվող պետություններին դիմեց հաշտություն կնքելու առաջարկությամբ։ Այդ առաջարկին միայն Գերմանիան ձայնակցեց։ Նա ռուսական հեղափոխությունը և հաշտության դաշնագիրը իր թալանչիական նպատակների համար եր ուզում օգտագործել։ Իսկ դաշնակիցները, Խորհրդային իշխանությունը տապալելու նպատակով, սկսեցին հակա-հեղափոխությունը կազմակերպելով զբաղվել։ Բանվորների և գյուղացիների միության վրա հենվող հաղթական Խորհուրդները

չափազանց ծանր դրության մեջ ընկան։ Նոյեմբերի 7-ի հաղթանակը նոր արյունալից կռիվների նախերգանքն եր միայն

Այն ժամանակ խորհուրդները դեռ անզոր եյին հաղթական Գերմանիային դիմադրելու։ Նրանք հարկադրված եյին համաձայնել Թալանչիական Գերմանիայի առաջարկած հաշտության։ Խորհրդային հանրապետության վրին կապած հաշտության պայմանագրի վրա հենվելով՝ Գերմանիան նորանոր հողեր սկսեց գրավել Միաժամանակ բուրժուական կուսակցությունները, սոցիալ-դավաճանների հետ միասին, անտանտայի ոգնությամբ Խորհրդային իշխանության դեմ սկսեցին ապստամբությունների նորանոր խարույկներ վառել։ Յերիտասարդ Խորհրդային հանրապետությունը բոցավառվող ոդակի մեջ ընկավ։

Ահա այստեղ է, որ հայտնարերվեց ռուսական հեղափոխության հզոր ստեղծագործող ուժը։ Կառուցիչ փորձելով արդարացնել Յերկրորդ Ինտերնացիոնալի պառավական անզորությունը՝ թեորյա ստեղծեց այն մասին, թե ռազմական գործը բանվոր դասակրգի ուժեղ կողմը չի։ Այդ թեորիայից դուրս եր գալիս այն, որ բանվոր դասակարգին մնում է մինչեվ ատամները զինված կապիտալի հետ համաձայնության ուղիներ փընտրել միայն։ Ռուսական բանվորներն ահավոր վտանգի դիմաց միանալով գյուղական աղքատների հետ՝ սկսեցին կազմակերպել իրենց զինված ուժերը։ Նրանք գիտակցում եյին, որ իր անզորությունը գիտակցող անգին պրոլետարիատի «համաձայնությունը» հզոր կապիտալի հետ, փաստորեն կապիտալի ափաշկարա իշխանությունն է նշանակում։ Համաշխարհային պրոլետարիատի բազմաչարչար փորձով զինված ռուսական բանվորները համարձակ կռվի դուրս յեկան հրեշավոր թշնամու դեմ։

Պայքարն ամբողջ յերեք տարի տեվեց։ Բուրժուական բոլոր կառավարությունները փորձեցին խորհրդային իշխանությունն իրենց ավիններով տապալել։ Ռուս բանվորին վիճակվեց ընդհարվել յապոնական, գերմանական, ֆրանսիական, անգլիական, լեհական և միջազգայի կապիտալի ուրիշ ամեն տեսակի ուժերի հետ։ Իր բանակը բանվոր դասակարգը հարկադրված յեղավ թշնամիների անմիջական հարվածների տակ կազմակերպել, որովհետև ցարական հին բանակը խորհրդային իշխանությունը վաղուց եր ցրել։ Կռվի դաշտում աշխատանքի հզոր բանակը մեծանում և ուժեղանում եր։ Նա հարվածներին վոչ միայն հարվածներով եր կարողանում պատասխանել, այլ և բավական ուժեղ դուրս յեկավ աշխատանքի հանրապետությունը նրա բոլոր թշնամիներից պաշտպանելու գործում։

Ռուս բանվորները կրակի գծի վրա ցույց տվին և ապացուցեցին, որ նրանք կարողանում են տիրել պատերազմի և հաղթանակի գործիքին։

Ինքնին հասկանալի է, որ կարմիր բանակն վոչ միայն իր կազմակերպությամբ և գիտակցությամբ եր ուժեղ, այլ և այն զենքով, որը փարիզյան կոմունայի ժամանակից «սոցիալիստական հեղափոխության արտիլերիա» և կոչվում։ Կոմունայի ժամանակները հաշաշխարհային պրոլետարիատը չեր կարող ապստամբ փարիզյան պրոլետարիատին ոգնություն ցույց տալ։ Մեծ ռուսական հեղափոխության ժամանակ կապիտալիստական պետություններն անզոր եյին իրենց սարուկների լայն մասսաներին ստիպելու, որ նրանք ռուս ապստամբ պրոլետարիատի դեմ ակտիվ կերպով կռվի դուրս գան։ Կարմիր բանակը հաղթանակում եր։

Կարմիր բանակի պայքարը հայրենի և համաշխարհային հակա-հեղափոխության դեմ ցույց տվեց, որ հետաքաքրքրված հյուծված յերկրում կատարված ռուսական հեղափոխությունն ապագայի ուժերն և ամրացնում իր մեջ, այնինչ անցյալի փորձով ու թալանած հարստություններով ուժեղ համաշխարհային կապիտալը քայքայվող ու փտող ուժն է ներկայացնում։ Իրենից։ Դեպի Խորհրդային հանրապետությունը ատելությամբ ու վախով ներշնչված՝ համաշխարհային կապիտալն անընդունակ դուրս յեկավ մինչեվ անգամ իր ջանքերը միացնել՝ նոր Ռուսաստանի դեմ հաջող պայքար մղելու համար։ Կապիտալիստների զանազան միությունների մեջ յեղած մրցումը հակա-հեղափոխության կամքը թուլացնում եր, իսկ հաղթական կամքով ուժեղ հեղափոխությունը թշնամական բանակները վոչնչացնում եր մեկը մյուսի հետևվից։

Խորհրդային իշխանությունն իր բոլոր թշնամիների հետ բանվորների և գյուղացիների դիկտատուրայի դրոշակի տակ եր կռվում։ Նա հաստատ ու համառ կերպով հողերի ու արտադրության գործիքների հասարակացման գործն եր առաջ տանում։ Հողը, ֆաբրիկաները, գործարանները, արհեստանոցները, կալվածատերերի և կապիտալիստների ձեռքից խլվեցին։ Նրանք անցան բանվորա-գյուղացիական պետության ձեռքը։ Առանց իր նպատակները ծածկելու՝ տիրող դասակարգերի ընդդիմադրությունը

համառորեն կոտրելով՝ խորհրդային իշխանությունը հաստատում էր նոր դեմոկրատիա՝ աշխատավորների դեմոկրատիան։

Ռուսական հեղափոխությունը գործում էր մի այնպիսի ժամանակ, երբ բուրժուական դեմոկրատիայի սուրը վաղուց էր մերկացված։ Խորհրդային իշխանությունը հաստատ ու համարձակ կերպով բոլոր ձրիակերներին ու տգրուկներին զրկեց ընարողական իրավունքից՝ ամեն կերպ ձգտելով աշխատավորների ազատության նյութական նախապայմաններ ստեղծել։

Խորհրդային իշխանության էդեալները իրենց ցայտուն արտահայտությունը գտան նրա սահմանադրության մեջ։ Բուրժուական հեղափոխությունը աշխատավորներին իրավունքների սավերը տվեց միայն, վորովհետև նա իշխանության ու ճնշման բոլոր գործիքները կապիտալիստների ձեռքին էր թողել։ Ռուսական բանվորները գիտեին, վոր աշխատավարձի ստրուկի համար ազատությունը խաբուսիկ ու դատարկ մի հնչյուն է։ Ցեվ իրոք, բուրժուական դեմոկրատիայի բոլոր ազատությունները փաստորեն մի ազատություն էին—շահագործման ազատություն։ Ռուսական հեղափոխությունը նոր կյանքը կառուցում էր այլ կերպ։ Աշխատանքի հեղափոխության ընտրած նոր ճանապարհը պարզ կերպով ցույց տալու համար, մենք թույլ ենք տալիս մեզ խորհրդային սահմանադրությունից չորս կետ մեջ բերել։ Խորհրդային սահմանադրության մեջ (հատված II գլուխ V) կարդում ենք։

«14. Աշխատավորների իրենց մտքերը արտահայտելու իրական ազատությունն ապահովելու նպատակով՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը վոչնչացնում է մամուլի կախումը կապիտալից և թերթերի, բրոշյուրների, գրքերի ու մամուլի բոլոր ուրիշ արդյունքների հրատարակության բոլոր տեխնիկական ու նյութական միջոցները տալիս է բանվոր դասակարգի ու գյուղական աղքատների ձեռքը՝ ապահովելով այդ հրատարակությունների ազատ տարածումը ամբողջ յերկրում։

«15. Աշխատավորների ժողովների իրական ազատությունն ապահովելու նպատակով՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունն ընդունելով Խորհրդային Հանրապետության քաղաքացիների ազատ կերպով ժողովներ, միտինգներ, շքերթներ և այլն կազմակերպելու իրավունքը՝ բանվոր դասակարգի և գյուղական աղքատների տրամադրության տակ է դնում ժողովրդական հավաքույթներ կազմակերպելու համար պետական բոլոր շենքերը, նրանց կահկարասիքով, լուսավորությամբ ու վառելիքով»։

«16. Աշխատավորների միությունների իրական ազատությունն ապահովելու նպատակով՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը տապալելով ունեվոր դասակարգերի տնտեսական և քաղաքական իշխանությունը, վորոնք մինչ այդ բուրժուական հասարակության մեջ խանդարում էին բանվորներին և գյուղացիներին ոգտվել կազմակերպության ու գործողության ազատությունից, ցույց կտա բանվորներին և աղքատ գյուղացիներին բարոյական և այլ ամեն տեսակի աջակցություն՝ նրանց միավորման ու կազմակերպման գործում»։

«17. Գիտելիքներն աշխատավորներին մատչելի դարձնելն ապահովելու նպատակով՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունն իրեն նպատակ է դրել տալիս բանվորներին և աղքատ գյուղացիներին տալ լրիվ, բազմակողմանի և ձրի կրթություն»։

Ռուսական մեծ հեղափոխությունը համաշխարհային պատերազմից ծնվեց։ Նա թալանի նպատակով ձեռնարկված հափշտակիչների պատերազմը վերածեց դասակարգերի քաղաքացիական կռվի՝ հանուն աշխատանքի ազատագրության։ Քաղաքացիական կռվում նա ընդհարվեց զինված թշնամիների հետ՝ հանձին համաշխարհային կապիտալի զանազան բանակների և այդ կռվից դուրս յեկավ հաղթական։ Նա կառուցեց աշխատանքի առաջին հանրապետությունը, վորը թշնամիների հարվածների տակ մեծանում ու ամրանում էր։ Նա կառուցեց միջազգային բանվոր դասակարգի առաջին հզոր բերդը։ Ցեթե Փարիզյան կոմունան դարերի խորքը ճեղքող կայծակ էր միայն, ապա Խորհրդային Հանրապետությունը նոր լուսավոր օրի արշալույսն յեղավ։

Ցերբ բուրժուազիան դեռևս լի յեր ուժերով, բանվորների առաջավոր ջոկատը «հավասարություն մեր խրճիթների տակ» լոզունգը հայտարարեց։ Ցերբ պրոլետարիատն ամրացավ, նա բուրժուազիային իր մեծ ճակատամարտը տվեց--1848 թ. հունիսյան օրերին։ Իշխանությունը նրանից գրավելու համար։ Այդ նույն ժամանակ բանվոր դասակարգի դեկավարները գտան հասարակության պատմական զարգացման այն յերկաթե օրենքը, վորը բանվոր դասա-

կարգի հաղթանակն անհրաժեշտ է դարձնում։ Գիտական սոցիալիզմի զենքով զինված՝ պրոլետարիատը միջազգային պայքարի ուղին է բռնում։ Պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու համար կատարած առաջին փորձը,—Փարիզյան Կոմունան,—բանվոր դասակարգին հնարավորություն և տալիս գծելու սոցիալիստական հեղափոխության ուղին, վորը կոչված է վերջ տալու կապիտալիզմին և նրա ավերակների վրա ստեղծելու կոմունիստական հասարակությունը։

Կապիտալը փոխեց իր զինավորումը։ Նա հզոր միությունների մեջ կազմակերպելով և կանգնելով թալանի ու պատերազմի ճանապարհի վրա՝ այլասերեց բանվոր դասակարգի վերին խավերը և այդպիսով զինաթափ արեց նրան։ Կապիտալի նոր քաղաքականությունը ստեղծեց արյունալի սպանդանոց, վորի մեջ շարժվել ու ծավալվել սկսեց համաշխարհային սոցիալական հեղափոխությունը։ Հետամնաց յերկրի պրոլետարիատը հպարտ կանգնեց, դարձով տիրող դասակարգ՝ դասակարգային տիրապետությանը վերջ տալու համար։

X

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՅԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Փարիզյան կոմունան համոզեցուցիչ կերպով ցույց տվեց, վոր բանվոր դասակարգը չի կարող հին ռեժիմի պետական պատրաստի մեքենան միայն գրավել և գործի դցել իր նպատակների համար։ Պետական իշխանությունը տիրող դասակարգի ներքին եությունն արտահայտող մի գործիք է։ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը Մարքսի պատկերավոր արտահայտությամբ մի հսկա ավել եր, վորը մաքրեց կալվածատիրական կարգերի ավգյան ախոռները։ Ճորտատիրական կարգերի փլատակների վրա բուրժուազիան կառուցեց իր պետական մեքենան։ Այդ մեքենան, բուրժուական հասարակության մեջ կատարված փոփոխություններին համեմատ՝ դանազան փոփոխությունների յեր յենթարկվում։ Սակայն, նա միշտ բուրժուական շահագործման գործին եր ծառայում։ Բնական է, վոր պրոլետարական հեղափոխությունը սկսվում է բուրժուական ճնշման մեքենայի քայքայումով։

Սոցիալ-հայրենասերները՝ այսինք խոսքով սոցիալիստները, իսկ գործով իրենց բուրժուական հայրենիքի պաշտպանները,

մասսաներին ամեն կերպ ուզում էին համոզել, վոր պարլամենտում հաջող կերպով ձայների մեծամասնություն շահելով՝ կարելի յե ազատվել հեղափոխության փոթորկից և զրկանքներից։ Այդ կեղծիքը մի կողմից պարզամիտների համար եր, մյուս կողմից հեղափոխությունից վախեցողների։ Փաստորեն պարլամենտը բուրժուական իշխանության ապարատներից մեկն է։ Ամերիկական բուրժուազիան ոգտվում է իր իշխանությունից՝ թույլ չտալու համար պարլամենտ մտնել նույնիսկ յերկրորդ Ինտերնացիոնալի հավատը դավանող սոցիալիստներին։ Յեվրոպական բուրժուազիան կարողացավ պարլամենտական սոցիալիստներին ոգտագործել՝ հեղափոխական սոցիալիզմի դեմ կռվելու համար։ Մեր առաջից, իհարկե, չպետք է յեզրակացնել, թե հեղափոխական սոցիալիստները, այսինքն կոմունիստները, չպետք է մուտք գործեն բուրժուական պարլամենտը։ Բոլորովին վոչ։ Հեղափոխական պրոլետարիատը պետք է ոգտվի պարլամենտից՝ հանուն իր իշխանության կռվելու համար։ Բանվոր դասակարգի ներկայացուցիչները պարլամենտում առաջին հերթին պարտավոր են մերկացնել պարլամենտի դերը, վորը բուրժուական ճնշումը քողարկող մի հիմնարկություն է ներկայացնում իրենից։

Կապիտալին հաջողվեց պարլամենտի միջոցով յերկրորդ Ինտերնացիոնալի սոցիալիստներին ձեռնասուն դարձնել։ Այդ սոցիալիստները պարլամենտը մասսաներին ներկայացնում են վորպես նրանց ազատագրության ճանապարհ։ Բուրժուազիան շատ լավ գիտե, վոր քանի դեռ տնտեսական և քաղաքական իշխանությունն իր ձեռքին է, նա միշտ կարող է իրեն համար պարլամենտում մեծամասնություն ապահովել։ Ծայրահեղ դեպքում, յեթե պարլամենտը նրա ձեռքից գնա, նա կարող է ցրել տալ այդպիսի պարլամենտը։ Այդ պատճառով բանվոր դասակարգի համար պարլամենտը մասսաներին հեղափոխական պայքարի համար կազմակերպելու ու միացնելու միջոցներից մեկն է միայն։ Իսկ այդ պայքարը ծառայում է բուրժուական կարգերը բռնի կերպով տապալելու նպատակին։

Այդ մտքի ճշտությունը փայլուն կերպով ապացուցեց Ռուսաստանի մեծ հեղափոխությունը։

Խորհրդային իշխանությունը հայտարարեց բանվորների, գյուղացիների և զինվորների յերկրորդ համագումարը։ Մարդկության պատմության մեջ դժվար թե այդքան մեծ քանակությամբ մարդկանցով ընտրված պարլամենտ յեղած լինի։ Խորհուրդների

ընտրություններին մասնակցելու իրավունքն այն ժամանակ սահմանափակված չեր բոլորովին։ Խորհուրդներից դուրս եյին մնացել միայն մի բուռն կապիտալիստներ և կալվածատերեր։ Ընտրություններն այն ժամանակ եյին կատարվում, յերբ պետական և մասամբ խորհրդային ապարատը բուրժուական և սոցիալ-համաձայնողական կուսակցությունների ձեռքին եր գտնվում։ Այն ժամանակ վոչ-վոր չեր կարող կասկածել, վոր ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը բոլշեվիկների հետեվից և գնում։ Այնուամենայնիվ նոյեմբերի 7-ի մեծ ակտը հեղափոխական պայքարի սկիզբն եր միայն։

Յերիտասարդ Խորհրդային իշխանությունը չեր կարող ոգտագործել հին պետական մեքենան, չնայած վոր հեղափոխության կողմն եր անցել բանակի ճնշող մասը, վորը սովորաբար հին կարգերի վերջին հենարանն և հանդիսանում։ Հին պետական մեքենան մասամբ քայքայվեց, դրա հետ և բանակը։ Հին իշխանության մնացած բջիջները հակա-հեղափոխության հենարանը դարձան։ Խորհրդային իշխանությանը վիճակվեց կազմակերպել նոր ապարատ՝ համեմատ այն նոր խնդիրների, վորոնք իր առջև դնում եր կառավարության դեկն իր ձեռքն առած նոր դասակարգը։ Շինարարությունը կատարվում եր թշնամու կրակի տակ, այն թշնամու, վորն ամենավին մտադիր չեր յենթարկվել ազգաբնակչության ճնշող մեծամասնության կամքին։ Ռուսական հեղափոխության միջազգային բնավորությունը վոչ թե այլ յերկրների բանվոր դասակարգի ակտիվ ոգնության միջոցով արտահայտվեց, այլ միջազգային կապիտալի Խորհրդային հանրապետության վրա կատարած հարձակման միջոցով։

Ռուսական հեղափոխությունը նորից ցույց տվեց, վոր մահվան ու քայքայման Ինտերնացիոնալը,—կապիտալի Ինտերնացիոնալը,—կապիտալի շահերը ավելի լավ և հասկանում, ավելի ակտիվ և պաշտպանում, քան թե Յերկրորդ Ինտերնացիոնալը բանվոր դասակարգի շահերը։

Ռուսական բանվոր դասակարգին վիճակվեց կասեցնել թշնամու կատաղի գրոհը և միաժամանակ իրականացնել իր ծրագիրը, այն է՝ կյանքի մեջ անցկացնել հողերի և արտադրության գործիքների համայնացումը։

Գիտական սոցիալիզմն այս խնդրի եությունը վորոշել եր միայն։ Ռուս բանվորին վիճակվեց նրա գործնական լուծման

պատվավոր, բայց չափազանց ծանր պարտականությունը։ Այդ պարտականության դժվարությունը ամենից առաջ նրա նորության մեջ եր կայանում։ Նա դժվարանում եր մանավանդ նրանով, վոր բանվոր դասակարգը, վորպես այդպիսին, փոքրամասնություն եր կազմում բանվորների և գյուղացիների այն միության մեջ, վորն իրագործեց հեղափոխությունը։ Գյուղացիները բոլշեվիկների հետեվից եյին գնում հանուն խաղաղության և հողի։ «Հողը ժողովրդին»—լոզունգի տակ՝ գյուղացին հողը բաժանելը և նրա վորպես մասնավոր սեփականություն տալն եր հասկանում։ Ռուսական հեղափոխության սոցիալիստական խնդիրները գյուղացիական լայն մասսաներին խորթ եյին։ Ճիշտ է, հեղափոխական մեծ թափը գյուղացիության առաջավոր խավերը շատ առաջ մղեց։ Հեղափոխության մեծ իմաստը գրավում և հրապուրում եր առանձնապես գյուղի աղքատներին. նրանք մեծ կերպով զգում եյին, վոր բոլշեվիզմը ձգտում է աղքատության լիակատար վերացման ու իրական հավասարության իրագործման։ Սակայն գյուղացիական լայն մասսաները քաղաքացիական կռվի պայմաններում դեռ շատ յերկար ժամանակ անկայուն և տատանվող ույժ եյին ներկայացնում իրենցից։ Քաղաքացիական կռիվը ցույց տվեց, վոր գյուղացիական մասսաները պետք է ընտրություն անեն մի կողմից բանվոր դասակարգի, մյուս կողից կալվածատերերի, գեներալների ու բանկիրների միության միջև։ Քաղաքացիական կռիվը ամրացրեց բանվորների և գյուղացիների միությունը, այն միությունը, վորն ապահովեց նրա հաղթանակը։

Պատմությունը հոգ տարավ, վորպեսզի 1848 թվականի հունիսյան գեղջերի արյունալի պարտությունը չկրկնվի։ Ռուս գյուղացիությունը բանվոր դասակարգի հետ գնաց և հայրենիքի և համաշխարհային հակա-հեղափոխության դեմ։

Սակայն բանվոր դասակարգն իր ծրագրի իրագործումը չեր կարող մինչև քաղաքացիական կռվի վերջը հետաձգել։ Ընդհակառակը, քաղաքացիական կռիվն ինքը, բանվոր դասակարգից պահանջեց կարուկ ու շուտափույթ միջոցներ ձեռք առնել։ Կապիտալի դիմադրական ույժը ճնշելու համար նա պետք է զինաթափ աներ կապիտալին, այսինքն խլեր նրա տնտեսական դիրքերը։ Նա պետք է իր ձեռքը վոչ միայն կալվածատիրական սեփականության վրա դներ, այլ և բուրժուական «սրբազան» սեփականության վրա։ Պատմության կամքին յենթարկվելով՝

բանվոր դասակարգը չբավականացավ հողը բանվորա-գյուղացիական պետության սեփականություն հայտարարելով. նա սկսեց ազգայնացնել ֆաբրիկաները, գործարանները, արհեստանոցները և բուրժուական առևտրի ամբողջ ապարատը։

Բանկերի, ֆաբրիկաների և գործարանների ազգայնացումը, այսինքն ազգին՝ պետությանը հանձնելը, տարերային կերպով էր կատարվում։ Բանկիրների, ֆաբրիկանտների և գործարանատերերի մաքովն անգամ չէր անցնում, թե աշխատանքի հեղափոխությունը հաղթական և լինելու։ Նրանք ցանկանում էին ոգնել, հեղափոխության (իրենց կարծիքով) անխուսափելի խորտակման։ Ֆաբրիկաները և գործարանները փակելու մեջ նրանք հեղափոխությունը ուժասպառ անելու լավագույն միջոցն էին տեսնում։ Բանկիրներն իրենց տեսուչների հետ ֆաբրիկանտները կառավարիչների հետ, բոլորը համերաշխ՝ յերկրում ամբողջ կյանքը մեռցնելու վրա էին «աշխատում»։ Նրանք առանց ծածկելու, լրբաբար խոսում էին այն մասին, որ սովահար կանեն բանվոր դասակարգին և կչոգեցնեն իրենց առաջ։ Բանվոր դասակարգն ուրիշ յելք չուներ, նա պետք է խանդարեր վերահաս փլուզումը և ամբողջ տնտեսությունն իր ձեռքն առներ։

Բանվոր դասակարգը պատրաստ չէր այդ բանին։ Նա չէր կարող միանգամից տանել իր ուսերին ընկած հսկայական աշխատանքը։ Դրա հետ միասին նա հարկադրված էր լավագույն ուժերն իր հանրապետության պաշտպանությանը նվիրել։ Բազաքացիական կռվի զարգացման ընթացքում ֆաբրիկանտները, գործարանատերերը և վաճառականները չբավականացան չարամիտ անգործությամբ սաբոտաժով։ Նրանք ձգտում էին իրենց ձեռնարկությունները հակա-հեղափոխության մի-մի ոջախ դարձնել։ Տարերային կերպով սկսված, սաբոտաժի ազդեցության տակ շարունակվող ազգայնացումը աշխատանքի հաղթանակի ապահովության համար **ռազմական անհրաժեշտություն** դարձավ։

Ռազմական անհրաժեշտությունը տնտեսական նպատակահարմարության հետ միշտ չի հարմարվում։ Յերբ ապստամբ մասանները հեռագրական և հեռախոսային սյուները բարիկադներ էին դարձնում, իհարկե դա տնտեսական տեսակետից վնասակար է։ Հաղթած ժողովուրդը վերջն այդ սյուները հարկադրված է լինում վերականգնել։ Պատերազմը ընդհանրապես իր հետ մեծ ավերածություններ է բերում։ Ե՛լ ավելի քայքայիչ է քաղաքացիական պատերազմը, յերբ ամբողջ յերկիրը ռազմական գործո-

ղությունների բեմ է դառնում։ Սակայն ռուսական հեղափոխության պատմությունը համոզեցուցիչ կերպով ցույց է տալիս, որ **արդարությունը հաղթեցին։** Ռուս բանվորները գրեթե ապարդյուն հաղթեցին։ Հին պետական մեքենան հեղափոխության հուժկու հարվածների տակ փշրվեց։ Այնուամենայնիվ նոյեմբերի 7-ի հաղթանակը հետագա պայքարի յելակետը դարձավ։ Տնտեսական նպատակահարմարության տեսակետից պարզ է, որ սոսկական նպատակահարմարության տեսակետից պարզ է, որ վերջի խելացի կլինեք, յեթե բանվոր դասակարգն իր ձեռքն առներ արդյունաբերության և առևտրի միայն այն ճյուղերը, որոնք առաջ էլ դեռ բավականին կենտրոնացած էին և որոնք բանվոր դասակարգն ավելի հեշտ կարող էր կառավարել։ Համայնացումը աստիճանաբար կկատարվեր—հեղափոխության ծախսերն էլ զգալի չափով կկրճատվեին։ Սակայն ազատության թագավորությունը մարդկության համար միայն այն ժամանակ կգա, յերբ դասակարգային պետությունը քայքայված կլինի։ Սոցիալիզմի լիակատար իրականացումը, լիակատար ազատության սկիզբն է լինելու։ Լարված պայքարի պայմաններում, սակայն, բանվոր դասակարգն առաջին հերթին հարկադրված է գոյություն ունեցող պայմաններից յելնել՝ իր ամբողջ միտքը և բոլոր գործողությունները յենթարկելով հիմնական նպատակին—կապիտալին հաղթելու։

Կապիտալիստական հասարակության մեջ ամեն ինչ ծախսելու համար է արտադրվում։ Կապիտալիզմի ամբողջ հասարակությունը ապրանք արտադրողների հասարակություն է դարձնում։ Արտադրության նպատակը վաստակն է։ Ապրանքները վաճառելու տեղը շուկան է։ Վաստակի հետևից ընկած՝ արտադրությունը շուկայի առաջը կարում է։ «Հավասարակշռությունը» ճգնաժամերի ու պատերազմների միջոցով է հաստատվում։ Զափվորության տեղը՝ վաստակելու ագահ ձգտումներն են բռնում։ Կապիտալիզմի բնորոշ գիծը արտադրության անիշխանությունն է։ Սոցիալիզմն անիշխանությանը կհակադրի չափավորված կազմակերպությունը, որը հիմնված է պահանջների ու հնարավորությունների **ճիշտ հաշվեառման** վրա։

Այդ հաշվեառումը Խորհրդային Իշխանությունը հաստատել չկարողացավ։ Նա ժառանգեց, պատերազմի հետևանքով, խիստ վնասված, հետամնաց մի տնտեսություն։ Իրերի բերումով նա հարկադրված յեղավ զբաղվել վոչ թե տնտեսության կազմակերպությամբ, այլ պատերազմի կազմակերպությամբ.—զբաղվել

վոչ թե տնտեսական, այլ ռազմական հաշվեառումով։ Առաջին հերթին նա պետք է ընկճեր թշնամուն. այսինքն զինաթափ աներ նրան և իր իշխանությանը յենթարկեր։ Այդ պայմաններում խոշոր տնտեսական հաջողությունները տեղ չեին կարող ունենալ։ Հաղթական կռվի բացառիկ ուժ էր հարկավոր՝ դիրքերը պահելու, կռվելու և կայուն մնալու համար։

Դա հայտարարեց ռուսական հեղափոխությունը՝ ապացուցելով, վոր նա կենսունակ դասակարգի ծնունդն է։ Ռուսական հեղափոխությունն ստեղծող ուժը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հիշել, վոր համաշխարհային կապիտալը չբավականացավ հակա-հեղափոխությանը զրամով, զենքով և մարդկանցով ոժանդակելով։ Նա ավելի վատ բան արեց։ Նա խորհրդային հանրապետությունը բլոկադայի յենթարկեց, այսինքն զրկեց նայել արտաքին աշխարհի հետ փոխանակություն և հարաբերություն ունենալու հնարավորությունից։ Պայքարի այդ միջոցի նշանակությունն առանձնապես պարզ կլինի մեզ, յեթե մենք հիշենք, վոր կապիտալիստական արտադրությունը տընտեսապես բոլոր պետություններն ի մի յե կապել։

Իուրաքանչյուր պետություն մի ապրանք ծախում և՝ մի ուրիշը առնում։ Իր գոյության ամենածանր շրջանում խորհրդային հանրապետությունն ամբողջ աշխարհից բլոկադա կոչվող խուլ պատով եր բաժանված։

Այդ պայմաններում, իհարկ և, Խորհրդային Հանրապետությունը չեր կարող խիստ մտածված սոցիալիստական քաղաքականություն անցկացնել։ Խորհրդային իշխանության գոյության առաջին շրջանի տնտեսական քաղաքականությունը Լենինը ռազմական կոմունիզմ անվանեց, այսինքն՝ ռազմական ժամանակի պահանջներով պայմանավորված կոմունիզմ։ Ռազմական կոմունիզմը կայանում եր նրանում, վոր պետությունն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ արտադրությունը, ամբողջ բաշխումը՝ ոգտագործելով քայքայված արդյունաբերության մնացորդները, քաղաքացիական կռվում հաղթանակը ապահովելու նպատակով։

Ռուսաստանի լայնատարած տերիտորիայի վրա կատարվող քաղաքացիական կռիվն ամբողջ աշխարհը յերկու հակառակ թշնամական բանակների բաժանեց. կապիտալը կատաղի կերպով արշավում եր ռուսական հեղափոխության վրա, վորն աշխարհի բոլոր բանվորների սրտերում իրեն արձագանք գտավ։ Ռուսա-

կան հեղափոխության միջազգային բնույթն առանձնապես մի տարի հետո գծագրվեց, յերբ Գերմանիան 1918 թ. նոյեմբերի 9-ին գահընկեց արավ իր կայզերին։ Գերմանական հեղափոխությունից հետո այնտեղ բանվորական և զինվորական խորհուրդներ սկսեցին կազմակերպվել։ Այդպիսով, խորհուրդները նոր բովանդակություն ստացան. նրանք պրոլետարական դիկտատուրայի ձեվ դարձան։

Սակայն գերմանական բանվոր դասակարգին դժվար եր իր դիկտատուրան իրագործել, չնայած վոր այդ ժամանակ նա խոշոր մասսայական կազմակերպություններ ուներ։ Այդ հզոր կազմակերպությունները՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և նրա ղեկավարության տակ յեղած արհեստակցական միությունները,—ափաշկարա բռնեցին բուրժուական դեմոկրատիայի պաշտպանության ուղին՝ ընդդեմ խորհուրդների։ Պատերազմի ժամանակ սոցիալ-դեմոկրատները պնդում եյին, թե Ինտերնացիոնալը ռազմական ժամանակին չի հարմարեցրված, վոր ռազմական ժամանակը սոցիալական պայքարի համար նպաստավոր չէ։ Պատերազմի վերջում սոցիալ-դեմոկրատները նոր պատճառ բռնեցին։ Նրանք ասում եյին, թե պատերազմն այնպես և հյուծել մասսաներին, վոր նրանք այլևս կորցրել են ակտիվ պայքարելու ընդունակությունը։ Յեվ ահա կապիտալի դեմ կռվելու գործում իրենից կազմակերպված անզորություն ներկայացնող գերմանական սոցիալ-դեմոկրատիան հանդես յեկավ կապիտալի ուժեղ պաշտպանի և հավատարիմ դաշնակցի դերում։

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ոգնությամբ կապիտալը Գերմանիայում կասեցրեց սոցիալական հեղափոխության առաջին հարձակումը։ Գերմանական բանվորների հեղափոխական պայքարի ղեկավարները՝ Կարլ Լիբկնեխտը (Վիլհելմ Լիբկնեխտի վորդին) և Ռոզա Լյուքսեմբուրգը դավաճանորեն սպանվեցին (1919 թվի հունվարի 15-ին)։ Կապիտալն իր հաղթանակն եր տոնում։ Յեվ սոցիալական հեղափոխության բարիկադների վրա հաղթողները Վերսալում կանգնեցին Անտանտի դատարանի առաջ՝ վորպես իմպերիալիստական պատերազմի մարտադաշտում պարտվածներ։

Շատ հաճախ Վերսալը համեմատում են Բրեստի հետ։ Այդ տեսակ համեմատության համար շատ հիմքեր կան։ Բրեստում գերմանական իմպերալիզմն այն ժամանակ անզեն Ռուսաստանի վրա թալանչիական հաշտություն կապեց։ Վերսալում Անտան-

տան թալանչիական հաշտություն թելադրեց պարտված Գերմանիային։ Բրեստի «հաշտությունը» ստացավ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի օրհնությունը։ Վերսալի հաշտությունը Յերկրորդ Ինտերնացիոնալի կնիքով վավերացրեց նրա նախագահ, թագավորական նախարար, Վանդերվելդեն։ Յերկու դաշնագրերն էլ մերկացրին պատերազմի թալանչիական նպատակները։ Յերկու դաշնագրերն էլ ցույց տվին, որ յերկրորդ Ինտերնացիոնալը իրեց իշխանավորներին պաշտպանող ազգային սոցիալ-հայրենասիրական կուսակցությունները վարագուրող մի շիրմա յե միայն։

Դրա հետ միասին Վերսալը խիստ տարբերվում եր Բրեստից։ Բրեստում Ռուսաստանի կողմից ռուսական անհագթ հեղափոխության պատգամավորությունն եր խոսում։ Բրեստը դատ եր վոչ թե հեղափոխական Ռուսաստանի վրա, այլ ավիններին ուժի վրա հենվող իմպերիալիստական Գերմանիայի վրա։ Գերմանական և ավստրիական գեներալները սարսափով եյին արձանագրում, որ Խորհրդային դելեգացիայի նախագահ ընկ. Տրոցկին նրանց հետ հաղթողի տոնով և խոսում։ Վերսալում հաղթված Գերմանիային չոգեցրին։ Գերմանիայի հաղթանակը բանվորական հեղափոխության վրա՝ դառավ նրա բարոյական պարտությունը։

Վերսալի թալանչիական հաշտությունով իմպերիալիստական պատերազմը ձիվականորեն վերջացված եր։ Հաղթական Անտանտան Գերմանիայից խլեց մի շարք գաղութներ, ամբողջ առևտրական նավատորմիղը, ածխային արդյունաբերության մեկ յերրորդը, յերկաթահանքի մեկ չորրորդը և դրանից բացի, քայքայված յերկրի վրա մեծ պատերազմական տուգանք նշանակվեց «պարտահատուցումների» (բեպարացիաների) անվան տակ, այսինքն քանդված շրջանների վերականգնման համար անհրաժեշտ ծախսերը։ Ավստրո-Հունգարիան հաղթողները մասերի պատառոտեցին՝ նրա փլատակների վրա կազմելով Հունգարիան, հարավ-Սլավիան (նախկին Սերբիան), Չեխո-Սլովակիան։ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հաշվին հաղթողները «կոլորացրին» Ռումանիան և Լեհաստանը։ Իսկ ինչ վերաբերում է Տաճկաստանին, ապա նրան հաղթողներն ուղղակի գաղութ դարձրին բաժանելով նրա հողերը ազդեցության զանազան «շրջանների»։ Պատերազմի վերջը յեղավ հեղափոխական մեծ թափը, որ տարբերայնորեն ընդգրկեց մասսաները։

Գերմանական պրոլետարիատը բաց կռվի դուրս յեկավ իշխանության համար։ 1919 թվին մարտի 21-ին Հունգարիան Խորհրդային հանրապետություն հայտարարեց։ Հունգարական Խորհրդային հանրապետությունը 132 որվա կյանք ունեցավ։ Հաղթողների վրայով գործադուլային հսկայական ալիք և անցնում։ Ամենից համարձակ կռիվը իտալական պրոլետարիատն և մղում։ Հաղթված Գերմանիան Ռուսաստանի գրավված մասերից հեռացնում և իր զորքերը, Խորհրդային իշխանությունը լայնացնում և իր սահմանները։ Պատերազմից նոր կյանքով արթնացած արևելքն և սկսում բարձրանալ։

Այդ պայմաններում ծնվեց Յերրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալը։

Դեռ իմպերիալիստական պատերազմի ժամանակ փորձեր կատարվեցին բանվորական մասսաները միացնել՝ պատերազմի դեմ կազմակերպված պայքար մղելու համար։ Պրոլետարական բանվորական կազմակերպությունները միացնելու առաջին փորձը 1915 թվին և վերաբերվում։ Ցիմերվալդում (Շվեյցարայի մի փոքրիկ քաղաքում) փոքրաթիվ կոնֆերանսը աշխարհի բոլոր պրոլետարներին կոչ և հրատարակում պայքար սկսել իմպերիալիստական պատերազմի դեմ։ Յերկրորդ կոնֆերանսը կայացավ 1916 թվին (Կենտալում)։ Այդ յերկու կոնֆերանսները վերկայում եյին II Ինտերնացիոնալի սոցիալիստական կուսակցությունների դեմ ուռող զժգոհության մասին՝ նրանց իմպերիալիստական պատերազմում ցույց տված ակտիվ մասնակցության համար։ Սակայն ընդհանուր ռազմա-քաղաքական պայմանները չեյին նպաստում բանվոր դասակարգի նոր մարտական կազմակերպության կառուցման գործին։

Պատերազմը մեծ հեղափոխական ցնցումների նախերգանքը դարձավ։ Այդ ցնցումներից ծնվեց խորհուրդների առաջին հանրապետությունը։ Հեղափոխական շարժման հետագա զարգացումն արդարացրեց Ենգելսի մարգարեությունը, թե «հեղափոխության հետևյալ օրն ամբողջ բուրժուական դասակարգը, կալվածատերերի մնացորդները, մանր բուրժուազայի և գյուղական ազգաբնակչության մեծ մասը կվիճան խոսքով ամենից հեղափոխական, ամենից ծայրահեղ բուրժուական կուսակցություններից մեկի շուրջը»։ Այդ ծայրահեղ բուրժուական կուսակցությունը II Ինտերնացիոնալը դարձավ. նրա շուրջը համախմբվեց համաշխարհային ռեակցիան։

Հեղափոխական շարժմանը մահացու վտանգ եր սպասվում։ Կապիտալը, սոցիալ-հայրենասիրական կուսակցությունների ոգնությանը հենվելով՝ յետ եր մղում հեղափոխության հարձակումը՝ կատաղի կերպով արշավելով Խորհրդային հանրապետության վրա։ Կապիտալը ճիշտ եր հասկացել, վոր աշխատանքի կենդանի հանրապետությունը բուրժուազիայի մոտակա խորտակման փաստն և հիշեցնում։ Ապատամբ բանվոր դասակարգի դրությունը ծայր աստիճան ծանր եր։ «Յեվրոպայի ամենամեծ վտանգն ու դժբախտությունն այն և, վոր այնտեղ հեղափոխական կուսակցություն չկա։ Կան դավաճանների կուսակցություններ, չկան հեղափոխական կուսակցություններ»։ Ընկ. Լենինն այդ խոսքերով ձեվակերպեց գերմանական հեղափոխության նախորյակին ստեղծված կացությունը։ Բանվոր դասակարգը պետք և ուղղեր այդ պակասությունը, մանավանդ յերբ նա ցայտուն կերպով հանդես յեկավ գերմանական պրոլետարիատի առաջին հարձակման ճնշումից հետո՝ 1918 թ. վերջին և 1919 թվի սկզբին։

Միջազգային պրոլետարիատի մարտական կազմակերպություն ստեղծելու համար հեղափոխական բանվորական կազմակերպությունների համագումար հրավիրվեց։ Համագումարը կայացավ 1919 թվի մարտին։ Համագումարին ներկա եյին ընդամենը 35 պատգամավոր։ Այդ համագումարի ուշադրությունը նրանումն եր, վոր այնտեղ, ինչպես ընկ. Լենինն եր ասում, «աճող պրոլետարական հեղափոխության շնչառությունն եր զգացվում»։

Համագումարին պարզ եր, վոր սկսված քաղաքացիական կռիվը համաշխարհային պատմության մեջ չտեսնված լարվածությամբ և տարվելու։ Քաղաքացիական կռիվն այն ժամանակ արդեն փաստ եր։ Յեթե 1848 թ. հունիսյան օրերը պատռեցին դեմոկրատական հանրապետության վարագույրը, ապա XX դարու քաղաքացիական կռիվը մերկացրեց բուրժուական հանրապետության բոլոր պաշտպաններին, դրանց հետ նույնպես II Ինտերնացիոնալի սոցիալիստներին։

Առաջին համագումարը նոր կազմակերպության առաջ միանգամայն վորոշ ու պարզ խնդիրներ դրեց։ Յերրորդ Ինտերնացիոնալն առաջին համագումարի զեկուցումով պետք եր բացատրեր գործողության ինտերնացիոնալ դառնալ, վորը նպատակ և դնում իրեն հաստատել պրոլետարիատի դիկտատուրան՝ խորհրդային կարգերի ձևով։ Ամբողջ աշխարհի դիմաց այդ համագումարը բարձր ու վորոշ հայտարարեց, թե «այնտեղ, ուր պրոլետարիատն իշխանությունը կվերցնի իր ձեռքը, նա պետք պրոլետարիատն իշխանությունը կվերցնի իր ձեռքը, նա պետք և դիմի խոշոր կապիտալիստների և կալվածատերերի եքսպրոպրիացիային. սոցիալիզացիայի ճանապարհին կանգնելու համար սկզբից պետք և կոտրել բուրժուազիայի վոգնաշարը, վորպեսզի նա այլևս վոտքի կանգնել չկարողանա»։ Այդ խոսքերի մեջ զգացվում և «կոմունիստական մանիֆեստի» կյանքի մեջ կիրառվող կրակոտ պրոզայի վեհությունը։ Թյուր կարծիքների տեղիք չտալու համար I համագումարը բացատրեց, վոր «սոցիալիզացիան —բաժանում չէ, վոր բանվոր դասակարգը սոցիալիզացիան պետք և կատարի վոչ թե իր համար, այլ ամբողջ պրոլետարիատի համար՝ նրա շահերին համեմատ»։

Կոմունիստական Ինտերնացիոնալը, ինչպես և աշխատանքի առաջին հանրապետությունը, ծնունդ առավ անմիջապես համաշխարհային պատերազմից, վորը ցույց տվեց, թե կապիտալիզմը մարդկությանը դեպի կորուստն և տանում և թե փրկությունը միայն կապիտալիստական հասարակությունը խորտակելու և նրա փլատակների վրա նոր հասարակություն ստեղծելու մեջն և։ Յերրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալը միանգամից անցավ ակտիվ լարված աշխատանքին։ Այդ աշխատանքն արձագանք գտավ վոչ միայն Արևմուտքում, այլ և Արևելքում, այսինքն այն գաղութներում, վորոնք իմպերիալիզմի իշխանության հիմքն են կազմում։ Հեղափոխությունը ծավալվում եր։ Նոր յերկրների նոր մասսաները հեղափոխական պայքարի յին բռնվում։ Կապիտալը ճարպիկ խաղեր եր սարքում, բայց դրա հետ միասին իրեն կորցրել եր։ Նրան վախեցնում եր հատուցման ժամը։ Այդ ժամանակվա ընթացքում Խորհրդային հանրապետությունը հաջող կերպով վոչնչացնում և իր բազմաթիվ թշնամիներին և 1920 թվի սկզբին պատրաստվում եր անտեսական շինարարության անցնել։ Թվում եր, թե Խորհրդային հանրապետության ներսում քաղաքացիական կռիվն աշխատանքի հաղթանակով և վերջանում, իսկ Յեվրոպայում հաղթական հեղափոխական շարժումն և բռնկվում։

Կապիտալն ամբողջ ժամանակ հաշվի յեր առնում Խորհրդային իշխանության նշանակությունը, վորն այն ժամանակ միջազգային հեղափոխության ամուր բերդն եր դարձել։ Խորհրդային իշխանությունը ջախջախելու բոլոր փորձերի անհաջողությունից հետո, կապիտալը Խորհրդային Ռուսաստանի դեմ Լեհաստանին

դուրս բերեց՝ նախապես նրան զինելով մարդկանցով, զրամով և ռազմամթերքով։ Խորհրդային հանրապետության խաղաղ շինարարությունն ընդհատվեց—նա նորից թուրն իր ձեռքն առավ։ Սկսվեց, այսպես կոչված, ռուս-լեհական պատերազմը, որը փաստորեն Անտանտի կոիվն եր աշխատանքի հանրապետության դեմ։

Այդ նոր պատերազմի առաջին ամիսներին կապիտալը հրճվում եր։ Լեհական գնդերը հաղթանակներ եյին տանում։ Սակայն, շուտով այդ հրճվանքը փոխվեց շփոթության, իսկ մի քիչ հետո նույնիսկ ժանգու վախի։ Պրոլետարական հզորության ամենախորն աղբյուրներից սնվող աշխատանքի հանրապետությունը հաջողությամբ կասեցրեց լեհական գնդերի հարվածները և պաշտպանողական դիրքից հարձակման անցավ։

Բոլոր յերկրների բանվորների համակրանքը վայելող կարմիր բանակն սկսեց շարժվել Լեհաստանի մայրաքաղաքի վրա։

Այդ պայմաններում հավաքվեց Կոմունիստական Ինտերնացիոնալի II համագումարը։ Հեղափոխությունը վերելքի գծով դեպի վեր եր բարձրանում։ II Ինտերնացիոնալի սոցիալիստական կուսակցությունների շարքերում ստատիկ շփոթություն և նկատվում։ Բանվորական կազմակերպությունները մասսաներով III Ինտերնացիոնալին եյին միանում, իսկ նա այդ ժամանակ արդեն «համաշխարհային հեղափոխության շտաբի» անունն եր ստացել։ II համագումարում 37 յերկրներ եյին ներկայացված։ Անգլիայի, Գերմանիայի և Իտալիայի ներկայացուցիչների կողքին Հնդկաստանի, Պարսկաստանի և Կորեայի ներկայացուցիչներն եյին նստած։ Ինտերնացիոնալի II համագումարից առաջ տեղի ունեցավ Արևելքի ժողովրդների հաղթական պայքարը, որի պատճառով Գերմանիային հաղթող պետությունները դողդողալ սկսեցին։

Հեղափոխության շարժման բարձր ալիքը Կոմունիստական Ինտերնացիոնալի II համագումարի հայացքները չմթագնեց։ Համագումարը շատ լավ գիտակցում ու հասկանում եր, որ պայքարը դեռ յերկար և տեվելու։ Նա իրավացի կերպով յերկյուղ եր տանում այն բանից, որպեսզի իր շարքերը մուտք չգործեն այն խմբակները, որոնք քայքայեցին II Ինտերնացիոնալի սոցիալիստական կուսակցությունները։ II համագումարի գլխավոր արժանիքը Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ մտնելու վերաբերյալ 21 պայմաններ պարունակող բանաձևի մշակումն եր։ Այսպիսով Կոմունիստական Ինտերնացիոնալը 21 բարձր աստիճաններ կառուցեց բոլոր նրանց համար, որոնք ընդունակ եյին մի վայրկյանում տարվել հեղափոխությամբ՝ նրա վերելքի շրջանում և դավաճանել նրան՝ անկման բոպեին։ Արշավանքը Վարշավայի վրա՝ կարմիր բանակի համար անհաջող վերջացավ։ Յեվրոպայի բանվոր դասակարգը, որ զոգեվորված կերպով իր բանակի հաղթական մարշն եր դիտում, միայն ցավակցական վերաբերմունքով բավականացավ, այն ինչ համաշխարհային կապիտալն իր հարատատ դավակ սպիտակ Լեհաստանը փրկելու համար իր ամբողջ ուժերը լարեց։ Կարմիր բանակը Վարշավայից հետ նահանջեց։ Լեհաստանը Խորհրդային հանրապետության դեմ լարողների ատատնայական մատդրությունը չարդարացավ։ Սպիտակ Լեհաստանը կարմիր բանակից բավականին շատ ուսանելի դասեր ստանալուց հետո չկարողացավ տապալել Խորհրդային իշխանությունը։ Ձիրականացան սակայն և այն հույսերը, որոնք կապված եյին կարմիր բանակի Վարշավայի գրոնների մոտենալու հետ։

Կարմիր Բանակի նահանջը հեղափոխական շարժման հետագա պատմության մեջ մի տեսակ շրջադարձ կետ հանդիսացավ։ Կապիտալը հիմնվելով II Ինտերնացիոնալի ակտիվ ոգնության վրա՝ անընդհատ ուժեղացնում է իր ռազմական, վոստիկանական ապարատները և սկսում է նորից վոտքի կանգնել։ Շփոթությունը հին բուրժուական անձնավստահությամբ և փոխարինվում։ Կապիտալը պաշտպանողական դիրքից հարձակման է անցնում։ Ընկ. Լենինի խոսքերն այն մասին թե՝ Յեվրոպայի համար լավ կազմակերպված ու կուռ կուսակցությունների բացակայությունը դժբախտություն և վտանգ է ներկայացնում,—միանգամայն արդարանում են։

Հեղափոխական ալիքը սկսում է իջնել։ Սակայն հզոր ու անսասան է մնում աշխատանքի առաջին հանրապետությունը։ Ուժեղանում և ամրվում է նոր մասսայական հեղափոխական կազմակերպություններ, որ ծնվում են քաղաքացիական կռվի բարիկադների վրա՝ կապիտալի և նրա սպասավորների դեմ մղած պայքարում։ Ուժեղանում են նայել հեղափոխական արհեստակցական միությունների հեղափոխական ըջիջները, որոնք միացված են Կոմինտերնի II համագումարի նախորյակին կազմակերպված արհեստակցական միությունների Կարմիր Ինտերնացիոնալի շուրջը։

Քաղաքացիական կռիվը վերջանալուց հետո Խորհրդային հանրապետությունը վերաքննության է յենթարկում իր տնտեսական քաղաքականությունը։ Ռազմական ճակատը հետ և մնում՝ տեղ տալու համար տնտեսական ճակատին։ Տնտեսական ճակատը ամենից առաջ կարիք եր զգում լիկվիդացիայի յենթարկել ռազմական կոմունիզմը։

Խորհրդային Ռուսաստանի տնտեսական վերածնության առաջին նախապայմանը քաղաքի բանվորների և գյուղացիության միության ամրացումն եր։ Վորպեսզի գյուղացին վերադառնար լարված աշխատանքին, անհրաժեշտ եր, վոր յուրաքանչյուր գյուղացի զգար ու գիտակցեր, վոր նա իր աշխատանքից կարող է անմիջական անձնական ոգուտ ստանալ։ Ուրիշ խոսքով, գյուղացուն հարկավոր եր, վորպեսզի նա կարողանար ազատ առևտուր անել, իր ավելցուկները վաստակով ծախել, իսկ ստացված դրամով ուրիշ ապրանքներ գնել—ֆաբրիկանեռում ու գործարաններում պատրաստվող ապրանքներ։ Այդպիսով, Խորհրդային իշխանությունը կանգնեց ազատ առևտուր հաստատելու անհրաժեշտության առաջ,

Պահանջվեց նայել արմատական փոփոխություններ մացնել արդյունաբերության մեջ։ Խորհրդային իշխանությունն ամբողջ արդյունաբերությունը իր ձեռքում կենտրոնացրեց ռազմական անհրաժեշտության պատճառով։ Սակայն նա ինքն այդ արդյունաբերությունը կառավարել չկարողացավ։ Արդյունաբերության զարգացման շահն ինկատի ունենալով՝ անհրաժեշտ են նրա վորոշ ճյուղերը կապալով տալ ֆաբրիկանտներին ու ձեռնարկողներին, վորպեսզի նրանք իրենց ռիսկով գործն առաջ տանեն։

Ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցնելով՝ Խորհրդային իշխանությունն իր ձեռքում պահեց յերկաթուղիները, արդյունաբերության կարևորագույն ճյուղերը և արտաքին առևտուրը։ Տնտեսական այդ հզոր ապարատներն իր ձեռքում կենտրոնացնելով՝ Խորհրդային իշխանությունը միանգամայն հանգիստ կարող եր վերաբերվել դեպի մասնավոր կապիտալի համար բացվող հնարավորությունները։ Ճիշտ այնպես, ինչպես իր իշխանության վրա հենվող կապիտալը կարող եր վորոշ զիջումներ անել, այնպես էլ իշխանության գլուխը կանգնած բանվոր դասակարգը կարող է բուրժուազիային ժամանակավոր վորոշ ազատություններ տալ։

Սակայն ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցնելը մեծ դժվարությունների հետ է կապված։ Մերկ ու սոված, քաղաքացիական կռվի ճակատներում պայքարող բանվորը համոզված եր, վոր հին կապիտալիստական հարաբերությունները միանգամ ընդմիշտ վերջացած են։ Ռազմական կոմունիզմը սոցիալիստական հասարակության կազմակերպմանն անցնելու տեղ եյին ընդունում։ Այդ ըմբռնումը արդյունք եր կապիտալիզմի ու նրա ուղեկիցների դեմ կուտակված ատելության։ Բոլորը նոր կյանքի կազմակերպության եյին կարոտ, վոր լարված պայքարի պայմաններում՝ մոտ ապագայի գործ եր թվում։

Կոմունիստական Ինտերնացիոնալի III համագումարը հավաքվեց արդեն այն ժամանակ, յերբ նկատվեց հեղափոխական ալիքի անկումը։ Չնայած վոր այդ ժամանակ հեղափոխության զարգացման դանդաղ ընթացքն արդեն վորոշվել եր, չնայած վոր հեղափոխությունը հարկադրված եր հաղթահարել կապիտալի հսկայական կենսունակությունը, այնուամենայնիվ III համագումարը պարծանքով կարող եր արձանագրել, վոր իր ուժը աճել է։ III Համագումարում 52 կուսակցություն եյին ներկայացված։ Կոմինտերնի բաղկացուցիչ մասերն ուժեղացել եյին, նրանց միջև յեղած կապը նկատելիորեն ամրացել եր։ Իր հարձակումն սկսած կապիտալի դիմաց III համագումարը վստահ ու հպարտ հայտարարեց, վոր հեղափոխությունը գալիս է, վոր նա դարձնվում է նոր միության մասսայական կազմակերպությունների մեջ, վոր այդ միությունը շարունակում է աճել թշնամու հարվածների տակ։ Կոմունիստական Ինտերնացիոնալի համար պարզ եր, վոր կապիտալի հիմնական ուժը—II Ինտերնացիոնալի «սոցիալիստական» կուսակցություններն են։ Այդ կուսակցությունների ուժը կայանում է նրանում, վոր նրանք մի կողմից կապիտալը աշխատավոր մասսաների հետ են շաղկապում, մյուս կողմից բանվորական բանակը բաժան-բաժան են անում։ III Համագումարը մի հերթական խնդիր առաջադրեց՝ ստեղծել բանվոր դասակարգի միասնական ճակատը։ Այդ խնդրի իրագործումը միացյալ գործողություն եր պահանջում II Ինտերնացիոնալի և այն բոլոր կազմակերպությունների հետ, վորոնք տատանվում եյին II և III Ինտերնացիոնալի միջև։

Միասնական ճակատի լոզունգը սկզբում կոմունիստների շարքերում վորոշ շփոթություն առաջացրեց։ Շատերը կարծում

եյին, թե միասնական ճակատի լոզունգն առաջացնելով՝ մենք վորպես թե ներում ենք Յերկրորդ Ինտերնացիոնալին՝ նրա պրոլետարական հեղափոխության դեմ կատարած բոլոր հանցանքների համար։ Սակայն III համագումարը համոզեցուցիչ կերպով բացատրեց, վոր մասսաների շաղկապումը միացյալ պայքար մղելու, սոցիալ-հայրենասերներին մերկացնելու և այդ մասսաները նրանից պոկելու համար լավագույն միջոցն է, մանավանդ վոր այդ մասսաները II Ինտերնացիոնալը բանվորական կազմակերպության տեղ են ընդունում։ Կյանքն արդարացրեց միացյալ ճակատի լոզունգի ճշտությունը։ II Ինտերնացիոնալի ղեկավարները վախեցան այդ լոզունգից, սկսեցին ամեն կերպ ընդդիմադրել նրան։ Բայց այդ լոզունգն արձագանք գտավ ներքին խավերում։ Սոցիալիստական կուսակցությունների ղեկավարներին հակառակ, նա դանդաղ, բայց անշեղ ճանապարհ է բացում իր համար։ II Ինտերնացիոնալի ազդեցությունը նվազում է, III Ինտերնացիոնալի ազդեցությունը ուժեղանում է։ Մի կողմից հարձակվող կապիտալի ձգտումը՝ վոչնչացնել բանվոր դասակարգի նվաճումները, մյուս կողմից այդ նույն կապիտալի անզորությունը՝ վերականգնել տոգոջ տնտեսական կյանքը՝ մասսաներին հրում են դեպի այն միակ կազմակերպությունը, վորը վոչ թե խոսքով, այլ գործով է պաշտպանում բանվոր դասակարգի շահերը։

Կոմունիստական Ինտերնացիոնալի IV համագումարն իր աշխատանքը 1922 թվի նոյեմբերի 7-ի որը սկսեց։ Նոյեմբերի 7-ի որն արդեն միջազգային հեղափոխական տոն է դարձել։ Իր հավաքումը Խորհրդային իշխանության գոյության հինգերորդ տարեդարձին հարմարեցնելով՝ համագումարը դրանով իսկ պարտավորվեց իր հատուկ ուշադրությունը դարձնել ռուսական հեղափոխության տված դասերին։ Համագումարն առանձնապես զբաղվեց Խորհրդային իշխանության տնտեսական շինարարության յերկու շրջանների ուսումնասիրությամբ՝ ռազմական կոմունիզմի և նոր տնտեսական քաղաքականության, վորը քաղաքացիական կռիվը վերջանալուց հետո, սկսվեց գործադրվել։ Այս խնդրի մանրամասն ուսումնասիրությունից հետո համագումարը յեկավ այն յեզրակացության, վոր բանվոր դասակարգը արտադրության գործիքների համայնացման խնդիրը միայն այն ժամանակ կլուծի, յերբ ճիշտ կերպով հաշվի կառնի ռուսական հեղափոխության դասերը և իր հնարավորությունները։

Իշխանությունը գրավելու բոլշևիկյան ռուսական հեղափոխությունն ավելի նպաստավոր պայմաններում եր գտնվում։ Սակայն, նա ավելի ծանր պայմանների մեջ ընկավ, յերբ նոր կյանքի շինարարությանն անցավ։ Շինարարությունը դանդաղում եր և՛ յերկրի ընդհանուր հետամնացության հետևանքով և՛ սոցիալիստական հեղաշրջման գործի նորության պատճառով։ Արևմտյան Յեվրոպայի բանվորներն այլ դրության մեջ են լինելու։ Նրանց համար իշխանությունն իրենց ձեռքը գցելն ավելի դժվար կլինի, վորովհետև այնտեղի բուրժուազիան ավելի լավ է կազմակերպված, վորովհետև նա իմպերիալիստական քաղաքականության հետևանքների վրա յե հենվում։ Սակայն յեվրոպական բանվորների գործը հեղափոխության հետևյալ որը կթեթևանա։ Խորհրդային հանրապետության հաղթանակը հաղթական բանվորների համար հենարան է լինելու, իսկ կապիտալիստների և նրանց սպասավորների համար՝ անավոր նախազգուշացում։

Առանձնապես ուսանելի յե Խորհրդային իշխանության տնտեսական նվաճումների գումարը։ Այդ գումարը տվեց ընկ. Տրոցկին իր զեկուցման մեջ։ Զեկուցանողը հիշեցրեց, վոր 1789 թվի ֆրանսիական մեծ հեղափոխության հինգերորդ տարում Ֆրանսիայում աղքատությունն ուժեղացավ։ Ֆրանսիական հեղափոխության 10-րդ տարում Փարիզը 300-ից մինչև 500 պարկ ալյուր եր ստանում, այն ինչ քաղցած գոյության համար նրան 1500 պարկ եր հարկավոր։ Իսկ Խորհրդային հանրապետությունը, իր հինգերորդ տարնդարձի որը, կարող է ցույց տալ, վոր նա արյունոտ անդունդից դեպի վերն է բարձրանում՝ կատարելագործելով իր տնտեսական ապարատները և բարելավելով յերկրի տնտեսական կյանքը։

4-րդ համագումարին ներկա եյին 65 պատգամավորություն, 62 յերկրից։ Կոմունիստական Ինտերնացիոնալն աճում է՝ ամրանում է հավաքելով իր դրոշակի տակ հեղափոխական ուժերը, շաղկապելով նրանց կոմունիզմի միասնական համաշխարհային կուսակցության մեջ։ Բուրժուական բանակում ուժեղանում է ընդհանուր քայքայումը։ Խորհրդային իշխանության հինգերորդ տարեդարձը վկայում է, վոր կապիտալն անզոր է համաշխարհային հեղափոխության այդ ոջախը քայքայելու։ Խորհրդային դրոշակն ամբողջ աշխարհի վրա բարձրացնելու համար բանվոր դասակարդը դեռ այնքան ուժեղ չէ, բայց նա հաստատ ու ամուր քայլերով գնում է այդ ճանապարհով։

I Ինտերնացիոնալը պրոլետարական միջազգային միությունը ներքեվից եր կառուցում։ Նա հզոր կերպով բանվորներին մղեց դեպի կազմակերպության ճանապարհը։ Սոցիալիստական կուսակցություններն իրենց կազմակերպության պրոցեսում ազգային նյին դառնում։ Իմպերիալիզմին հաջողվեց նրանց իր ազդեցության տակ առնել։

II Ինտերնացիոնալը քանի գնում՝ այնքան ավելի խարուսիկ եր դառնում՝ վորպես միջազգային պրոլետարական շարժման կենտրոն։

III Ինտերնացիոնալը բանվորական ազգային մասսայական կազմակերպությունները միասնական միջազգային կենտրոնացած կուսակցության մեջ ե միացնում։ Առաջին Ինտերնացիոնալը նախատեսավ ապագա բանվորական շարժման զարգացումը, նկատեց դեպի դասակարգային կռվի վերջնական նպատակը՝ դեպի սոցիալիզմը տանող ճանապարհը։ Յերկրորդ Ինտերնացիոնալը գործով հրաժարվեց վերջնական նպատակի համար միջազգային պայքար մղել։ Նա դարձավ ինքնուրույն ազգային-հայրենասիրական ռեֆորմիստական կուսակցությունների միություն։ Յերրորդ Ինտերնացիոնալը հանուն սոցիալիզմի պայքար ե կազմակերպում բանվոր դասակարգի դիկտատուրայի համար։ Նա հենվում ե բանվոր դասակարգի հեղափոխական ամբողջ փորձի վրա, հեղափոխության վոթորկի մեջ ստեղծված խորհուրդների առաջին հաղթական հանրապետության վրա։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅ-ԽՍՀ.ՍՍՌ.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Յերես	վերեվից ցածից	տող	տպված ե	պիտի լինի
7	վեր.	4	«վայրանի»	«վայրենի»
8	ցածից	4	ընբոստացում	ըմբոստացում
9	վեր.	6	այրե-	այրելով
10	»	14	դործիքների	գործիքների
12	վեր.	4	կարիքներից	բարիքներից
15	»	17	հասունանում	հասունանում
15	ցածից	13	բիբիլիա	բիբլիա
17	»	8	աետք ե	պետք ե
18	»	21	ուժերն	ուժեղներն
21	վերից	3-4	Ամերիկիկայի	Ամերիկայի
21	ցածից	4	«Ուտոպիա»	«Ուտոպիա»
26	վերից	2	պրոլետաները	պրոլետարն եր
28	ցածից	15	կազմակերպված եր ընդունում	կազմակերպված ձեվ եր ընդունում
36	վերից	5	յերեված	յերեվաց
38	վերնագիրը	—	արտադրությում	արտադրություն
40	ցածից	2	պատրաստի զգեստեղենի	պատրաստի զգեստեղենը
44	վերից	13	նա հանձնեց	նա հայտնեց
55	ցածից	4	միջամգային	միջազգային
82	վերից	9	գաղուների	գաղութների
88	ցածից	18	ճգնաժամերի	ճգնաժամերի
92	»	17	երեն	իրեն
94	վերից	11	Պլեխանովը	Պլեխանովը

Գրքեր
Եվ-1
Գոր-1

4